

16-17(655-656)

31.05.2022

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտաստություն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

## ՆՈՐ ՎԵՐԱՇՆՈՒՆՂ, ՈՐ ԿԱՍԵՅՆԵԼ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ

Հաղթանակներն ու պարտությունները ժամանակավոր են, կարևորը պայքարելու ունակության պահպանումն է: Եթե անգամ պարտվում ես և, այդուհանդերձ, շարունակում ես պայքարել, դա արդեն դեպի հաղթանակ տանող ճշմարիտ ճանապարհն է: Հայոց հազարամյա պատմությունը լիքն է հարափոփոխ իրադարձություններով, որոնք մերձ հրճվանք ու ցնծություն են պարգևել, մերձ սևով երիզել մեր ազգային երազանքը:

1918-ի մայիսյան հերոսամարտը, որի արդյունքում հայ ժողովուրդը իրավունք մվածեց իր պետականությունը վերականգնելու, ինչքան էլ որ առանձին դրվագներով մոռացվի, միևնույն է, մշտաբուն է ազատության պայքարի գաղափարը: Մի՞թե 1992-1994 թվականներին հենց սարդարապատյան հաղթանակի հպարտությունը չէր Արցախյան գոյամարտի ազատամարտիկներին ոգեշնչողը, որը մեզ ռազմական լուրջ հաջողություններ բերեց: Հետայդու՝ 2020 թվականի աշնանը կրած պարտությունը թուրք-ազերական տանդեմից, ընդամենը զոհության թուլացման հետևանք էր: Այո, մենք դատապարտված ենք «վառուդամանում վառողը չոր պահել», որովհետև շրջապատված ենք դարավոր թշնամիներով: Բայց և պարտավոր ենք արագորեն շտկել մեջքը ցանկացած անհաջողությունից հետո:

Մայիսի 28-ին Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում ծովացած համաժողովրդական խանդավառությունը վկայումն է այն բանի, որ արթուն է արցախցու և, առհասարակ, հայի պայքարի ոգին: Հնչեցին ազգային-ազատագրական շարժման թեմաներով երգեր, որոնք հիրավի՝ լավատեսությամբ լցրին մեր սրտերը: Գերեվարված Շուշիի կարոտած հայացքի ներքո այս ոգեկոչումն ավելի է ամրապնդում հավատը, որ անպայման վերադարձնելու ենք մեր հին բերդաքաղաքն ու մյուս հայաշունչ բնակավայրերը, որոնք առ այսօր գտնվում են թշնամու վերահսկողության տակ: Ձեռքով լինի, գրչով լինի՝ կվերադարձնենք անպայման: Ե՞րբ է գրիչը զենք դառնում. թերևս միայն այն ժամանակ, երբ բանակցային-խաղաղասիրական տեքստերն այլևս ընկալելի չեն հակառակորդի համար, և երբ բանավոր ու գրավոր խոսքը դառնում է մարտակոչ-երգի տող:

Մենք այս փորձությունը մեկ անգամ արդեն հաղթահարել ենք ավելի քան երեք տասնամյակ առաջ: Այն ժամանակ էլ ազերիներն իրենց վերահսկողության տակ էին առել Արցախի տարածքի մի զգալի մասը, ժողովրդովի հայտնվել էինք խուլ պաշարման մեջ, և մեր ծայնը լսելի չէր աշխարհին: Այլ հնար չկար, և մռնչաց Արցախն ու վրեժխնդրության ցատունով լցված՝ թշնամուն հետ շարտեց իր տարածքից շատ հեռու: Պատմությունն իսկապես կրկնվելու հատկություն ունի, որպիսին ունեցավ Սարդարապատը: Ուրեմն, կունենա նաև Շուշին, որովհետև անհնար է կոտրել արցախցու պայքարող ոգին:

...Վերածննդի հրապարակում հնչած երգերի հպարտ ելևէջները բարձր ելան՝ թռչելով դեպի Շուշի ու Դիզակալա, դեպի Օմար ու Քիրա: Դա Արցախի նոր վերածննդի սկիզբն է, որ այլևս կասեցնել հնարավոր չէ ոչ մի ուժով:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

## ԱՇ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐ ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈՒՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ շրջանավարտներ

Այսօր Արցախի հանրակրթական դպրոցներում կինչի վերջին զանգը: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ու անձամբ իմ անունից շնորհավորում են ձեզ կարևորագույն այս տոնի կապակցությամբ:

12 տարի շարունակ դպրոցը ձեզ համար եղել է կրթության, դաստիարակության, կայուն արժեհամակարգի ձևավորման դարբնոց:

Այժմ դպրոցական վերջին զանգի ելևէջների ուղեկցությամբ հրաժեշտ տալով ձեր հարազատ կրթօջախներին՝ մեծ սպասելիքներով ու նվիրական երազանքներով մուտք եք գործում վերելքների ու վայրէջքների դարպասներով, որտեղ հաջողությունները մեծապես կախված կլինեն ձեր կամքի ամրությունից և ոգու տոկունությունից:

Ու հոգևոր այն արժեքները, որոնք ստացել եք վաստակաշատ ուսուցիչներից, պետք է դարձնեք ձեր ճանապարհի ուղեցույցը և ապագայի կերտման հիմնաքարը:

Այսօր մեր հայրենիքի առջև ծառայած են բազմաթիվ մարտահրավերներ ու խնդիրներ, որոնց լուծումն ունի կարևոր ու կենսական նշանակություն: Հայրենիքի հանդեպ ունեցած սիրով ու գիտելիքի զորությամբ ձեր սերունդը պետք է լծվի ազգի և հայրենիքի զորացման ու բարգավաճման գործին:

Իմ երախտագիտության խոսքն են հղում ձեզ, սիրելի՛ ուսուցիչներ: Անգին է ձեր կատարած աշխատանքը սերունդների կրթության և դաստիարակության գործում:

Շարունակեք լինել հայրենասիրության ու ազգային միաբանության սուրբ արժեքների կրողն ու տարածողը:

Բարի՛ երթ, սիրելի՛ շրջանավարտներ:

## ԲԱՐԻ՛ ԵՐԹ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏԵ՛Ր



Ամեն վայրկյան սիրով տրտում  
Ասում ենք մենք՝ մնաք բարով,  
Մեր սաներին ուրախ, խնդուն,  
Ասում ենք մենք՝ մնաք բարով:

Մնաք բարով, ասում ենք մենք  
Ձեզ բոլորիդ հեզ ու բարի,  
Մեր սաներին ասում ենք մենք՝  
Մնաք բարով, գնաք բարով:

Ոսկեզոթա ձեր տենչերին,  
Ձեր իղձերին, երազներին,  
Դպրոցական ձեր հուշերին  
Ասում ենք մենք՝ մնաք բարով:

Ասում ենք մենք՝ մնաք բարով,  
Խենթությանը ձեր մանկական  
Դպրոցական անմեղ սիրուն  
Ասում ենք մենք՝ մնաք բարով:

Գնում եք դուք դեպի նոր կյանք՝  
Գուցե ոչ հեշտ ու ոչ դյուրին,  
Բարի հիշեք մեզ բոլորիս,  
Մնաք բարով, մնաք բարով:

Թող ձեր կուրծքը մի քիչ ցավի,  
Որ սրտներիդ տեղն իմանաք,  
Որ այս կյանքում ինչ էլ լինի,  
Դուք մեզ երբեք չմոռանաք:

Դուք գնում եք, էլ ի՞նչ ասենք,  
Մենք սովոր ենք, կդիմանանք,  
Մի քիչ տազմապ կա, կդիմանանք,  
Դե, նորից՝ մնաք բարով, նորից՝ բարի ճամփա:



Ձեզ բարի ճամփա, բարի ճանապարհ,  
Մեր խենթ ու կրակ աշակերտներ,  
Կյանքը հրաշքեր ունի ձեզ համար,  
Դուք պիտի վաղը նոր աշխարհ կերտեք:

Ձեզ հասկանալը մի քիչ դժվար էր,  
Ախր ձեզ ինչպե՞ս ես հասկանայի,  
Դուք այնքա՛ն պինդ եք ու այնքա՛ն փխրուն,  
Մերթ ոտից գլուխ զարդեր եք հագնում,  
Մերթ այնպես անշուք, պարզ ու անզարդ եք,  
Դրա համար էլ չկարողացա,  
Հասկացեք, էլի, ի՞նչ արած՝ մարդ եմ...  
(Հաղուծի դպրոցի ուսուցիչների ֆլեշմոբից)

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ

ԱՂԱՎՆՈՆ 28-ՐԴ ԱՆԳԱՄ ՃԱՄՓԵՑ ԻՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

Արցախի Հանրապետությունում այս տարի շուրջ 1000 շրջանավարտ հրաժեշտ տվեց հանրակրթական ավագ դպրոցին: Նրանց շարքում էին Քաշաթաղի շրջանում միակ մնացած Աղավնոյի Գարեգին Նժդեհի անվան միջնակարգի 2 շրջանավարտները՝ Նինա Դավթյանը և Անդրեյ Հարությունյանը, դասղեկ՝ Անուշ Առաքելյան: Մայիսի 30-ին Աղավնոյի դպրոցում կայացավ Վերջին զանգի արարողություն, որին ներկա էին ԱՅ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, փոխնախարար Միքայել Համբարձումյանը, Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավար Մուշեղ Ալավերդյանը, տեղակալներ Մարինե Պետոյանը, Գևորգ Մնացականյանը, աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը, ԱՅ ԱԺ պատգամավոր Կարեն Հովհաննիսյանը, Բերձորի քաղաքապետ Նարեկ Ալեքսանյանը, այլ պաշտոնյաներ, հյուրեր, ծնողներ, դպրոցի անձնակազմը՝ տնօրեն Պողոս Աղաբեկյանի գլխավորությամբ, ինչպես նաև համայնքի ղեկավար Անդրանիկ Զավուշյանը: Մինչ Արցախյան վերջին պատերազմը Քաշաթաղի շրջանում գործում էին 54 հանրակրթական դպրոցներ, և ամեն տարի միջնակարգ ավարտում էր 100-ից ավելի շրջանավարտ: Պատերազմից հետո շրջանի ողջ տարածքը մնացել է թշնամու վերահսկողության տակ: Միայն «Կյանքի ճանապարհ»-ին, միջազգայնորեն՝ «Լաչինի մարդասիրական միջանցք»-ում, որը հսկվում է ՌԴ խաղաղապահների կողմից, Բերձորում, Ներքին Սուսում և Աղավնոյում են հայ բնակիչներ մնացել: Վերջին պատերազմի ընթացքում Քաշաթաղի շրջանից նահատակվեցին 70-ից ավելի քաջորդիներ: Անհայտ կորած է համարվում 10 հոգի: Աղավնոյից պատերազմին մասնակցեցին շատերը՝ համայնքի ղեկավարի հետ: Երեք քաջորդի՝ Արմեն Արամի Իսախանյանը, Համլետ

Ռաֆիկի Առաքելյանը և Սասուն Լավրենտի Առաքելյանը, մարտիրոսվեցին, և նրանց նվիրված անկյուն կա դպրոցի միջանցքում՝ մուտքի դիմաց: Մինչ Վերջին զանգի հանդի-

ղը հառնելու է կրկին: ԱՅ ԿԳՄՍ փոխնախարար Ս. Համբարձումյանի ասելով՝ Վերջին զանգը շրջանավարտների համար նոր կյանքի սկիզբ է: Դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Անուշ Առաքելյանն իր մանկավարժական գործունեության ընթացքում առաջին անգամ է ավարտական դասարանի դասղեկ և հուզված էր: Նա բարին մաղթեց իր սաներին և համոզված է՝ նրանք գտնելու են իրենց տեղը կյանքում, մնալու են հայրենիքին արժանի զավակներ, ինչպիսին կան:



սավոր մասի սկսվելը ներկաները ծաղիկներ խոնարհեցին 3 անմահ հերոսների լուսանկարների տակ՝ հարգելով նրանց և բոլոր նահատակ քաջորդիների հիշատակը: Այնուհետև դպրոցի հանդիսությունների ոչ մեծ դահլիճում կայացավ տոնական հանդեսը, որին բացի շրջանավարտներից մասնակցեցին տարբեր դասարանների աշակերտներ, նախադպրոցականներ: Արցախի օրհներգից հետո ելավ լուսության ռուպե: Շրջանավարտներին օրվա առթիվ շնորհավորեցին ու բարի երթ մաղթեցին կրթության ոլորտի ներկայացուցիչները, շրջվարչակազմի ղեկավարը, ծնողները: Շրջվարչակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Վ.Մովսիսյանը նշեց, որ այսօրվա երկու շրջանավարտները փոխարինում են նախկին 100 և ավելի 12-րդ դասարանցիներին, և սա հույս է՝ Քաշաթա-

ղը հառնելու է կրկին: ԱՅ ԿԳՄՍ փոխնախարար Ս. Համբարձումյանի ասելով՝ Վերջին զանգը շրջանավարտների համար նոր կյանքի սկիզբ է: Դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Անուշ Առաքելյանն իր մանկավարժական գործունեության ընթացքում առաջին անգամ է ավարտական դասարանի դասղեկ և հուզված էր: Նա բարին մաղթեց իր սաներին և համոզված է՝ նրանք գտնելու են իրենց տեղը կյանքում, մնալու են հայրենիքին արժանի զավակներ, ինչպիսին կան:

ուսումը հարազատ կրթությամբ, որին արդեն հրաժեշտ է տալիս: Բայց վստահ է՝ շարունակելու է ապրել հայրենի Աղավնոյում: Երկու եղբայրը և քույրը դեռ կսովորեն իրենց դպրոցում: Ինքը որոշել է դառնալ ավտոսպասարկման մասնագետ:

Նինան մանկության տարիներին բնակվել է Քաշաթաղի շրջանի հարավային Ձորափ գյուղում, հաճախել Մարտունաշենի Մ. Պապիկյանի անվան միջնակարգ դպրոց: Պատերազմի պատճառով հայաթափ եղան նաև Ձորափն ու Մարտունաշենը, և Նինայենց ընտանիքն էլ տեղահանվեց: Այժմ բնակվում են Բերձորում: Որոշել է ընդունվել Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարանի հոգեբանության բաժին: Նրա երեք քույրերը դեռ շարունակելու են ուսումն Աղավնոյում:

Շրջանավարտները երախտագիտության խոսք ուղղեցին ուսուցիչներին, որոնք կրթություն ու գիտելիք են տվել իրենց, հայրենասիրություն սերմանել հոգիներում: Գոհունակություն հայտնեցին համայնքի ղեկավարին, որը մեծ ջանքերի շնորհիվ պահեց գյուղը: Հուզմունք ու թախծ, հավատ ու ուրախություն, վստահություն կար շրջանավարտների և նրանց տոհմի մասնակիցների մոտ: 1994 թվականից Աղավնոյի կրթօջախն այս տարի 28-րդ անգամ շրջանավարտներին նոր կյանք ծամփեց: Դպրոցի 18 մանկավարժների շարքում նաև նախկին սաներն են: Համայնքի ղեկավար Անդրանիկ Զավուշյանը տեղեկացրեց, որ ունեն 48 ընտանիք, 185 բնակիչ: Կարևորեց աշխատանքը, որն էլ երկրի պահպանման գլխավոր գրավակն է: Դպրոցի տնօրենը, մաղթելով բարին իր հերթական շրջանավարտներին, հավատում է, որ այս գեղեցիկ ավանդույթն Աղավնոյում լինելու է շարունակական: Հավելեց նաև, որ դպրոցը որևէ խնդիր չունի, բացի տարածքից: Շնորհակալություն հայտնեց հովանավորներին, որ մշտապես օժանդակում են իրենց: Այժմ Գ. Նժդեհի անվան միջնակարգում սովորում է 55 աշակերտ, որից 20-ը գալիս է Բերձորից՝ հատկապես ավտոբուսով: Առաջին դասարանն ավարտեց 7 աշակերտ, որից 2-ը՝ Քնարիկն ու Ավետիսը, համայնքի ղեկավարի զավակներն են:

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ՆՎԻՐԱՎԱՆ ԵՐԱՉԱՆՔՆԵՐԸ ՄՐՏՆԵՐՈՒՄ

Հաղորդի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցը 44-օրյա պատերազմից հետո երկրորդ տարին է՝ շրջանավարտներին մեծ կյանք է ծանապարհում Ստեփանակերտի Ալ. Գրիբոյեդովի անվան հ. 3 դպրոցից, որտեղ կրթական գործունեություն է իրականացնում հարազատ շրջանը թշնամու վերահսկողության տակ մնալուց հետո: Դպրոցի տնօրեն Գայանե Գրիգորյանն ասաց, որ Հաղորդի Մ. Մանվելյանի անվան դպրոցն իր հարկի տակ համախմբել է նաև շրջանի համայնքների կրթօջախների սաներին: «Ստեփանակերտի 3-րդ դպրոցի շենքում մեր աշխատանքը վերսկսել ենք 2021թ. փետրվարի 15-ից: Առաջին օրը դպրոց է հաճախել 82 աշակերտ, իսկ այս ուսումնական տարին ավարտվել է 316 աշակերտով», - տեղեկացրեց տնօրենը՝ նշելով, որ ուրախ է, որ դպրոցը հաղորդիների մեկտեղելու սրբազան օջախ է, և ավելի ուրախ կլինեք, եթե այսօր ունենար ոչ թե 28, այլ 42 շրջանավարտ, եթե պատերազմը չլիներ:

դուրված է ասել՝ անհոգ ժամանակաշրջան են երեխաների համար, բայց այս սերնդի համար դրանք անհոգ համարել չենք կարող, համենայն դեպս, վերջին երկու տարիները», - աս



սաց նա՝ այնուամենայնիվ փառք տալով Աստուծան, որ դպրոցը շարունակել է ուսումնակրթական գործունեությունը, պահպանել է Հաղորդի լավագույն ավանդույթները, նրա քաղցր բարբառը: Նա վստահ է, որ դպրոցի տված գիտելիքներով սաները կխարսխեն իրենց կյանքը և իրենց ներդրումը կունենան հայրենիքի շենացման գործում: Եվ կոչ արեց նրանց անվարան գնալ դեպի իրենց նպատակները:

Շրջանավարտներին ԱՅ ԿԳՄՍ-ի անունից շնորհավորեց և նախարարի ուղերձն ու նվերները փոխանցեց նախարարի խորհրդակցական Արդա Գյանջումյանը:

Հաղորդի ԿՄ բաժնի վարիչ Արթուր Մինասյանը շրջանավարտներին մաղթեց, որ նրանք իրենց նվիրական երազանքների իրականացման ճանապարհին կարողանան հաղթահարել բոլոր դժվարությունները՝ միշտ

ամուր պահելով մեր ամենահզոր զենքը՝ միասնականությունը, որով միայն ի վիճակի է բաբախել մեր ազգի հավաքական սիրտը:

ԱՅ ԿԳՄՍ-ն պետական տեսուչ Ռուբեն Օսիպովը շնորհավորեց շրջանավարտներին որպես մեկը, որի արմատները Հաղորդից են՝ Տոդ գյուղից, և նրա կանչով օտար եզերքից երկու տասնամյակ առաջ վերադարձած նախնայաց երկիր: Այդպես միայն կարեցնեն Արցախը, ասաց նա՝ շարունակելով, որ մեր ժողովուրդը մեծ ողբերգություն է ապրել, բայց պատմությունը ցույց է տվել, որ կարողանում ենք դժվարությունները հաղթահարել արժանապատվորեն՝ պահպանելով մեր բազմադարյան պատմությունը, լեզուն, մշակույթը, ավանդույթները. «Մենք

վարտներն իրենց սկզբնական քայլերն են անում մեր ազգի համար կարևոր ժամանակաշրջանում ու նրանց բարի երթ մաղթեց:

Շրջանավարտների ելույթներում սիրո, հավատարմության խոստովանություն կար առ հայրենիք, ուսուցիչներ. «Մեր սիրելի դասղեկ Մելանյա Բաբայան, ձեր անսահման սիրո և մեծ կամքի շնորհիվ մենք հասկացանք, թե ինչ է միասնությունը, գիտակցեցինք՝ ինչպես պետք է դուստրենք մեզ մեծատառով Մարդ լինելու համար: Մեր առջև բացվում է դժվարություններով լի ճանապարհ: Վստահ ենք, որ այդ դժվարությունները կհաղթահարենք»: Զեր տված խրատներով ու խորհուրդներով:

«Սիրելի՛ ընկեր Գրիգորյան և ուսուցիչներ, անչափ շնորհակալ ենք ձեզ այս ծանր ժամանակաշրջանում մեր կողքին լինելու և մեզ սատարելու համար, շնորհակալ ենք, որ մեզ հնարավորություն ընձեռեցիք շարունակել մեր ուսումնառությունը Հաղորդի միջնակարգ դպրոցում, պահպանել մեր քաղցր բարբառը և դպրոցի գեղեցիկ ավանդույթները: Ձեր շնորհիվ մենք մեզ ընկճված չենք զգացել, քանզի դուք մեզ սովորեցրել եք, որ մենք ապրում ենք մեր հայրենիքում՝ Արցախում, պահպանում մեր դպրոցն ու բարբառը: Շնորհակալություն ենք հայտնում ձեզ ձեր մեծ համբերության և ձեր տված գիտելիքների համար»:

Իսկ ուսուցիչներն իրենց սաներին բարի երթ մաղթեցին ֆլեշմոբով:

Ս. ԳԱՐԻԵԼՅԱՆ



այս բոլոր դժվարությունները կհաղթահարենք ձեռք ձեռքի, ուս ուսի տված և միմյանց սատար կանգնելով»:

Հաղորդի շրջվարչակազմի ղեկավար Արթուր Բաղդասարյանն ընդգծեց, որ շրջանա-

ՃԱՍՓԱՐԱԺԱՆ

ԿԱՐՈՏ ՈՒ ՄՊԱՍՈՒԽ

Թախիծն ու խնդությունը իրար էին խառնվել. չգիտես լա՞ս, թե՞ խնդաս:

Այսպես է լինում սովորաբար, երբ կանգնում ես այն ճամփաբաժանին, որը զատում է քաղցր հուշերի դպրոցական առօրյան ու առջևում քեզ սպասող, բազում անհայտներով այն հեռուն, ուր ոտք ես դնում՝ դեռևս չկան խատենելով նրա գույներն ու քեզ սպասող հաճելի ու տհաճ անակնկալները: Ուրեմն՝ վստահորեն ոտքդ դիր երիտասարդության սեմին, արցախցի՞ շրջանավարտ, դու սխալվելու իրավունք չունես: Բազմադարյան այս հրաշք երկիրը քո հրաշքներին է սպասում, որ նորովի ներկայանա աշխարհին, որ բուժի այն բոլոր խոր վերքերը, որ պատճառել են իրեն: Ուտք առնուր դիր այս սուրբ հողին, որ չար ուժերը սարսափում նրա թափից:

Կատարյալ տոնական տեսք էր ստացել Ասկերանի էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի բակը: Ծնողներին, հարազատներին, մտերիներին, հյուրերին այստեղ էր բերել՝ կիսելու 2021-2022 ուստարվա 24 շրջանավարտների ուրախությունն ու հույզերը, ամփոփելու 12 երկար ու ձիգ տարիների նրանց ձեռքբերումները ու որպես անհատ կերտվելու երկարամյա դաստիարակության ու կրթության վերջնական արդյունքը:

Յնչում է դպրոցի կազմակերպիչ Լուսինե Խաչատրյանի խրոխտ ու հուզախառն խոսքը.

- Սիրելի՛ շրջանավարտներ, ուսուցիչներ, ծնողներ ու հյուրեր, մենք վերապրեցինք Արցախի պատմության մեջ մեր ամենադժվար ու ճակատագրական օրերն ու տարիները: Եթե մինչ այժմ մեր մեջ եղել են երկնտանքի ու վարտանքի պահեր՝ կլինի՞, արդյոք, մեր հայրենիքում ապագա, ապա այսօր վստահաբար դա ապացուցում ենք այստեղ ներկա գտնվելով, քանզի ունենք մի սերունդ, որ լցված է հայրենասիրական ու ապագայի հանդեպ ունեցած իր վեհ գաղափարներով: Այսօր իրոք տոն է այս կրթօջախում, որը հայրենիքին բազում նվիրյալներ է պարգևել Արցախյան թե՛ առաջին, թե՛ հետագա պատերազմների ընթացքում: Աշխարհաքաղաքական բարդ ու խրթին իրողություններով պայմանավորված՝ թվում էր, թե այլևս անհնարին կլինեին ավանդույթ դարձած այս տոնը կազմակերպել ու նպատակին ծառայեցնել: Վերջին գանգի այսօրվա միջոցառումը տարբերվելու է մյուսներից իր հանդիսավորությամբ ու բովանդակային առումով, քանի որ այն անշեղորեն ամնչվում է հայ ժողովրդի համար կենցառ ու մահու պայքարի, մեր լինելության, մեր նոր սերնդի անձնուրաց պայքարի ու հայրենասիրական դրսևորումների հետ: Այս 24 շրջանավարտներն այս կամ այլ կերպ առնչվել են Արցախյան երեք պատերազմներին և պատրաստ են արժանապատվորեն հերթափոխելու դառնալու սահմանին կանգնած ու մարտերում քաջաբար ընկած զինվոր ընկերների: Բոլորս դրանում կասկած չունենք:

Ու ներկայացնում է շրջանավարտներին՝ իրենց ընդգծված հատկանիշներով. Անին խոսքի ու գործի մեջ կշռադատված ու ներդաշնակ է, խելացի ու ողջամիտ, գերազանցիկ աշակերտուհի, որին զարդարում է կանաչի գլխավոր արժանիքը՝ համեստությունը: Իր կամային որակներով առանձնանում է Արթուր Գաբրիելյանը, որի համար բանականությունն ու տրամաբանությունը կյանքում ճիշտ կողմնորոշվելու միակ չափանիշներն են: Ինք-

նավաստի Լիլին արդարամիտ է ու ճշտապահ, իսկ Արթուրի համեստ ու զուսպ պահվածքում թաքնված է ուժեղ կամքի տեր անհատականությունը: Արտեմը դպրոցի սպորտային առաջամարտիկն է, «Արծվիկ» ռազմաճակատի խաղերում՝ հաղթանակի խորհրդանիշ, Դիանան՝ նպատակասլաց, իր համեստ ու պարկեշտ պահվածքով շրջապատի հարգանքը վայելող: Նրբանկատ ու փխրուն սրտով Օքսանան բարեսիրտ է ու բարեհոգի, բայց յուրահատուկ՝ իր կարծրատիպերով:



Կենսասեր ու կենսախիճը Տիգրանը կենաց արժեքների համար պայքարող ու արդարության հասնող մարդու տեսակն է, ազնիվ ու համեստ էլմիրան՝ նպատակին ձգտող ու հասնող և դրանով չբավարարվող: Այդչառ բարի է ու հանդուրժող, համոզված է, որ կայացման համար պարտադիր պայման է լավ ուսուցիչ ունենալու հանգամանքը, Մարիաննան հավատարիմ է իր սկզբունքներին,



վստահ, որ երբեք ուշ չէ վճռական որոշումներ կայացնելու համար: Դասարանի ռոմանտիկ Յանիկի համար կյանքում անհնարին ոչինչ չկա, պարզապես ցանկություն է պետք: Պարզ ու անմիջական Յայլը համարձակ է իր որոշումներում ու պատրաստ է դիմակայել նոր կյանքի բոլոր մարտահրավերներին: Եթե նրա նշակետը հաղթանակն է, պարտությունը երբեք չի կարող կոտրել նրան, նպատակը՝ ճիշտ կողմնորոշվելը. այսպիսին է Նատալին, իսկ Եռնայի համար կյանքում ինքնատիպ ու յուրահատուկ լինելն է կարևոր: Բոլորի համար միշտ հասանելի ու պատրաստակամ Մարսելը կարևորում է նվիրվածությունը, ազնվությունն ու բարությունը, իսկ Տաթևը՝ ակտիվ կենսակերպը, որը պիտի պեղես ու գտնես նրա հմայիչ ու լուռ հայացքում: Ըստ Մարիայի՝ բարությունը կիշխի գեղեցկությամբ, ըստ Տիգրանի՝ կարևոր է լավ մարդ լինելը և շրջապատին զոհացնելը: Անկեղծությունը Անիտայի համար արժեքներից կարևորագույնն է, որ քողարկված է նրա կենսասեր ու ակտիվ էության տակ: Լիանան կարծում է, որ կյանքում ամեն ինչի կարելի է հասնել նպատակասլացության դեպքում, իսկ Ալեքսը առաջնային է համարում հայրենիքին հավատարիմ ծառայելը, քանի որ միայն անվտանգ ու խաղաղ հայրենիքում բոլորի երազանք-

ներն իրականություն կդառնան: Նանարը պատրաստ է սլանալու դեպի երազանք, քանզի ցանկացած հաջողություն սկսվում է հենց դրանից: Լիլիթն էլ ազատատենչ է ու ազատամիտ, վճռական՝ իրականացնելու իր բոլոր նպատակները:

Այնուհետև հնչում է Արցախի խրոխտ հիմնը, հարգանքի տուրք է մատուցվում Արցախյան երեք պատերազմների նահատակների անմար հիշատակին:

Շրջանավարտներին իր օրհանգի խոսքն է հղում Ասկերանի հոգևոր հովիվ տեր քահանա Մկրտչյանը, որը, դիմելով նրանց, ընդգծում է, որ այսօրվա սերնդին ավելի բարդ ու պատասխանատու առաքելություն է սպասում, և նրանք արժանապատվորեն պիտի կատարեն այն: Հայրենիքին նվիրաբերությունը բոլոր ժամանակներում էլ եղել է սուրբ ու արժանապատվության գործոն:

Դպրոցի տնօրեն Մարելա Ավանեսյանը հորդորեց ու պատգամեց, որ ուր էլ գնան, ինչ էլ դառնան, միշտ բարձր պահեն իրենց դպրոցի փառքն ու պատիվը:

Սիրով ու նվիրումով էր շաղախված շրջանավարտների առաջին ուսուցիչ, դասվար Մարինե Մեծույանի հրաժեշտի ու բարեմաղթանքի խոսքը. «Յուրաքանչյուր մարդ իր կյանքում գոնե մեկ անգամ հիացել է աստղագարդ երկնքով: Մեր շրջանավարտներից ամեն մեկը մի փոքրիկ աստղ է, որը մենք վա-

տով է դասողական աշխատանք ծավալել, այնուամենայնիվ, հասցրել է ստեղծել այնպիսի հարաբերություններ, որ այսօր չի ուզում ավարտվեն դրանք: Ծնորհավորելով իր սաներին՝ նա համոզված է մի բանում. բոլորի արժանապատիվ պահվածքն ու նվիրվածությունը դառնալու են այն մեծ երախտագիտությունն ու շնորհակալությունը, որ նրանք տաժելու են իրենց դպրոցի, ուսուցիչների ու հարազատ ընտանիքի հանդեպ:

Այնուհետև հնչում են շրջանավարտների հուզիչ ու թախծախառն խոսքերը՝ ուղղված առաջին ուսուցիչներին, դպրոցի բոլոր ուսուցիչներին ու խոնարհունով ծաղկեփնջեր են փոխանցում նրանց:

Թերևս ամենացավալի պահն այն էր, որ այս շրջանավարտների շարքում էին տեղահանված չորս երեխաներ. Անիտան ու Էռնան թողել են հարազատ Ավետարանոցը, Ալեքսը՝ Մոշխմատը, Յանիկը՝ Ուղտասարը: Նրանց խոսքը ողորկված էր ցավի, տառապանքի ու կարոտի երանգներով: Ծնորհակալ են ոչ միայն իրենց ուսուցիչներին, որոնց շնորհիվ մուտք են գործել գիտության հրաշագեղ գանձարան, այլև Ասկերանի դպրոցի ուսուցիչներին, որոնք մայրական ջերմությամբ ու հոգատարությամբ ընդունեցին իրենց, և իրենք էլ երբեք օտար չզգացին այդ հարազատ կրթօջախում: Միակ ցավն այն է, որ չհասցրին «մնաս բարով» ասել իրենց կրթօջախին, չհասցրին Վերջին գանգի կոճակն այնտեղ սեղմել: Ինչքան էլ նոր կրթօջախը ջերմորեն է հյուրընկալել նրանց, այնուամենայնիվ, իրենց քաղցր հուշերի թելը ձգում է դեպի հարազատ օջախ...

Ասկերանի միջնակարգ դպրոցը հարուստ է լավագույն ավանդույթներով: Այս տոնական օրը իրենց սրտի խոսքն ասացին տասը տարի առաջ դպրոցն ավարտած շրջանավարտները և նվերներ հանձնեցին հարազատ դպրոցին, ու շրջանավարտներին:

Շրջանավարտների համար նվերներ ուներ նաև Սասուն Բարսեղյանը՝ դպրոցի անվանակիր էդմոն Բարսեղյանի եղբայրը, որն ամեն առիթով իր բարեգործություններով գնահատում է դպրոցի վաստակը:

Կրթօջախի շեֆ գործառնասի շարքային զինծառայող Տոնյանը ևս տոնական այս օրը շրջանավարտներին շնորհավորում է ու մաղթում կանաչ ճանապարհ՝ հիշեցնելով, որ նրանց հիմնական առաքելությունը հայրենյաց պաշտպանությունն է:

Ծնողներն էլ, բարձր գնահատելով ուսուցիչների անխնայ վաստակը, իրենց երեխաներին լուսաշող ճանապարհ են ցանկանում ու կոչ անում հասարակության համար արժանապատիվ քաղաքացի դառնալ:

Ամենացնձալի պահը առաջին դասարանիների գեղեցիկ ելույթն էր՝ նվիրված շրջանավարտներին: Ավագ եղբայրներն ու քույրերն էլ նրանց համար անակնկալներ ունեին:

Վերջում շրջանավարտները ներողություն հայցեցին ուսուցիչներից՝ նրանց պատճառած տհաճ պահերի համար:

Միջոցառմանը հրավիրված էին նաև թռչակառու մանկավարժները, որոնք չվրիպեցին շրջանավարտների ուշադրությունից:

Այսպես ևս մեկ սերունդ ոտք դրեց նոր կյանքի շեմին՝ հավատով, որ իրենք են պատասխանատու լինելու Արցախի ապահով կյանքի համար: Եվս մեկ սերունդ ապրեց ցնծության ու երջանկության պահեր, որի համար ոչինչ չէին խնայել կրթօջախի կազմակերպիչներ Լուսինե Խաչատրյանը և Մերի Գաբրիելյանը:

Բարի՛ երթ, խաղաղ երկիրն է լուսաշող ապագա, սիրելի՛ շրջանավարտներ:



100 ՕՐ

ԱՆ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐ ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՐԹՈՒՄԸ



Մայիսի 26-ին ԱՅ ԿԳՄՍ նախարար Անահիտ Գրիգորյանը մասնակցում էր մամուլի ասուլիսի տվեց պաշտոնավարման 100 օրվա կապակցությամբ: Նախարարը ներկայացրեց կրթագիտական, մշակութային, սպորտային քաղաքականության առաջնությունները և կրթության մեջ իրականացված աշխատանքները, ընթացիկ և նախատեսվող ծրագրերը՝ մշելով, որ կրթության բոլոր ոլորտներում՝ նախադպրոցականից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություններ, ծրագրված է իրականացնել որոշակի բարեփոխումներ:

Շրջանառության մեջ է «Նախադպրոցական կրթության մասին» նոր օրենքը: Ըստ նախարարի, այն հնարավորություն կտա լրացնելու ոլորտում առկա բացերը, որոնք կապված են պատերազմի հետ: «Որոշ ուսումնական հաստատություններ տուժել են պատերազմական գործողությունների ընթացքում, և հնարավոր չի եղել վերագործարկել նախադպրոցական հաստատությունները թե՛ շենքային պայմանների, թե՛ սննդի ապահովման առումով: Մենք չենք կարողացել վերագործարկել այդ ուսումնական հաստատություններում նախադպրոցական խմբերն ու մանկապարտեզները, բայց այդ ուղղությամբ աշխատանքներ տարվում են»,- մշել է Ա. Գրիգորյանը:

Նա ընդգծել է, որ նախադպրոցական խմբերը գործում են ոչ լիարժեք, կան մասնակի թերություններ: «Բազմաթիվ աշխատանքներ են տարվել նախադպրոցական համակարգը պատշաճ մակարդակի բերելու ուղղությամբ: Իրականացվում է 9-ժամյա և 6-ժամյա նա-

խադպրոցական կրթություն ուսումնական հաստատություններում: Այն բավարարում է տվյալ ուսումնական տարում մինչև ղեկտեմբերի 31-ը հինգ տարին լրացած երեխաների ապահովման խնդիրը»:

Նմանապես շրջանառվում է «Հանրակրթության մասին» նոր օրենքը: Քանի որ 3-ի հետ Արցախը գտնվում է միևնույն կրթական դաշտում, ՀՀ-ում այս օրենքի ընդունումից հետո այն կտեղադրվի Արցախում իրավիճակին համապատասխան: Փոփոխված տարբերակով նոր օրենքով հնարավոր կլինի որոշ բարեփոխումներ իրականացնել հատկապես համընդհանուր ներառական կրթություն ապահովելու գործում: Ներկա դրությամբ թերացումներ կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին նախադպրոցական և հանրակրթության մեջ լիովին ընդգրկելու առումով մասնագետների և հաստիքների բացակայությամբ պայմանավորված, տեղեկացրեց նախարարը: Նոր օրենքի ընդունման դեպքում հնարավոր կլինի լուծում տալ այդ հարցին:

Ըստ նախարարի, հանրապետության հիմնական դպրոցներում ուսումնական գործընթացն առաջ է գնում պատշաճ մակարդակով: «Բոլոր ոլորտներում էլ թերություններ առկա են, սակայն որտեղ կա աշխատանք, այնտեղ թերություններ լինում են»,- ասել է Ա. Գրիգորյանը:

Նախարարն անդրադարձել է նաև «Երկարօրյա դպրոց» ծրագրին՝ մշելով, որ եթե 2021թ. սեպտեմբերին այն պիլոտային էր, ապա այժմ հանրապետության շրջանների 14 կրթօջախներում գործում է «Երկարօրյա դպրոց»-ը: Ստեփանակերտ քաղաքում ծրագիրը դեռ չի գործում, սակայն առաջիկայում նախատեսվում է ներդնել: Երկարօրյա դպրոցում աշխատում է 97 մանկավարժ, որոնք դասապատրաստող են: «Երկարօրյա դպրոց»-ը հնարավորություն է ընձեռում նաև լուծելու թշնամու տիրապետության տակ անցած տարածքներից տեղահանված ուսուցիչներին աշխատանքով ապահովելու խնդիրը: Այս պահի դրությամբ գրանցված է 113 տարահանված ուսուցիչ, որոնք աշխատանքով ապահովվելու տարբերակ է նաև մշակված ծրագիրը»,- ընդգծել է նա: Միևնույն ժամանակ մշել է, որ հանրապետու-

թյան գյուղերի դպրոցներում ուսուցիչների թափուր տեղեր կան: Համայնքների կրթօջախները կադրերով համալրելը նախարարության առաջնահերթություններից է:

Նախատեսվում է նաև հատուկ ռեսուրս-դպրոցների առկայություն, որում ընդգրկված կլինեն արտակարգ ընդունակություններ ունեցող երեխաները: Մասնավորապես նոր ուսումնական տարում Արցախում կբացվի «Անանիա Շիրակացի» միջազգային գիտակրթական համալիրը՝ համաձայն այս կրթահամալիրի և ԱՀ կառավարության միջև ստորագրված հուշագրի: Նա ընդգծել է, որ հայը գեներտիկորեն համարվում է աշխարհի խելացի ազգերից մեկը և ունի բավականին առողջ գեներոմ, իսկ դա անուշադրության մատնելն աններելի է: Ուստի ծրագիրը կյանքի կոչելը Ա. Գրիգորյանը համարեց կրթական ոլորտում իր գլխավոր նպատակներից մեկը: «Ընթացքի մեջ են տեղանքի ընտրման և տրամադրման հարցերը և օրենսդրական փաթեթների պատրաստումը: Նախատեսվում է սկզբնական փուլում բացել 10-12-րդ դասարաններ: Համալիրն առավելություն կունենա կրթական ծրագրերի առումով, քանի որ մեր հանրակրթական դպրոցներում գործում են նախկին պետական չափորոշիչները, իսկ նոր պետական չափորոշիչներն այստեղ կներդրվեն 2023-2024 ուսումնական տարվանից: Նոր բացվող կրթական համալիրը կորպորատիվ ուսումնական հաստատություն է և ունի իր ծրագրերն ու չափորոշիչները»,- մանրամասնել է նախարարը: Նշվեց, որ «Անանիա Շիրակացի» միջազգային գիտակրթական համալիրի կողմից Արցախում գործող դպրոցների 4-8-րդ դասարանների աշակերտների շրջանում անց է կացվել օլիմպիադա: Այստեղ ևս մեր երեխաներն ունեն որոշակի հաջողություններ:

ՀՀ-ում կայացած առարկայական օլիմպիադաներում մեր երեխաները վաստակել են 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի 18 դիպլոմ և 12 գովասանագիր: Դա մեծ աշխատանքի արդյունք է: Բացի այդ, 371 աշակերտ մասնակցել է ներհանրապետական առարկայական օլիմպիադաների, որտեղ տոկոսային հարաբերությամբ առաջին տեղում Մարտակերտի շրջանն է, ընդգծել է նախարարը:

Ընթացքի մեջ է միջին մասնագիտական,

արհեստագործական ուսումնական հաստատություններում տարբեր մասնագիտություններով նոր բաժինների բացումը:

Մշակութային ասպարեզում ամենակարևոր քաղաքականությունը թշնամու վերահսկողության տակ անցած՝ Արցախի մշակութային ժառանգության պահպանումն ու հանրահռչակումն է: «Մենք կորցրել ենք 114 մշակութային ու կրթական հաստատություններ, մեր թանգարանային ցուցանմուշները, 109 եկեղեցի, 14 վանք, 16 մատուռ, 14 սրբատեղի, մենք գրկվել ենք մեր պատմական Արցախի տարածքի մեծագույն հատվածից, և մեր մշակութային արժեքների պահպանումն ու հանրահռչակումը արդի ամենակարևոր հիմնախնդիրն է: Այս պարագայում, երբ ողջ աշխարհը դիտում է, թե ինչպես են մեր պատմական հուշարձաններից ջնջվում հայկականության հետքերը, թե ինչպես են փորձում ջնջել մեր հիշողությունը, մեզ համարում էթնիկ խումբ՝ հետ գնալով մեկ հարյուրամյակ՝ դեպի 1920-1923 թվականների միջազգային կոնֆերանսների ընդունած որոշումները, ապա մեր մշակութային արժեքների պահպանումն անչափ կարևոր է դառնում, որով մեզ աշխարհը ճանաչում է, և որով մենք կարող ենք ու մնում ենք հայ»,- ասել է նախարարը: Նա ընդգծել է, որ մշակութային ոլորտում կատարվել է ահռելի աշխատանք, իսկ մեկնարկված բոլոր միջոցառումները կշարունակվեն նաև ընթացիկ տարվա ամռանն ու աշնանը:

Սպորտի ոլորտում մեր հաջողություններն ակնառու են: Արցախի մարզիկները մրցանակակիրներ են դառնում ՀՀ և միջազգային մրցահարթակներում:

«Ես նպատակ եմ դրել ԿԳՄՍ ողջ անձնակազմի հետ հասնել մեր գլխավոր նպատակին՝ մեր երեխաները լինեն համակողմանի զարգացած, բոլոր առումներով Արցախի արժանի ասպագա քաղաքացիներ»,- իր խոսքն այսպես է եզրափակել Ա. Գրիգորյանը:

Նա նաև պատասխանել է լրագրողների հարցերին, որոնք վերաբերում էին ուսուցիչների աշխատավարձի բարձրացմանը, բուհերում պահանջարկ ունեցող մասնագիտությունների գծով դիմորդների չիսայտագրմանը և այլնին:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՃԱՆԱՊԱՐԿԻՆ

«Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի նախաձեռնությամբ մայիսի 25-ին Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցում կայացավ «Արցախի կրթական ֆորում-2022»-ը:

«Դասավանդիր, Հայաստան»-ի Արցախի տարածաշրջանային տնօրեն Արմեն Զովհաննիսյանի խոսքով՝ ֆորումի նպատակն է միասնական և մասնակցային աշխատանքով աշակերտներին, ծնողներին, ուսուցիչներին ու տարբեր շահագրգիռ կողմերին ներգրավել վերլուծական գործընթացի մեջ, վեր հանել սովորողների ընդհանուր տեսլականն ու ռազմավարական առաջնահերթությունները, կերտել ճկուն, շրջահայաց, լայն աշխարհընկալումով սերունդ: Ա. Զովհաննիսյանը տեղեկացրեց, որ մինչև ֆորումը կրթական հիմնադրամն իր գործընկեր դպրոցներում (որտեղ կան «Դասավանդիր, Հայաստան» ծրագրով աշխատող ուսուցիչներ) կատարել է որոշակի քննարկում ուսուցիչների, աշակերտների և ծնողների հետ, ֆորումի ընթացքում էլ նույն վարժություններով ուզում են վեր հանել հետևյալ հարցի պատասխանը՝ ի՞նչ կրթություն է հիմնմեզ անհրաժեշտ, որպեսզի հարգենք Արցախի անցյալը, դիմակա-

յնք ներկային և ճկուն ու պատրաստ լինենք ապագային: Այդ ամենը կատարվում է ռազմավարությունների համաժամանակյա դարձնելու նպատակով: «Դասավանդիր, Հայաստան»-ի ռազմավա-



րությունը պետք բխի ԱՅ ԿԳՄՍ-ի ռազմավարությունից: Ֆորումին մասնակցում էին նախարարության պատասխանատուներ, Ստեփանակերտի ու շրջանների կրթության բաժինների ղեկավարներ իրենց աշխատակազմով, դպրոցների տնօրեններ, շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ողջունի խոսքով հանդես եկավ

ԱՅ ԿԳՄՍ նախարար Անահիտ Գրիգորյանը՝ մտախոհաբար արդյունավետ աշխատանք:

Ֆորումի աշխատանքներն իրականացվել են ֆոկուս-խմբային քննարկումներով, որտեղ մասնակից-

ները կրթական տարբեր հարցերի շուրջ ներկայացրել են իրենց տեսակետներն ու առաջարկները: Աշխատանքներն ամփոփելով՝ Ա. Զովհաննիսյանն առանձնացրեց մի շարք կարևոր կետեր: Գիտելիքի կիրառումը գործնականում, որի անհրաժեշտությունը կա. ունենք շատ տեսություններ, բայց խնդիր է, թե գործնականում դրանք ինչպես կիրառել: Այսօր գույքային, տեխնի-

կական, շենքային պայմանների անհրաժեշտությունը չի դիտվում որպես առանցքային: Անշուշտ, կարևոր են, բայց այս պահին ուրիշ խնդիրներ են առաջնային: Ֆորումի մի կարևոր եզրահանգումն այն է, որ կրթությունը և անվտանգությունը փոխկապակցված են, այսինքն՝ անվտանգությունը կախված է մեր այսօրվա կրթությունից: Ֆորումում կարմիր թելի պես անցնում էր այն



գաղափարը, որ մեր խնդիրների լուծման բանալին մեր դպրոցում է, ինչին Ա. Զովհաննիսյանը կոչ արեց ոգևորությամբ մոտենալ, քանի որ սա նշանակում է, որ մենք ի գորու

ենք լուծել մեր խնդիրները: Եվ որպես վերջաբան՝ Գ. Նժդեհի խոսքն է. «Այն ժողովուրդը, որը իրեն պետք եղած ուժն իրենից դուրս է փնտրում, կուրորեն իր պարտությունն ու անկումն է պատրաստում»: Մենք կարող ենք:

Ներկայում մշակման փուլում է Արցախի կրթության ռազմավարությունը: Կրթական ֆորումի արդյունքները պետք է իրենց ազդեցու-

թյուն ունենան ռազմավարության առաջնահերթությունները 1, 3, 5 տարիների կտրվածքով կազմելու համար: Սեփ. լրատվություն

ՄԵՐ ԵՐԵՒԱՆԵՐԸ

ԱՆՍԱՀՄԱՆ ԺՊԻՏՆԵՐ ԴԱՐԳԵՎԵՆՔ ՄԱՆԿԱՆՅՈՒՆՆԵՐԻ ԱՅՍՈՒՐ, ՎԱՂԸ ԵՎ ԱՄԵՆ ՕՐ



Հունիսի 1՝ Երեխաների պաշտպանության միջազգային օր: Տարվա մեջ մեկ անգամ է նշվում այդ գեղեցիկ օրը, բայց այն օջախում, որտեղ թևածուլ է մանկան ժպիտը, ամեն օր տուն է: Երեխաները մեր կյանքի իմաստն են, մեզ ուժ ու եռանդ տվող էակները, սեր ու ջեր-

ա ջ ջ Ե Ր Ո Ւ Մ ար ց ու ն ք չ ի ն ի, թ ող բ ու լ ու մ ան կ ն Ե Ր Ը, ի ն չ պ Ե Ն ար-

մութուն են, մեր ներկան ու ապագան են, և վերջապես՝ մեր հայրենիքի ու հայրենի օջախների հենասյունն են: Թող աշխարհում տիրի խաղաղություն, դա ամենամահաբաժնուն ու հրամայականն է, ու թող ոչ մի մանկան



արի ու բարի, ազնիվ ու անաչառ, և ինչպես վայել է արցախում՝ հպարտ ու

անկոտրում, ազգամեր ու հայրենասեր: Ամենապայծառ լույսը մանկան ժպիտի մեջ է, և որպեսզի մեր կյանքում լույսը շատանա, ամսահման ժպիտներ պարզենք մանկանց: Այսօր, վաղը և ամեն օր...

ԱՅՐՈՒԲԵՆԻ ՏՈՆԸ ԻՎԱՆՅԱՆՈՒՄ

Վաղուց այսպիսի եռուզեռ չէր եղել Իվանյան համայնքի Օ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցում: Հավաքվել էին ծնողներ ու հյուրեր՝ տոնելու առաջին դասարանցիների տոնը: Նրանք արդեն գրաճանաչ են ու հրաժեշտ են տալիս իրենց սիրելի դասագրքին՝ Այբբենարանին: Հուզված են թե՛ փոքրիկները, թե՛ դասվար Ռիտա Հովակիմյանը: Դասվարի համար դա առաջին Այբբենի տոնը չէ, բայց միևնույն է, նա իրեն զգում էր սկսնակի կարգավիճակում:

սաբար նահատակված քաջորդիների հիշատակը: Այնուհետև երեխաներից յուրաքանչյուրը փոքրիկ բանաստեղծություններով անկաշկանդ և ուրախ ներկայացնում է ոսկեդեմիկի

ակերտին վայել կեցվածք: Հանով-հոտով «Դու էլ գիտես» զուգերգը կատարեցին Կարոլինան և Դանիելը: Ներկայացվեց դրվագ «Քաջ Նազար» հեքիաթից: Միջոցառումն ավարտվեց ԱՅԲ-ԲԵՆ-ԳԻՄՈՒՄ՝ վերահաստատելով իրենց գրաճանաչ լինելը: Շատ հուզիչ էր ընկեր Հովակիմյանի խոսքը՝ նվիրված իր սաներին: Ինչպիսի՞ սիրով ու հոգատարությամբ, սրտի թրթռով են հնչում նրա խոսքերը:



- Յուրաքանչյուրը ձեր գրաճանաչությամբ զինվոր եք մարտի դաշտում: Եվ պատգամս ձեզ՝ որ ամբողջ կյանքում ապրեք հայեցի, սիրեք հայրենիքը: Սեպտեմբերի 1-ին 12-րդ դասարանցիները անակնկալ նվեր էին պատրաստել առաջին դասարանցիների համար ու պատգամել բացել այն միմիայն գրաճանաչ դառնալուց հետո: Եվ ահա 12-րդ դասարանի աշակերտուհի Աննա Ծատրյանը բացում ու փաթեթից հանում է գիտելիքների բանալին՝ հանձնելով այն դասվարին: Հասուկ-հասուկ հնչում են բարեմաղթանքներ: Ապա խոսքը տրվում է Ասկերանի շրջանի կրթության բաժնի վարիչ Կ. Մայիլյանին: Նա գովեստով նշում է մեր դպրոցի հաջողություններն ու շնորհավորում օրվա հերոսներին: Ելույթ են ունենում դպրոցի տնօրեն Գ. Դուլյանը և փոխտնօրեն Ռ. Գրիգորյանը, որոնց թողնելները սովորում են այս դասարանում: Այդ իսկ պատճառով չորս զինվորիկների համար կրկնակի պատասխանատու էր առաջին քննությունը՝ «տնօրեն պապիկի» և «փոխտնօրեն տատիկի» ներկայությամբ ելույթ ունենալը, ինչպես կատակով նշեց սիրելի ուսուցչուհին:

Ծնողների անուցից շնորհակալական խոսքով հանդես եկավ ծնողկոմիտեի նախագահ Տաթև Դուլյանը՝ նշելով ընկեր Հովակիմյանի անբասիր ու նվիրված աշխատանքը երեխաների գրաճանաչության գործում, հաջողություններ մաղթեց նրան իր դժվար, պատվաբեր աշխատանքում:

Միջոցառման վերջում իրենց սիրելի դասվարի հետ երեխաները դպրոցի բակում ձեռքերում ամուր պահած փուչիկներով երազանք պահեցին, շրջան կազմեցին և բաց թողեցին փուչիկները դեպի կապույտ երկինք: Նրանք երկար-երկար նայում էին վեր բարձրացող փուչիկներին՝ փորձելով հետևել իր փուչիկին, համոզված, որ իրականանալու է պահած երազանքը: Այն է՝ խաղաղ, կապույտ երկինք, ուրախ մանկություն ազատ ու անկախ, հաղթանակած և ամբողջական Արցախում: Աստված ի կատար ածի, երեխաներ:

**Մարիտա ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ**  
**Ասկերանի շրջանի Իվանյանի միջնակարգ դպրոցի քիմ/կենսաբանության ուսուցչուհի**

Մտորումներ

ԱՆՆՈՎ ՈՒ ԽԱՂԱՂ ԿՊՐԵՆՈՒ ԿԱՐՈՏ ՈՒՆԵՆՔ

Ավարտում ենք ուստարին, բայց ինձ թվում է՝ այս տարվա զգացածս գերհոգ-



նածությունը հավիտենական նստվածք է տվել հոգուս վրա: Եվ այն ինձ երևում է փոշու տեսքով, որից ազատվելու համար փորձում են մոտավոր հաշվել դեռահասների հետ անհաշիվ գրույցներն ինձ, բոլոր դիտողությունները զանազան բացթողումների համար, մորթոյա սերմնի հետ անխուսափելի դարձած հորդորներն ինձ, խորհուրդներս բոլոր... Ես ամեն օր զգում եմ, որ ժամանակը սուղ է, այն չի հերքում, որ թափ տամ գերհոգ-նածությանս փոշին, որ նստվածք է տվել ինձ վրա՝ երկրի ցավերով, մորթոյա դպրոցով, դասերից հեռացած դեռահասներով, դպրոցի հանդեպ նոր վերաբերմունքով...

Ես հի՞ն եմ, ո՞չ, ես նո՞ր եմ, ո՞չ, բայց ո՞վ եմ, որ չի հաշտվում չարիք դարձած անտարբերությանը, երբեմն՝ մեր դեմքին հարվածող տգիտությանը...

Գերհոգնած եմ, հանգստություն են ուզում, անձայն, անթաթթ, մաքուր լույսի կարոտ ունեն, որ բամբասող, մեզ տարանջատող չար ձայները լռեն, ցանկանում են այն երկար զանգը հնչի, բարի խոսքերի տարափով հրաժեշտի խոսքեր հնչեն, խաղաղ կյանքի դռները բացվեն...

Գիշեր ու ցերեկս խառնվել են իրար, անցյալում թողած տարիներս աղմկում են, հեռվից է գալիս հոգնածությունս, որ հանգիստ չի տալիս ինձ:

Բայց գերհոգնած ենք բոլորս, երբ երկիրն է սասանվում, երբ կյանքն է խաթարվում ամենուր... Լռության կարոտ ունենք, անհոգ ու խաղաղ ապրելու կարոտ ունենք բոլորս, երբ գերհոգնած է ամբողջ երկիրը հայոց:

Նատաշա Պողոսյանի ֆեյս-բուքի էջից

44-օրյա պատերազմից հետո շատ դժվար է բարձրացնել մեր ոգին, վերստին լցվել խիճուկ ու ծիծաղով, երգել ու պարել: Երեխաների հետ աշխատանքը ստիպում է մեզ լինել ուժեղ, մի կողմ դնել հույզերն ու ապրել հանուն ապագայի, հանուն նոր հաղթանակի: Այն հաստատ լինելու է: Նորից ունենալու ենք եռատուն, նորից շտկելու ենք մեր մեջքը, քանզի մեծանում է մի նոր գրաճանաչ սերունդ՝ կոփված հայրենասիրությամբ ու հայրենիքին ծառայելու պատրաստակամությամբ: Այս փոքրիկների հայրիկներն անցել են 44-օրյա պատերազմի թոփ ու բոխով և օրինակ են ծառայում իրենց երեխաների համար:



հիացնումք է պատճառում: Անկեղծ սիրով ու շինուշով նրանք հետևում են դասվարի յուրաքանչյուր հրահանգին՝ վստահություն ձեռք բերելով նրա մեղմ հայացքից: Ամուսնու ընդհատվում էր աղջիկների մուրթ պարով, զույգերի գեղեցիկ վալստով ու երգերով, որոնք բեմադրել է «Դասավանդի, Հայաստան» ծրագրի մասնակից, մեր դպրոցի շրջանավարտ Դահրամանյան Սյուզաննան: Ակամա հիշում ես սեպտեմբերի 1-ը, երբ ամոթխած, անվստահ, անուր բռնած ծնողների ձեռքից, կանգնած էին դպրոցի շենին: Ուսումնառության ութ ամսվա ընթացքում իրենց ուսուցչուհու նվիրված աշխատանքի շնորհիվ նրանք ձեռք բերեցին աշ-

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՊՐԵՆՈՒ ԵՎ ԱՊՐԵՑՆԵՆՈՒ ՂԱՍ

Չեղարկված զինվորական հայրերի և մայրերի հարգանքը...

մոր, ամբողջական հայրենիքի երազանք ու հավատամք...

վերջին նամակն ու զինվորական համազգեստը միայն...

որոնց հեղինակներն իրենց մաշկին են զգացել մանկության երազանքի փոշիացման ցավը...



Օրերս մայրաքաղաքի Ա. Սախարովի անվան հ. 8 մ/հ դպրոցում տեղի ունեցավ քաղաքային միջոցառում «Խիզախության ժամն է հասել» խորագրով...

հասցրին տաղանդաշատ սաները: Միջոցառումն սկսվեց հոգեցունց բեմականությամբ՝ մայրը մեծացնում է որդուն, բանակ ճամփում աղոթքով...

Միջոցառման ընթացքում մասնակիցներն իրենց ամունքով, երգ ու պարով, փոքրիկ բեմականացումներով յուրօրինակ դաս տվեցին ներկայիցին՝ հայրենիքում ապրելու և հայրենիքն ապրեցնելու դաս:

Իսկ բզկտված հայրենիքի քարտեզն ամբողջացնելու պատկեր-խորհրդանիշը և մեկ անգամ հաստատեց՝ Արցախն ապրելու է, քանի որ այստեղ օդը հայրենափրոջամբ է պարուրված, և տեղահանված աշակերտների «Կարոտես ըն»-ը և «Արմատներաս կտրեցեն»-ը սոսկ բանաստեղծություն չեն, կոչ են ու հույս... Բանաստեղծություններ,

Միջոցառման համն ու հոտն ապահովող արցախահայ բարբառով հնչող բանաստեղծություններից հետո փոքրիկները կատարեցին «Արցախ, ցավդ տանիմ» երգը, որի ելևէջներն ասես ևս մեկ անգամ ամփոփում էին միջոցառման կարևոր խորհուրդը՝ հայ զինվորի մեծարում, անմահության ուղին բռնած հերոսների հիշատակը անմար պահելու պատգամ, ազգային արժանապատվության վերահաստատում՝ հավերժ Արցախում ապրելով:

Հայրենասեր ուսուցչուհու և նրա սաների անմոռանալի դասն արժանացավ ներկայների բարձր գնահատանքին, իսկ սաների խոսքով՝ այն ավելի ամուր արմատներով իրենց կապեց Արցախին:

Քնար ԳՐԻԳՈՐՅԱՆ Սպեկիանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 միջնակարգ/հոսքային դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

ԱՄՓՈՓԵՆՈՎ ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԵՐԸ

Մայիսը հայ ժողովրդի համար միշտ էլ առանձնահատուկ նշանակություն է ունեցել: Այն եղել է հաղթանակների ամիս, հաղթանակներ, որոնք հայ ժողովրդի լինելության ու հարատևման հարցում կարևոր ու առանձնահատուկ տեղ և դեր են ունեցել: Երկուսն էլ, այսօր մեր ժողովուրդը ապրում է կորցրածի ցավով, բայց պետք է միշտ ըստ արժանվույն գնահատել և կարևորել այն, ինչի շնորհիվ պատմության էջերում արտացոլվել են հերոսությունն ու արիությունը:



Հաղորդի Մ.Մանվելյանի անվան միջնակարգ (հոսքային) դպրոցում մայիսյան տոների կապակցությամբ կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ: Աշակերտներն ակտիվորեն մասնակցեցին մրցույթների: Մայիսի 5-ին դպրոցում կազմակերպվեց շարադրությունների մրցույթ: «Իմ ամունքը Արցախ է», «Քո եռատուրը կգա նորից», «Իմ տառապած, իմ փառապանծ» վերնագրերից ավագ դպրոցի աշակերտները, ընտրելով ամենահոգեհարազատը, շարադրեցին գեղեցիկ մտքեր: 10-րդ դասարանի աշակերտուհի Մանե Մելքունյանը (1-ին տեղ) հետաքրքիր միտք արտահայտեց հայրենասիրության մասին. «Հայրենասիրությունը սկսվում է ընտանիքից, ընտանիքն է ամուր հայրենիքի հիմնաքարը, և որքան ճիշտ ու խնամքով են շարված այդ քարերը, այնքան անհաղթելի է տվյալ երկիրը: Գրում են այս տողերը և ինքս ինձ հարց են տալիս. «Իսկ ինչպիսի՞ն է իմ հայրենիքի հիմքը, ամո՞ւր են շարված հիմնաքարերը»: «Չեղարկված հայացք են ձգում դեպի պատմության էջերը և ակամայից կանգ առնում փառահեղ հաղթանակներով պսակված մայիս ամսի վրա»:

ժառը, որի փչակում նստած՝ ժամերով գրքեր էի կարդում: Ուսուցչուհուս ներշնչանքով սիրում էի պատմական գրքերը՝ «Աշոտ Երկաթ», «Սամվել», «Մխիթար Սպարապետ»... ծանոթանում մեր ժողովրդի հերոսական անցյալին: Դասագրքային ընկալումներս և հայրենասիրական օրինակները խորհելու և ընդօրինակելու դեր խաղացին: Հասկացա, որ հայրենիքն ամփոխարինելի է, նրան ծառայելը՝ պատիվ ու պարտականություն: Հայրենիքի գաղափարն ընդլայնվեց, և ես մի



ին ծանրոցներ ուղարկեցին հայրենիքի սահմանները հսկող զինվորներին: Նույն օրը «Արիության դաս» անցկացվեց 8-11-րդ դասարանների աշակերտների հետ փոխգնդապետ Անդրեասյանի կողմից: Մայիսի 8-ին 11-12-րդ դասարանների 5 աշակերտներ զինվել Ա. Սարգսյանի և ՄԿԱԳՏՏ Ա. Մարտիրոսյանի հետ մասնակցեցին Արցախում առաջին անգամ կազմակերպված QUEST ռազմահայրենասիրական խաղ-մրցույթին: Այն կազմակերպվել էր «Ձորաց ակունք» հասարակական կազմակերպության և ԿԳՄՍՆ-ի համատեղ նախաձեռնությամբ:

Հաղորդի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի 6-7-րդ դասարանների աշակերտներն իրենց հայրենասիրական պարով ավելի մեծ ոգևորություն պարգևեցին «Արցախի պահեստազորի սպաներ» միության կողմից կազմակերպված միջոցառման համդիսատեսին: Ընդ որում, միջոցառմանը հրավիրված էին և՛ աշակերտները, և՛ ուսուցչական կոլեկտիվը: Իսկ դպրոցը ԱՊՍՄ կազմակերպության կողմից արժանացավ պատվոգրի՝ Մայիսյան եռատոնին նվիրված միջոցառմանն ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար:

Մայիսի 9-ին՝ Մեծ Հայրենական հաղթանակի նվիրված «Անմահ գունդ» քայլերթին մասնակցեցին կազմակերպված, անմահ հերոսների նկարներով:

Անի Ավետիսյանը (11-րդ դասարան, 2-րդ տեղ) գրեց. «Քանի դեռ իմ հարազատ Հաղորթում ապրում էի անհոգ ու երջանիկ, իմ մանկական երևակայությամբ հայրենիքը մեր գեղեցիկ տունն էր, այգին, իմ սիրած թթենի



Աշակերտները հաջողություններ ունենան արվեստի բնագավառում: ԱԶ ԿԳՄՍՆ-ի կողմից կազմակերպված «Ապրիլ խաղաղ», «Արցախ իմ, հող իմ» թեմաներով նկարչության մրցույթում 5-րդ դասարանի աշակերտուհի Վիկա Դավթյանի նկարն արժանացավ 1-ին կարգի մրցանակի, իսկ 6-րդ «Բ» դասարանի աշակերտուհի Մարիաննա Մեյրանյանը արժանացավ խրախուսական պատվոգրի: Մենք հայրենասիրությամբ ենք դաստիարակում մեր սաներին, սովորեցնում նաև ուժեղ կամք, հույս, հավատ և հայրենի հող ու ջրի համար պայքարելու պատրաստակամություն: Ինչպես Գարեգին Նժդեհն է ասել՝ «Հայրենասիրությունը պետք է լինի յուրաքանչյուրիս ուղեկիցը»:

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Հաղորդի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ/հոսքային դպրոցի ՄԿԱԳՏՏ

առանձին քնքշանքով սիրեցի ծննդավայրս՝ Հաղորթը, երկրամասս՝ Արցախը և մեծ հայրենիքս՝ Հայաստանը»: Իսկ Անգելինա Հակոբյանը (10-րդ դասարան, 3-րդ տեղ) հայ ժողովրդի ու արցախահայության ազատատենչ ոգին կարևորեց իր աշխատանքում:



Ի ԳՈՐԾ

ԱՐԺԱՆԱՅԱՆ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐԻ

ԱՅ ԿԳՄՍ նախարար Անահիտ Զակոբյանն ընդունել է 44-օրյա պատերազմի նահատակների հիշատակին նվիրված՝ «Արցախն ապրում է» խորագրով անցկացված տասնօրյակի կազմակերպիչներին: Նախարարության պետական տեսուչ, ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ, «Արցախն ապրում է» միջոցառումների համակարգող Ռուբեն Օսիպովը նախ շնորհակալություն հայտնեց Ա. Զակոբյանին՝ ծրագրի իրականացմանն աջակցելու համար: Նրա գնահատմամբ՝ միջոցառումներն անցկացվել են մասնագիտական բարձր մակարդակով, ինչի վկայությունը նաև հասարակության արձագանքն է: Մեր ժողովուրդը հերթական ծանր փորձությունը կրեց 44-օրյա պատերազմի ընթացքում: Մենք կորցրինք հազարավոր երիտասարդների, տարածքների: Դա մոռանալն անհնար է, բայց պետք էր կամքի ուժ դրսևորել և ապրել ու արարել հանուն Արցախի: Քանի դեռ հիշում ենք նահատակներին, նրանք կենդանի են, ու քանի դեռ ապրում ենք մեր հողում, Արցախը կապրի. միջոց-

առումներին կարմիր թելի պես անցնում էր այս գաղափարը, և Ռ. Օսիպովը, ինչպես

«Չի կարելի հաղթել այն ժողովուրդին, որն ուզում է ապրել և մեռնել իր հողում»:



միշտ, մեջբերեց Արցախի մեծ բարեկամ, գրող, հրապարակախոս Կիմ Բակչիի խոսքը.

Նախարարի աշխատասենյակի սեղանին դասավորված առատ ծաղկեփնջերն էլ, ինչպես տեղեկացրեց Ռ. Օսիպովը, Արցախի ռուսական համայնքի ղեկավար Ալեքսանդր Բորոգովի կողմից են՝ ի նշան շնորհակալության միջոցառումները կազմակերպած ռուսացիների, դպրոցների տնօրենների, նախարարության աշխատակիցնե-

րի, որոնք իրենց աշխատանքով մատակարարեցին մեզ հարգանք ու սեր են ներարկում ռուսաց լեզվի և ռուսական մշակույթի նկատմամբ: Նշենք, որ տասնօրյակի շրջանակում միջոցառումներ են անցկացվել Ստեփանակերտի հ. 1, 2, 3, 7 համրակրթական դպրոցներում, Կոմիտասի անվան երաժշտական դպրոցում և Սայաթ-Նովայի անվան քոլեջում, մասնակցել են միջակարգ դպրոցների աշակերտները՝ ռուսացիների ղեկավարությամբ: ԱՅ ԿԳՄՍ նախարարը շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին և շնորհակալագրով պարգևատրեց մշակույթի դպրոցների տնօրեններին ու ռուսաց լեզվի մեթոդիկական կենտրոններին, իսկ հ. 2 դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանին հանձնեց 2021թ. նախագահի հրամանագրով նրան շնորհած «Երախտագիտություն» մեդալը: Ռ. Օսիպովը պարգևատրվեց նախարարության պատվոգրով:

Սեփ. լրատվություն

ԵԿԱՎ ԱՊՐԵԼՈՒ ԱՅՆ ՀՈՂՈՒՄ, ՈՐՆ ԻՍԿԱՊԵՏ ՍՈՒՐԲ Է



«Օտարության մեջ ազատ լինելն այլ գերություն է, իսկ տան մեջ նույնիսկ գերի լինելը՝ այլ ազատություն...» պարոյրսակայան այս բանաձևումին հեռավոր Ուզբեկստանում խարիսխ ձգած արցախցի ընտանիքի այդտեղ ծնված երկրորդ սերունդը հազիվ թե ծանոթ լիներ, բայց արմատների կանչը հաստատ իր դերն է ունեցել, որ երկու տասնամյակ առաջ Սամարղանդ քաղաքից տեղափոխվել է իր նախնիների հայրենիք և իրեն երջանիկ է զգում հենց թեկուզ նրա համար, որ ապրում է իր ժողովրդի հետ, չնայած որ իր ժողովրդի հետ այդ ընթացքում տեսել է երկու պատերազմ, որից վերջինը՝ շատ դժան:

Ռուբեն Օսիպով. շատերի կողմից ճանաչված Ռուբեն Ալեքսանդրովիչը, որի համար տարիները ոչ թե իր ջանքերն են, այլ հեռացող ցավոտ զգացողություն են առաջացնում, այլ ուրախություն, որ մեծացնում են հայրենիքում ապրելու և իր ժողովրդին օգտակար լինելու ժամանակի ցուցիչը: Հպարտությամբ է ասում, որ անցյալ տարի լրացել է Ղարաբաղում ապրելու, իսկ այս տարի՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում իր աշխատելու 20 տարին: «2001-ից ես եկա ապրելու Ղարաբաղում: Դրանով փաստորեն կատարել եմ իմ կտակը: Նա ինձ պատգամել էր, որ ամուսնանամ հայուհու հետ և անպայման՝ արցախցի աղջկա, քանի որ մենք արմատներով արցախցի ենք: Հայրս ուզում էր, որ իմ երեխաները տիրապետեն մեր մայրենի լեզվին՝ հայերենին: Նա ուրախ կլիներ իմանալու, որ ես նրա բաղձալի ցանկությունն եմ կատարել. վերադարձել եմ մեր արմատներին: Ես չեմ ավստում, որ եկել եմ ապրելու այն հողում, որն իսկապես սուրբ է»:

Այնտեղ, որտեղից վերադարձել է Ռ. Օսիպովը, նրանց ընտանիքը մեծ հարգանք էր

վայելում: Հայրը Սամարղանդի մարզի գլխավոր անասնաբույժն էր, շատ բան է արել այդ երկրի անասնաբուծության զարգացման գործում, նրա նկարը կախված էր Մոսկվայի ԺՏՆՑ-ում: Մինչև Արցախ գալը Ռ. Օսիպովը 17 տարի աշխատել է տեղի ինտերնացիոնալ դպրոցում, եղել է պիոներ-ջուկատավար, տարրական դասարանների գծով ուսմասվար, ապա՝ հոգևոր-լուսավորչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, մանկավարժական անհրաժեշտ կոփվածություն ստացել: Ընդհանրապես, նա երախտագետ անձնավորություն է, հիշում է բոլոր նրանց, ումից կարևոր բաներ է սովորել: Մասնավորապես հիշում է այդ դպրոցի տնօրենին, որը ժամանակին դիվանագետ է եղել Աֆղանստանում, և ինչպես Ռ. Օսիպովն է ասում՝ դիվանագիտություն է սովորեցրել իրեն:

Արցախում էլ բանիմաց գործընկերներով է շրջապատվել: Նախարարությունում պաշտոնավարելուն զուգահեռ դասավանդում է Ստեփանակերտի տարբեր դպրոցներում: Կրթության պետական տեսուչ է և ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ: Ռ. Օսիպովը 2003 թվականից սկսել է կազմակերպել մեթոդական կոնֆերանսներ Արցախի դպրոցների ռուսաց լեզվի ուսուցիչների համար, որը հետո ծավալվելով՝ կրեց «Ռուսական խոսքի օրեր Արցախում» անվանումը:

Գործի բերումով նա շրջապայեց Արցախի շրջաններում, եղավ բոլոր գյուղերում, ինչը նպաստեց, որ ավելի մոտիկից ճանաչի հայրենիքը, նրա մարդկանց: Օսիպովի կյանքում կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի մեծ բարեկամ, գրող, հրապարակախոս Կիմ Բակչիին ուղեկցելն Արցախում. «Ես շատ բան տեսա Ղարաբաղում նրա շնորհիվ՝ եկեղեցիներ, վանքեր բերդեր... Ինձ՝ որպես Արցախում նոր մարդու համար անչափ հետաքրքիր էր այդ ամենը: Ես տեսել եմ շատ արժեքներ Արցախում: Իսկ արժեքներ են նրա ժողովուրդը, պատմությունը, մշակույթը, ավանդույթները: Եվ շատ բան եմ սովորել: Փաստորեն ես մոտիկից ծանոթացա մեր ժողովրդի պատմությանը»: Դրանից հետո Ռ. Օսիպովը միշտ հրավիրում էր Կ. Բակչիին «Ռուսական խոսքի օրերին»: Հիշում է, թե ինչ մեծ հիացմունքով էր ռուս մտավորականն արտահայտվում այդ միջոցառումների մասին: Նա միշտ ասում էր,


որ Արցախում կրթության նախարարությունը, դպրոցների տնօրենները, ուսուցիչները, երեսնամեթը ռուսաց լեզվի իսկական պահպաններ են: «Այն մարդը, ով սիրում է ուրիշ ժողովրդի, դրանով իսկ պաշտպանում է իր երկրի պատիվը»,- ասում էր նա: Այսօր էլ Ռ. Օսիպովը տեղին մեջբերումներ է անում Կիմ Բակչիից, երբ որևէ միջոցառում է կազմակերպում: Նշենք, որ Կ. Բակչին 7 գիրք է գրել Հայաստանի ու հայերի մասին, վերջինում՝ նաև Ռ. Օսիպովի մասին: Նա կտակել էր, որ մահից հետո իր աճյունի մոխիրը կեսը շաղ տան Փառնիի, իսկ կեսը՝ Շուշիի վրա:

Ռ. Օսիպովի գլխավորությամբ անցկացվող «Ռուսական խոսքի օրերը» մերկապա-

ամյակին միջոցառումներին մեծ տեղ էր տրված ռուս մտավորականներին, ընդհանրապես հայ և ռուս գրողների կապերին, Հովի. Թումանյանի ծննդյան 150-ամյակին նույնպես անդրադարձ է եղել: Իսկ այս տարվա միջոցառումները, որոնք նվիրված էին 44-օրյա պատերազմում զոհվածների հիշատակին, անցկացվեցին «Արցախն ապրում է» խորագրով: Դրանք նպատակ են հետապնդում ոչ միայն ռուսաց լեզվի զարգացմանն ու տարածմանը նպաստելը, այլև որ նոր սերունդը սովորի Արցախը ներկայացնել աշխարհին: Ռ. Օսիպովի ղեկավարությամբ կազմակերպված բոլոր միջոցառումներում այն գաղափարն է շեշտվում, որ յուրաքանչյուրն իր մայրենի լեզուն պետք է առաջնահերթ իմանա, բայց դրա հետ մեկտեղ տիրապետի օտար լեզուների: Իսկ ռուսերենը օտար լեզուների շարքում չէ, արցախցիների համար այն մայրենիից հետո երկրորդ կարևոր լեզուն է: Ինքը՝ Ռ. Օսիպովը, հաճույքով է ընթերցում հայ գրողներին, ճիշտ է, թարգմանաբար, իսկ իր սիրած գրողի՝ Հովի. Շիրազի այս խոսքը՝ «Մայր և հայրենիք» միասնական են ինձ համար, չսիրել ձեզ չեմ կարող», նրա կյանքի կարգախոսն է:

Ռ. Օսիպովը հպարտությամբ է նշում, որ այդ բոլոր տարիներին հավաքել է ռուսաց լեզվի ուսուցիչների ոսկե թիմ: Նրանք և՛ մայրաքաղաքից են, և՛ շրջաններից: Անկրկնելի էին Հայրուբում, Շուշիում, Բերձորում կազմակերպված միջոցառումները: Դրանց ներկա ռուս բանաստեղծ Վ. Կոնոպլովը հիացած ասել էր, որ Արցախի երեխաների ռուսերենն իր մաքրությամբ գերազանցում է անգամ Ռուսաստանի դպրոցների սովորողների լեզվին: Իսկ Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի դոցենտ Իրինա Կրուզովան այդպես էլ չի հավատացել, որ իր այցելած մի շարք դպրոցներ ռուսական չեն: Ռուսաստանից ժամանած հյուրերն ասում են, որ պետք է գալ Ղարաբաղ, տեսնել, շփվել մարդկանց հետ՝ հասկանալու, թե ինչ է իրականում ներկայացնում Ղարաբաղը, ինչ կա այստեղ, ինչպիսի մարդիկ են և ինչի են ձգտում. «Այսօր էլ տեսնում ենք՝ ինչ հարգանքով են ռուս խաղաղապահները վերաբերվում մեզ հետ, նրանք միշտ ասում են, որ իրենց այստեղ օտար չեն զգում, քանի որ իրենց հասկանում, և իրենք էլ մեզ են հասկանում ռուսերենով շփվելով»:

Ռուբեն Օսիպովի աշխատանքը գնահատվել է ԱՅ կառավարության կողմից. նա պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:



Наш верный друг в путешествиях по Арцаху Рубен Осипов.

րանոց տուրք չեն ռուսաց լեզվին: Դրանք միջոցառումներ են մեր հայրենիքի նկատմամբ սիրո, նրա արժեքների, հանուն նրա պաշտպանության զոհված տղաների, հայ և ռուս ժողովուրդների հոգևոր-մշակութային բարեկամական կապերի մասին: Ասումընթողների մրցույթին թարգմանություն է լինում. սկզբում բանաստեղծությունն արտասանում են ռուսերեն, ապա՝ հայերեն: Երաժշտական դադարներին կատարվում են հայկական և ռուսական երգեր ու պարեր: Նայած այդ տարվա գլխավոր իրադարձությանը՝ «Ռուսական խոսքի օրերն» անցկացվում են համապատասխան խորագրով: Արցախյան շարժման 30-

Սվերլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԴԻՄԱՆԿԱՐ՝ ԲԱԶՄԱԹԻՎ ՇՏՐԻՆՆԵՐՈՎ

ՃՇՄԱՐԻՑ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԸ, ԲԱՂԱՔԱՑԻՆ, ՎԱՅՐԵՆԱՍԵՐԸ



Մասնագիտությամբ՝ մանկավարժ, կենսադիրքով՝ հանրային գործիչ, հայրենիքի հանդեպ պարտքով՝ վետերան-ազատամարտիկ, ժողովրդագրական պարտականությամբ՝ 4 որդու հայր, առայժմ՝ 7 թոռան պապ, տնտեսական գործունեությամբ՝ այգեպան, թռչնաբույծ, հասարակական դիրքով՝ արտահաստիքային թղթակից և ամենակարևորը՝ ժողովրդական թամաղա: Համառոտ թերևս այսպիսի բնութագրական կարելի է տալ մի այրի, որի 70-ամյա կենսագրության քարտեզն ուղղաճիգ պատկեր ունի. ծննդյան վայրը՝ Մարտունու շրջանի Եմիշճան գյուղ, բնակատեղի վայրը՝ Եմիշճան, բնակության վայրը՝ միշտ Եմիշճան: Այս անկողնակալ կյանքը մի բանի մասին է խոսում միայն. այն կրող ամեն իսկական արցախցի է՝ արմատները խոր խրած հայրենի հողում, որ ոչ մի քանուց չեն պոկվում:

րել նոր ձևավորվող տանկային զնդում (հրամանատար՝ Վ. Բալայան): Ի դեպ, նրանք Ստեփանակերտում կայացած առաջին և երկրորդ գործառնականների մասնակիցներ են:

2016թ. մարտական գործողություններին մասնակցել են նրա երեք որդիները, որոնցից երրորդը՝ Գրիշան, պատերազմի երկրորդ օրը դպրոցական մատյանը դրել է դարակը և անվարան նետվել մարտադաշտ: 2020թ. պատերազմին երեք եղբայրներին միացավ նաև կրտսերը՝ Նորայրը, որը վիրավորվել ու երևանում ապաքինվելուց հետո նորից շարք է վերադարձել: Այժմ պայմանագրային զինծառայողներ են ավագ և կրտսեր որդիները: Իսկ Գրիշան աշխատում է ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների մախարաթությունում, Մխիթարը 23 տարի ռազմական ոստիկանությունում ծառայելուց հետո աշխատանքի է անցել գյուղատնտեսությունում: «Ես և իմ ընտանիքը միասին շուրջ 50 տարի զինվորական կյանք ենք տարել», - հպարտությամբ ասում է Լևոն Առաքելյանը: 47-ամյա որդուն, որն ինչպես ասացինք, շարունակում է պայմանագրային զինծառայությունը (կապավոր է), հորդորում է գործը չանել միայն կապի գծով, նաև շրջել դիրքում, ստուգել, որ տեղ ժամկետային զինվորներն են. «Ձախել տղաներ են, կարող է հանկարծ քնած լինեն, մի բան այն չլինի: Դիրքում միայն զգոնությունն է ձեզ պահում, ուրիշ ոչ մի բան: Դիրքում բոլորը հավասար են, միայն համատեղ պաշտպանությունը կարող է ձեր կյանքի պահպանության երաշխիքը լինել»:

Լևոն Առաքելյանը, որն Արցախի ազատամարտիկների միության Եմիշճանի տեղամասի նախագահն է, հպարտությամբ է շեշտում, որ Արցախյան բոլոր պատերազմներում իրենց գյուղից ոչ մի երիտասարդ չի խուսափել ծառայությունից:

Չենք կարող չնշել նաև ընտանիքի մորը՝ տիկին Նադյային, որը 2020-ի պատերազմից մեկուկես ամիս անց վաղաժամ հեռացավ կյանքից՝ պատերազմի դաշտում իր չորս որդիների կյանքին սպառնացող վտանգի, հագարավոր տղաների նահատակվելու և հայրենիքի մեծ մասի կորստյան տառապանքից: Նա չորս ու կես տասնամյակ գյուղի բուժկետի վարիչն է եղել, ասել է թե՛ այդ բոլոր տարիներին գյուղի առաջին օգնության հասնողը:

Լևոն Առաքելյանը 41 տարի մանկավարժ է աշխատել, որից 16-ը՝ դպրոցի տնօրեն:

Հետ գնալով ավելի քան 50 տարի՝ պատմում է, թե ինչպես է հայտնվել մանկավարժական ինստիտուտի մեթոդիկայի բաժնում, երբ թղթերը հանձնել էր բանասիրական. «Ես մեր ինստիտուտի առաջին ընդունվողներից եմ եղել: Քննությունները հանձնել ենք Բաքվում: Այդ տարի քննություն պետք է հանձնենք նաև օտար լեզվից, որը չէինք անցնել դպրոցում: Շրջաններից եկած շատ դիմորդներ այդ պատճառով պետք է դուրս մնային: Մյուս քննությունները հաջողությամբ հանձնելով՝ երջանակալիշատակ պրոֆեսոր Գուրգեն Անտոնյանի միջամտությամբ ռեկտորատը թույլտվություն տվեց մեթոդիկայի բաժնին, որտեղ օտարի փոխարեն մաթեմատիկայի քննություն էր: Ու Ստեփանակերտի ինստիտուտում այդ տարի մեթոդիկայի բաժնում ամենամեծ թվով ուսանողներ էին նստած, 30-ը՝ ընդունվածներ, 15-ը՝ տեղափոխվածներ»:

1975 թվականի սեպտեմբերից մտել է հայրենի Եմիշճանի դպրոց: Դասավանդել է պատմություն, աշխարհագրություն: 1984-ին ճանաչվել է դպրոցի տնօրեն, այդ պաշտոնում աշխատել մինչև 1999-ի վերջը: Այս կապակցությամբ էլ հիշելու բան կա: Դա այն ժամանակ էր, երբ դպրոցները կառավարության որոշմամբ անցել էին համայնքների ենթակայության տակ: Տնօրենի ընտրություն էին կազմակերպել, որտեղ ծայրի իրավունք ունեին նաև որոշակի քանակությամբ համայնքի անդամներ: Նրանք էլ հենց դեր խաղացին նրա պաշտոնագրվմանը, քանի որ Լ. Առաքելյանը միշտ քննադատում էր կոլտնտեսությունում տիրող սխալները, հատկապես՝ սեփականաշնորհման գործընթացից հետո և այդ մասին հանդես էր գալիս նաև թերթերում: Տնօրենի պաշտոնից գրկվելը ամենևին պատճառ չդարձավ, որ նա չսիրի դպրոցը, երեխաներին կամ լքի գյուղը, ինչպես կանեին որոշ պաշտոնյաներ: Լիարյուն մտավորական էր, գտարյուն մանկավարժ ու շարունակեց իր գործը՝ այս անգամ սկսելով սկզբից՝ տարրականից և 16 տարի էլ դասավար աշխատեց մինչև թռակի անցնելը:

Մանկավարժական աշխատանքին զուգահեռ ակտիվ հասարակական աշխատանք է տարել: Եղել է «Գիտելիք» ընկերության նախագահ, պրոպագանդիստ: Արցախյան պատերազմի ժամանակ իր հիմնական ծառայությանը զուգահեռ «զանապախոս»-ի դեր է կատարել գումարտակի հրամանատարի հորդորով, որը տեսել է նրա խոսքի ուժը: 1993-ին դիրքից զորամաս վերադարձած զինվորները հերթի էին կանգնում նրա գրույցները լսելու համար: Ավելին, զինվորներին սովորեցրել էր գիրք կարդալ: Գնացել էր Մարտունու գրադարանից միանգամից 120 գիրք վերցրել՝ կեսը հայրենասիրական, կեսը՝ սիրո մասին: Երբ գրադարանի տնօրեն էլ միայն Մուսայելյանը հարցրել էր, թե ինչ է ամելու այդքանը, ասել էր, որ տանում է գրանոց: Մի քանի օր անց գրանոց մտնողը յուրաքանչյուր մահակալի կողքին կտեսներ գիրք ընթերցող զինվորի: Ասում է՝ տղաները շատ գոհ են մնացել: Վերջում տարել է բոլոր գրքերը գրադարանին հանձնել՝ առանց մի էջ պակասելու: Իսկ Մայիսի 9-ի առթիվ գործնա է հրավիրել Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, որ տեսնեն՝ էստաֆետը հուսալի ձեռքերում է, նրանց գործը շարունակում են երիտասարդները, հարթանակները շարունակվում են: Վետերաններն էլ շատ ուրախացել էին: Անձնակազմը ամեն ինչի պատրաստ պիտի լինի ֆիզիկապես և գաղափարապես, ասում է նա: Ահա այդպես Լևոն Առաքելյանը ինչ գործ որ ձեռնարկում է, անում է սրտանց, ստեղծագործաբար:

Եմիշճանում և հարևան գյուղերում, ինչու չէ, նաև Մարտունու շրջանում նախագահի, պատգամավորների նախընտրական կամ այլ հանդիպում, որտեղ ներկայացնողը, հարց բարձրացնողը Լ. Առաքելյանը չլիներ: Բառի ամենաիսկական իմաստով հրապարակախոս է. այնտեղ, որտեղ ժողովուրդ կա հավաքված, նա ասելիք ունի: Եվ կոչ է անում անտարբեր չլինել, յուրաքանչյուրը չմտածի, թե իրենից կախված բան չկա: Եվ միշտ ասում է. «Հիշեք, մարտադաշտում մեկն էլ զինվոր է: Եվ այդ զինվորը դու ես»: Ասում ու գրում է, որ ուսուցիչը, դպրոցի տնօրենը կենտրոնական դեմք են գյուղում. առավել ևս՝ փոքր գյուղում: Եթե նրանք իրենց բարձրության վրա են, հասարակական կյանքը մի քիչ ուրիշ կերպ է լինում, չէ՞ որ ասում ենք՝ միջավայրն էլ իր դաստիարակչական դերն ունի:

Իր գաղափարները նա հանրությանն է հասցնում նաև մամուլի միջոցով: Նրա համոզմամբ թերթը միայն տեղեկատվության աղբյուր չէ, այլև գաղափարախոսություն ձևավորող: Հարկ չկա հիշեցնելու, թե ինչ հարցեր է նա արժարծում: «Լուսարար»-ի ընթերցողները դա լավ գիտեն: «Լուսարար»-ի գյուղատնտեսից ի վեր՝ արդեն 22 տարի, նա թերթի հավատարիմ բարեկամն է, ընթերցողը, թղթակիցը, ինչի համար մենք մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում: Նա բարձրացնում է հրատապ հարցեր՝ լինի մանկավարժական, տնտեսական, սոցիալական, թե քաղաքական: Եմիշճանի մտավորական, որն անտարբեր չի անցնում ոչ մի երևույթի կողքով, ինչպես ասում են՝ ձեռքը միշտ կյանքի գարկերակին է:

Ցավով է նշում, որ հիմա ժողովրդի հետ կենդանի շփումը քիչ է, մարդկանց գրույցները հեռախոսն է, քնում-զարթում են հեռախոսի հետ: Սոցցանեթում ոչ լավ են կարողանում ջղտել, ոչ՝ վատը: Մշակված գաղափարախոսություն չկա: Խեղճ ժողովուրդը շվարած է. գաղափարական ինքնահոսի է մատնված. ում ուզենա՞ կհավատա, ում ուզենա՞ կլսի, ում հետևի ուզենա՞ կգնա:

Իսկ ամենից շատ գրքի քարոզիչ է: Զարմանում է, երբ տեսնում է, որ մանավանդ մտավորական կոչվածը գիրք չի ընթերցում: «Այդ դեպքում քո գեղագիտական, բարոյական դաստիարակությունը ինչպե՞ս ես ստանում, քո ճաշակի, կամքի ձևավորումը ինչպե՞ս է կատարվում», - հարցնում է նմանին: Նրա համար լավագույն մեթոդ գիրքն է: Առաջին կամ Վերջին գանգի, ծննդյան օրվա առթիվ նրա նվիրածը գիրք է:

Հարուստ արխիվ ունի: Պահում է իր բոլոր հոգվածները տպագրած թերթերը, գրառում է կարդացած հետաքրքիր մտքերը, այս տարիքում էլ նա ինքնակրթությամբ է զբաղվում և ունեցած գիտելիքները փոխանցում հանրությանը՝ լինի որպես թամաղա, հողվածագիր, թե հրապարակավ ելույթ ունեցող: Իր ասելով՝ ավելի շատ հասարակական գործունեություն է տարել, քան հաստիքային աշխատանք: Գյուղի պատվավոր գրագիրն է:

Ում ինչ դիմում է պետք գրել, Լևոն Առաքելյանին է խնդրում: Նա էլ սիրով կատարում է նրանց խնդրանքը և ուրախանում, երբ կարողանում է դրանով նրանց օգտին հարց լուծել: Իրենց և հարևան գյուղերի հարգված սեղանապետն է: Ամենից շատ սիրում է երեխայի ծնվելու կապակցությամբ կնունքների սեղանները ղեկավարել: Վիշամ Սարոյանի մի խոսքից է սկսում՝ «Այս աշխարհում անվերապահորեն սիրել են մանկան ճիչը» և շարունակում, որ այդ ճիչն է իրենց համախմբել մեկ ընդհանուր հարկի տակ: Այդ ճիչն է Արցախի գյուղական առևտրաշրջան: Գտնում է, որ գյուղերում պետք է հաշվառել 23 տարեկանից բարձր չամուսնացած տղաներին ու նրանց և՛ հորդորել, և՛ պայմաններ ստեղծել ամուսնանալու համար:

Իր տնօրեն աշխատած ժամանակ գյուղի կանանց հրավիրել է դպրոց՝ ժողովի, թե՛ տեսք մեր դպրոցի վիճակը, մի դասարանում 2 հոգի է, մյուսում՝ 3: Ներքևից եկողների դեպքում էլ նույն վիճակն է լինելու: Տարեթիվ կա, որ ծնունդ չունեն: Դա ոչ միայն դպրոցին, գյուղին է ազդում, և հորդորել է երեխաներ ունենալ: Ծիծաղել են: Բայց դրանից հետո երբ վիճակագրությանն են մայրում, տեսնում են, որ մի 10-15 ընտանիքում 4-րդ երեխան է ծնվել: Անձնական օրինակ է ծառայել: Իր 3-րդ և 4-րդ երեխաների միջև տարիքային տարբերությունը 16 տարի է:

Անհաշտ է թերությունների, սխալների նկատմամբ: Քանի՞ անգամ է հարց բարձրացրել, որ դպրոցական դասագրքերում գրեթե բացակայում են Արցախյան պատերազմի վերաբերյալ թեմաները՝ 1-2 ժամ են: Արդե՞ր չհաշտվեց իր պարտության հետ և իր ժողովրդին էլ չհաշտեցրեց: Այն 7 շրջանները, որ ազատագրել էինք, նույնիսկ այդ ժամանակ նրանց հասարակության մեջ չեն մարմնավորվել որպես կորուստ, չնայած Ալիևը եվրոպական բոլոր հարթակներում վայնասուն էր բարձրացնում իր տարածքների 20 տոկոս կորստի և 1 միլիոն փախստականների մասին: Բայց իրենց ժողովրդին այնպես են գաղափարախոսել, թե չեն պարտվել ու գործ են արել այդ ուղղությամբ: Նրանք հոգեպես պարտված չեն եղել ու պատրաստվել են: Բայց մեզ մոտ անգամ կան ուսուցիչներ, որ ասում են՝ սրանից հետո մենք ոչինչ անել չենք կարող: Այդպես արտահայտվել չի կարելի, քարոզում է Լ.Առաքելյանը:

Նա պարզապես լավ է 33 և ԱՀ «Մարտական ծառայության համար», «Հայրենյաց պաշտպան» և գերատեսչական մի շարք մեդալներով, Վարչապետի հուշամեդալով, շրջվարչակազմի պատվոգրերով: Զարմանալիորեն միայն կրթության բնագավառից չունի պարգևատրում:

Շնորհավորում ենք Լևոն Առաքելյանին հոբելյանի առթիվ, մաղթում, որ նույն ոգով ու համոզմունքով շարունակի գործնական հայրենասիրությամբ ոգևորել մեր ժողովրդին:

Սվեդլանա ԽԱԶՄՐՅԱՆ



ԳՅՈՒՂԻ ՄԱՐԴԻԿ

ՍԵՂԱ ՏԱՏԻԿ

Այս անգամ ես կփորձեմ գրել տիկին Սեղայի մասին, որը ոչ միայն իրենց տանը, այլև ողջ թահամասում Տատիկ պատվավոր անունն է կրում: Որպես գաղտնիքի բացահայտում ասեմ, որ ես և Սեղան միևնույն տարում՝ այն հեռավոր 1974թ. դարձանք գյուղում հայտնի թիկիվանց տոհմի բարեկամներ. նա՝ որպես հարս Մարտունու Կարվին թաղամասից (մանկությունն ու պատանեկությունն անցել են Խոջավենդի ագերիների հարևանությամբ), ես՝ որպես փեսա, եկանք երկու եղբոր ընտանիքներ: Արդեն շուրջ կես դար է՝ մենք բարեկամներ ենք: Սակայն բարեկամությունը միանգամայն առիթ էր, որ ես փորձեի նրա կերպարը ներկայացնել: Աշխատասիրությունը և ընտանիքին նվիրվածությունը նրան բնատուր, ի վերուստ տրված հատկանիշներ են: Սա դեռ ամենը չէ, որ հուշեց ինձ գրիչ վերցնել: Չորս երեխաներով, տասնյոթ թռչուններով, առայժմ մեկ ծոռով շրջապատված Սեղա տատիկը, ինչպես ասում են, քիթ սրբելու ժամանակ չէր ունենում: Դպրոցի աշակերտների 25 տոկոսը նրա թռչուններն է, նոր ուսումնականից այդ թիվը կավելանա: Սեղան վայրի բնության բարիքները տեղին, ժամանակին և նպատակային օգտագործելու լավ փորձ ունի, նույնիսկ մտածում է, որ այն կարելի է դարձնել եկամտի աղբյուր: «Վայրի բնությունից վերցրած ցանկացած ուտելի օգտագործվելիք բուսատեսակ չեն փոխի խանութից գնած «ամենալավ սննդամթերքի հետ»» սա նրա նշանաբանն է մարդ-բնություն հարաբերություններում:

ա սում էլի, տատի՛,- քրքջալով պատասխանում է Մանեն՝ գլուխկոնժի տալով թավշյա գորգերի մեջ: «Արմատը պոկել...»,- մտքում կրկնեց Սեղան, կանգնեց, շտկեց մեքեն, մտորումները շատ հեռուն տարան: «Արմատը կտրել...»,- անծայն կրկնեց մի քանի անգամ: Չենց այդ արմատը, հայի արմատը կտրել է ուզում թուրքը իր բարբարոս պլաններով: Տասնամյակներ, դարեր շարունակ մեզ հանգիստ չեն տալիս, անմարդկային, անենաստոր արարքներով փորձում են արմատը զատել մայր հողից, կտրել այդ արմատը սնուցող երակը՝ չգիտակցելով, որ հազարամյակներ շարունակ հայը արարել է այս երկրամասում, այստեղ ամեն ինչ հող, ամեն քար ու ապառաժ հայի

կոփված մարտիկ, ծառայել է 2-րդ, 3-րդ, 7-րդ պաշտպանական շրջաններում՝ որպես հրաձիգ, երկար տարիներ եղել է հրասայլի մեխանիկ, ծառայել է հակաօդային պաշտպանության գործակալական ենթասայլի զինվորական կոչումով, ներկայումս ծառայում է մոտոհրաձգային գնդում, դիրքի ավագ է: 2020թ. աշնանը ծավալված մարտական գործողություններին մասնակցել են Սեղայի երկու տղաները և չորս թռչունները: Մի գերդաստանից վեց հոգու առաջնագծում լինելը երբեք չի կարող մտահոգությունների տեղիք չտալ: Տագնապը կրծում էր Սեղայի սիրտը: Հարսը (Մարատի կինը) 6 անչափահաս երեխաների հետ տեղափոխվել էր Հայաստան, նրանց վիճակն էլ էր

խտեր, թե Սեղան երբ է քնում, արթնանում, բայց օրումնեք թոնրի ծուխը պալան-պալան երկինք էր բարձրանում, և թարմ թոնրահացը իր հաճելի բուրմունքով հայտնվում էր գյուղում ապրողների սեղանին: Ու քանի դեռ չէր կարգավորվել հացի մատակարարումը, Սեղան օր ու մեջ 50-60 հաց էր թխում ու բաժանում էր բոլորին հավասարապես: Այդ գործը ինքը՝ Սեղան անվանում էր Սուրբ գործ և այդ Սուրբ գործը կատարում էր բարեխղճորեն, խոնարհ նվիրվածությամբ: Իսկ երբ խոսք բացվեց վարձատրության մասին, նա կտրականապես հրաժարվեց. «Ինչ որ արել եմ, մեր ժողովրդի համար եմ արել, իսկ վարձի մասին չեմ էլ մտածել»: Այդ օրերին Պաշտպանության բանակի մի գումարտակ (պարզ է, պակաս թվով) հանգրվանել էր գյուղում: Գյուղապետը հնարավորինս հոգ էր տարել զինվորների կարիքները բավարարելու համար: Առանձնապես կարևոր էր հոգալ գիշերելու պայմանները, որը և կազմակերպվել էր հավուր պատշաճին: Մինչ այդ լուրեր էին տարածվել առ այն, իբր գյուղերում հանգրվանած զինվորները ինչ-ինչ գործերով իրենց վատ են դրսևորել: Գյուղում եղած մարդիկ ջերմությամբ շրջապատեցին զինվորներին, փորձեցին օգտակար լինել նրանց: Նրանք էլ իրենց պահվածքով, վերաբերմունքով, կարգապահությամբ նվաճել էին մարդկանց վստահությունը: Առավել հուզիչ էր բաժանման պահը. ամենուր ջերմ ու մտերմիկ խոսքեր էին հնչում առանձնապես բոլորիս համար թանկ խաղաղության և զինվորների համար անփորձանք ծառայության մասին: Նրանք երախտագիտության խոսքեր ասացին նաև Սեղա տատիկի հասցեին հայկական այնուրեքեր թոնրահացի համար, որից երկար ժամանակ չէին ճաշակել:



ոչ միայն քրտինքով, այլ նաև արյունով է շաղախված: Չենց այսօր էլ այդ արմատից չկտրվելու համար է պայքարում Արցախի մի բուռ ժողովուրդը, պայքարում է՝ ապավինած իր անկոտորուն կամքին, ոգու արիությանը, նախնայաց հերոսագործություններին, նոր սերնդի վճռակամությանն ու հայրենասիրությանը: Չէ, ոչ մի ուժ չի կարող արցախցուն արմատախիլ անել, կտրել մայր հողից, բանգի այդ արմատները սնուցող հազարավոր անոթներով մեր երիտասարդների թափած արյունն է հոսում:

անհանգստացնում, սակայն Սեղայի ուշքն ու միտքը այնտեղ էր՝ մարտի դաշտում մարտնչող որդիների հետ: Արկի ամեն մի պայթյուն, երկնականարը թրատող կործանիչներին, ԱՅՍԻ-ի մահաբեր աղմուկը հանգիստ չէին տալիս: Պատերազմի 1,5 ամսվա դաժան օրերին Եմիշճանը չի էլ դատարկվել, դեռ ավելին, 5 կանայք չեն էլ համոզվել լքել գյուղը: Դրանցից մեկն էլ Սեղան էր: Երբ փորձում էին, հորդորում էին, որ ինքն էլ շատերի նման ժամանակավոր հեռանա գյուղից, բարկանում էր. «Չգիտեմ, ծեռ եք առնո՞ւմ ինձ, ինչպե՞ս կարող եմ իմ երեխաներին, թռչուններին թողնել թշնամու երախտում ու հեռանալ, բացի դրանից, գյուղերը դատարկվելով մենք թուլացնում ենք մեր բանակի թիկունքը: Մոռացե՛ք, եր, որ Հայրենական մեծ պատերազմի մասին անցնելիս գրքերը գրում էին, որ թիկունքը երկրորդ ռազմաճակատ է, իսկ այս երկրորդ ռազմաճակատում մարտնչողները պետք է որ ինձ նման, իմ հասակի մարդիկ լինեն: Մարտի դաշտում գտնվող զինվորը պետք է զգա, որ իր թիկունքն ամուր է, թշնամին շրջանցել չի կարող: Այս համոզիչ պատասխանները շատ անգամ անակնկալի են բերում հարցնողներին, սակայն համոզված են, որ այդ 70-ն անց կինը միանգամայն ճիշտ դատողություններ է անում: Պատերազմի այդ դաժան օրերին ժամանակ առ ժամանակ հաց ծեռք բերելը պատուհաս էր դարձել: Մատակարարները մայրաքաղաքում էին, իսկ մայրաքաղաքի հետ կապը լի էր դժվարություններով: Հո ամեն օր այնտեղ գնալ չէ՞ր լինի: Հարցի լուծման միակ ճիշտ ուղին գյուղում հաց թխելն էր: Այդ գործը հանձն առավ Սեղան: Նա մի կողմ դրեց «տատի» կոչումը ու երիտասարդ կնոջ եռանդով կպավ գործի: Այլուրի հարցը համայնքը լուծեց (ղեկավար՝ Արմիկ Առաքելյան): Ոչ ոք չգ-

Գլուխկոնժի մեր ազնիվ, անչառ, բարի ու լավատես գործընկերոջ՝ ընկեր Դուլյանի կյանքի 60 գարունները: Վաթսունն այն տարիքն է, որն անվանում են իմաստության հասակ: Դա այն տարիքն է, երբ մարդ մի պահ հետ է նայում դեպ իր անցած կյանքի ուղին՝ կշեռքի նժարին դնելով իր արած-չարածը: Համոզված ենք, որ հետադարձ հայացք նետելով իր ապրած տարիներին, մեր գործընկերն այնտեղ կտեսնի ուրախություններով ու տատակներով լի առեղծվածային մի կյանք ու այդ կյանքի մեջ ամփոփված մնայուն արարքներ, շրջապատին ցուցաբերած մարդկային բարձր հատկանիշներ, անխոնջ աշխատանք, դեպի մեծ կյանք ճանապարհած հայրենակներ սաներ:

Գուրգեն Դուլյանը ծնվել է 1962թ. մարտի 29-ին Թուրքմենական ԽՍՀ Նեքիտոլաղ քաղաքում: 1969թ. ընդունվել է Ավերանի շրջանի Խնձրիստանի միջնակարգ դպրոցի առաջին դասարան: Դպրոցն ավարտելուց հետո 1977-1983թթ. սովորել է Խորհրդային Արթուրյանի 60-ամյակի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժնում: Այն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Խնձրիստանի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1997-1998թթ. ծառայել է ԱՀ ՊԲ շարքերում: 2000-2009թթ. աշխատել է Հիլիսի հիմնական դպրոցի տնօրենի պաշտոնում: 2009 թվականից առ այսօր նա Ավերանի շրջանի Իվանյանի Օճիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրենն է:

**Շնորհավորանք**  
**ՎԱՏՏԱԿՆ՝**  
**ԱՐԿԱՐ,**  
**ԽԻՂՃԸ՝ ՄԱՔՈՒՐ**



Մտավեցին մեր ազնիվ, անչառ, բարի ու լավատես գործընկերոջ՝ ընկեր Դուլյանի կյանքի 60 գարունները: Վաթսունն այն տարիքն է, որն անվանում են իմաստության հասակ: Դա այն տարիքն է, երբ մարդ մի պահ հետ է նայում դեպ իր անցած կյանքի ուղին՝ կշեռքի նժարին դնելով իր արած-չարածը: Համոզված ենք, որ հետադարձ հայացք նետելով իր ապրած տարիներին, մեր գործընկերն այնտեղ կտեսնի ուրախություններով ու տատակներով լի առեղծվածային մի կյանք ու այդ կյանքի մեջ ամփոփված մնայուն արարքներ, շրջապատին ցուցաբերած մարդկային բարձր հատկանիշներ, անխոնջ աշխատանք, դեպի մեծ կյանք ճանապարհած հայրենակներ սաներ:

Գուրգեն Դուլյանը ծնվել է 1962թ. մարտի 29-ին Թուրքմենական ԽՍՀ Նեքիտոլաղ քաղաքում: 1969թ. ընդունվել է Ավերանի շրջանի Խնձրիստանի միջնակարգ դպրոցի առաջին դասարան: Դպրոցն ավարտելուց հետո 1977-1983թթ. սովորել է Խորհրդային Արթուրյանի 60-ամյակի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժնում: Այն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Խնձրիստանի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1997-1998թթ. ծառայել է ԱՀ ՊԲ շարքերում: 2000-2009թթ. աշխատել է Հիլիսի հիմնական դպրոցի տնօրենի պաշտոնում: 2009 թվականից առ այսօր նա Ավերանի շրջանի Իվանյանի Օճիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրենն է:

Հմուտ մանկավարժ լինելով հանդերձ՝ նա ավանդապաշտ հայկական ընտանիքի հայր է, որն իր տիկնոջ՝ Մարինեի հետ դաստիարակել է չորս հայրենակներ գավակներ: Նրա չորս որդիներն էլ նվիրվածությամբ ծառայում են հայրենիքին:

Իվանյանի միջնակարգ դպրոցի ողջ կուրկտիվը շնորհավորում է մեր հարգարժան տնօրենին ծննդյան 60-ամյակի առթիվ ու մաղթում նրան միշտ հավատարիմ մնալ մեծատառով Մարդ լինելու բարձր կոչմանը: Ցանկանում ենք արցախյան քաջառողջություն և երկարակեցություն, արևներ ու բազում գարուններ:

Համոզված ենք՝ կբացվեն մեր ճղակոտոր հայրենիքի՝ Արցախ աշխարհի խաղաղությամբ պարուրված լուսաթև, շողակաթ առավոտները:

**Լեւոն ԱՌԱՔԵԼՅԱՆ**  
**Գ. Եմիշճան**

- «Կարմիր գիրք»-ն էլ հենց այդ է

ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՂԹԱՆԱԿԸ՝ ՑԱՏԿԱԶԱՐԹԱԿ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ

Մայիսի 13-14-ը Երևանի Արամ Մանուկյանի անվան «Փոքր Միեր» ռազմաճակատական մասնագիտացված դպրոցում կայացած ՆՁՊ առարկայական օլիմպիադայի 33 եզրափակիչ փուլում, որին մասնակցում էր 12 թիմ, Արցախի ջոկը 9-րդ անգամ անընդմեջ դարձավ հաղթող և նվաճեց գավաթ, ջոկի անդամները պարգևատրվեցին մեդալներով ու դիպլոմներով:

Արցախի ջոկը հաղթանակ տարավ հետևյալ անդամներով. Մովսես Գրիգորյան՝ Ստեփանակերտի հ. 8 մ/հ դպրոց, 12-րդ դասարան, Վահագն Թովմասյան՝ հ. 9 հիմնական դպրոց, 9-րդ դասարան, Յուրի Գայրապետյան՝ Ասկերանի շրջանի Խնապատի միջնակարգ դպրոց, 9-րդ դասարան, Դանիել Սիմոնյան՝ Մարտունու հ. 1 մ/հ դպրոց, 11-րդ դասարան, Գոռ Մոսիսյան (10-րդ դասարան) և Թամարա Սարգսյան (9-րդ դասարան)՝ Ասկերանի շրջանի Խնածախի միջնակարգ դպրոց, Մերի Սահակյան՝ Ստեփանակերտի հ. 9 հիմնական դպրոց, 9-րդ դասարան:

Ջոկը կազմվել է ԱԶ ՆՁՊ հանրապետական օլիմպիադայում (առաջադրանքները եղել են թեստային աշխատանք) բարձր միավորներ հավաքած դպրոցականներից:

Օլիմպիական թիմի հետ երեքշաբթյա



պարապմունքներ են անցկացրել ջոկի ղեկավարներ՝ Ստեփանակերտի հ. 9 հիմնական դպրոցի զինղեկ, 9-րդ անգամ թիմին հաղթանակ բերած, մայրը Արսեն Գարունյանը և հ. 12 դպրոցի զինղեկ, մայրը Նվեր Լազարյանը:

Օլիմպիական ներառում էր հետևյալ մրցածները. շարային պատրաստություն, թեստային աշխատանք, ինքնաձիգի ոչ լրիվ քանդում, հավաքում, հրաձգություն օդանդիչ հրացանից, վազք 1000 մ (տղաներ), 500 մ (աղջիկներ), ձգումներ պտտածողի վրա (տղաներ), հենում՝ պառկած դիրքից (աղջիկներ), նռնակի նետում:

Բոլոր մրցածներում (բացի ձգումներից)

Արցախի ջոկը ամենաբարձր արդյունքներն է ցույց տվել՝ գրավելով 1-ին տեղը և միայն ձգումներից՝ 2-րդ տեղը:

Հաղթանակով վերադարձած ՆՁՊ օլիմպիական թիմին Ստեփանակերտի «Մեքե ենք մեր սարերը» հուշակոթողի մոտ պատվով դիմավորել են ԱԶ ԿԳՄՍՆ, քաղաքապետարանի ԿՍ բաժնի աշխատողները, դպրոցականներ, այլք:

ԱԶ ԿԳՄՍ նախարարության աշխատակազմի

մի նախագորակոչային պատրաստության բաժնի վարիչ Դավիթ Օհանջանյանի խոսքով՝ «Պատերազմից հետո նման հաղթանակներն առավել քան կարևոր են, քանի որ օլիմպիադայում ընդգրկված են այնպիսի մրցածներ, որոնք կոփում են մեր պատանիների մարտունակությունը: Հպարտ ենք մեր թիմի գրանցած արդյունքով»:

Արցախի թիմի անդամներն ու զինղեկները վերադարձել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության դիպլոմներով, մեդալներով և գավաթով, իսկ Արցախի «Ձորաց ակումբ» ՀԿ-ի կողմից արժանացել են դրամական պարգևների:



Թիմին ընդունել, շնորհավորել և բոլոր անդամներին շնորհակալագրերով ու նվերներով պարգևատրել է ԱԶ ԿԳՄՍ նախարար Անահիտ Գևորգյանը:

Ինչպես «Լուսարար»-ի հետ զրույցում ասաց մայրը Արսեն Գարունյանը, օլիմպիադան այս տարի ավելի դժվար մրցապայքարում անցավ, բայց իրենք կարողացան պատվով դուրս գալ՝ ապացուցելով, որ արցախցին դժվարություններից չի ընկճվում ու շարունակում է քայլել առաջ:

Սեփ. լրատվություն

ԿՏՐՈՒԿ ՈԳԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ-ԿՏՐՈՒԿ ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ՈԳԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ-ՆՈՐ ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Սերոբ ԽԱՂՍՏՐՅԱՆ կրթության փորձագետ

Կրթության համակարգի մասին մեր պատկերացումները հաճախ շատ պարզունակ են: Մենք կրթության համակարգը հաճախ պատկերացնում ենք առասպելի տրամաբանությամբ: Այսինքն՝ գալիս է մի հերոս, որը փոխում է ամեն ինչ: Օրինակ, երբ 2018թ. հեղափոխություն

մեր կրթական համակարգը: Բայց անցնում է որոշ ժամանակ, և ոչ ոք այլևս չի հիշում, թե ինչ եղավ այդ ծրագիրը, ինչպես այն փոխեց մեր կրթական համակարգը: Մեկ այլ օրինակ: Հաճախ նախարարությունը պատվիրում է տարբեր հետազոտություններ: Սկզբնական փուլում ամեն ինչ այնպես է ներկայացվում, որ այդ հետազոտությունների ավարտից հետո կրթության ոլորտում բուն է լինելու: Բայց վերջում այդ հետազոտությունները մնում են դարակներում:

Պաշտոնյաների կարծիքով՝ այդ հետազոտությունները ոչ մի նոր բան չեն տալիս իրենց և միայն կրկնում են այն, ինչը իրենք գիտեին մինչև հետազոտությունը: Փաստորեն այս դեպքում ևս կա սպասում, որ մեկ կամ մի քանի հետազոտությունների միջոցով կրթության համակարգը ծաղկելու է:

Նմանատիպ օրինակներ շարունակ կարելի է բերել: Այս օրինակները ցույց են տալիս, թե որքան սխալ են մեր պատկերացումները կրթության ոլորտի մասին: Կտրուկ ոգևորություն-կտրուկ հիասթափություն, նոր ոգևորություն-նոր հիասթափություն: Այսպիսի տրամաբանությամբ է գործում մեր կրթական համակարգը: Պատճառն այն է, որ կրթության ոլորտում չկա համակարգ, ինստիտուցիոնալ մտածողություն: Ցանկացած ղեկավար կարող է հեշտությամբ ցնցել, արմատական փոփոխություններ կատարել ու կարճ ժամանակ անց հեռանալ՝ չթողնելով որևէ մշակույթ, աշխատառձ, ինստիտուցիոնալ դրվածք: Գալիս է հաջորդ ղեկավարը, նորից ցնցում համակարգը և հեռանում:

Այս հարցում, իհարկե, շատ բան կարող են անել միջին օղակի պաշտոնյաները: Նրանք կարող են չհամաձայնել, հարցեր տալ, կասկածներ արտահայտել: Բայց մեր կորպորատիվ մշակույթում ընդունված է ղեկավարի

հետ միայն համաձայնվելը, նրան լավ լուրեր հաղորդելը, նրա ձեռնարկները գովերգելը: Նույն պաշտոնյան մի ղեկավարի ժամանակ պաշտպանում է որոշակի տեսակետ, հաջորդ ղեկավարի օրոք՝ դրա հակառակ տեսակետը: Եվ, որպես կանոն, միջին պաշտոնյաների տեսակետը միշտ համընկնում է տվյալ պահի ղեկավարի տեսակետի հետ:

Դրա համար ոչ մի նախկին ղեկավար չպետք է զարմանա, թե ինչու է մեր կրթական համակարգը վատ վիճակում: Մեր կրթական համակարգում գրեթե չկա ամենակարևորը՝ հետևողականություն և փոքր փոփոխություններով առաջ գնալու մոտեցում: Համակարգում հետևողականություն և փոքր փոփոխություններով առաջ գնալու մոտեցում կարող են ապահովել միայն միջին պաշտոնյաները, քանի որ նրանք են երկարաժամկետ մնում համակարգում: Պետք են մարդիկ, որոնք համբերատար ձևով, քարը քարին դնելով՝ առաջ կտանեն համակարգը: Պետք է ոչ թե հրաշքներ սպասել կադրային նոր նշանակումներից, նոր ծրագրերից, հետազոտություններից, այլ յուրաքանչյուր դեպքում մի փոքր բան վերցնել ու ավելացնել կրթության շենքին:

Հայաստանի կրթական համակարգում կայուն ձեռքբերումներ ունենալու լավագույն ճանապարհն այն է, որ ուժեղացվեն միջին, կրտսեր պաշտոնյաների կարողությունները: Մեզ մոտ բարձր են վարձատրվում միայն բարձրաստիճան պաշտոնյաները: Կրթության մասին միջակայս պատկերացումներից մեկն էլ այն է, որ եթե նախարարներին, փոխնախարարներին բարձր վճարենք, ապա համակարգը կզարգանա:

Նույն ձևով մտածում ենք, որ եթե բարձր վճարենք միայն այն ուսուցիչներին, որոնք լավ են տիրապետում իրենց առարկային, կու-

նենանք զարգացում: Իրականում զարգացումը մեծապես կախված է նրանից, թե ինչ վիճակում են համակարգի ցածր օղակները: Երբ կրթության նախարարության շարքային աշխատողները ստանան արժանապատիվ աշխատավարձ, խիզախություն ունենան պաշտպանել համակարգը նոր պաշտոնյաների լավ չհաշվարկված միջամտություններից, կարողանան ամեն հետազոտությունից, ծրագրից մի փոքր բան վերցնել ու համբերատար դնել կրթության շենքի վրա, այդ ժամանակ մենք կարող ենք հույս ունենալ, որ 2-3 տասնամյակ հետո վերջապես կունենանք գործող համակարգ:

Կրթության համակարգին գրանդիոզ միջամտություններ պետք չեն: Ավելի փոքր, բայց տևական, հետևողական բաներ են պետք: Եթե կրթության ոլորտի ամեն աշխատող ամեն հաջորդ օր 0,01%-ով ավելի լավ աշխատի, ապա մի քանի տարուց կունենանք շատ ավելի լավ իրավիճակ: Բայց եթե կրթության համակարգի 10 բարձրաստիճան պաշտոնյաները ամեն հաջորդ օր 5%-ով ավելի լավ աշխատեն, առանձնապես շատ բան չի փոխվի, քանի որ մնացած 70 հազար աշխատողի ֆոնին 10 հոգու աշխատանքն առանձնապես կարևոր չէ:

Ուրեմն, կրթության իրական բարեփոխումները կսկսվեն այն ժամանակ, երբ ղեկավարները մտածեն շարքային աշխատողների վիճակի բարելավման, կարողությունների զարգացման մասին: Մեզ մոտ առայժմ բարիքների մեծ մասը բաժին է հասնում մարդկանց շատ փոքր մասին: Ձուգահեռաբար որոշումներ կայացնելու ժանրությունը ևս ընկնում է այդ փոքր խմբի վրա:

ՏԱՐԱՐԱՆ

ՏԱՂԻԿՆԵՐ՝ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԻՆ ՈՃՈՎ

Հասնիկ Սարգսյան (բանաստեղծուհի), Սեդրակ Երկանյան (երաժշտագետ)
Գեղջկական նոր տաղիկներ (երգ-բանաստեղծություններ)

Հասնիկ Սարգսյանը հանրածանոթ ստեղծագործող չէ: «Գեղջկական նոր տաղիկներ» հետաքրքիր գեղագիտական ու երաժշտական-արվեստագիտական գրքով կարծես փորձել է անցյալ տանել (աշխատանքն առավել արտահայտիչ են դարձնում նկարիչ Գ. Նազարյանի պատկերային հավելումները՝ դար առաջ եղած աղջիկ-տղայի հագուստի



ընդգծված ոճով): Հոգևոր ու աշխարհիկ երաժշտական գործերի հեղինակ Սեդրակ Երկանյանը զուգահեռ է հաճելի, ախորժալուր ու նուրբ երգարվեստով (չուրջ յոթանասուն չափածոյից ծայնագրվել է տասներկուսը): Դրանցից մի շարք օրինակներ 2016 թվականից քանիցս հնչել են «Հնագույն երաժշտության «Տաղարան» համույթի համերգներում ու նաև մատուցվել հասարակությանը հեռուստատեսությամբ:

Հնանների գեղջկական զուլալ երգեր են ծայնագրումները: Դրանք հյուսված են ճանաչողական արժեքով հարուստ, ախորժալուր բառ ու բանով, որը, ինչպես գյուղացուն, այնպես էլ քաղաքացուն երազային երանգներ է փոխանցում: Գեղագիտականի հանրամատչելի ու պարզունակի առաջնահերթ պահանջ է այս գործը: Ժողովրդական երաժշտությունը հարստացնում է յուրովի: Այն մեզ գերում է կարծես իր լեզվական-պատմական խառը բառային, ձևաբանական ու շարահյուսական կառույցների ոճով՝ աշուկ, մանչ, մանչ-բալին, դեգերել, իմալ, ծանրել (ծանրացել), Սասնա ամեն ծնակ, քունջ ու պուրճախ, երկան (երկար), ջոջ, թերթերունք, հասկացողուն, իմալ (ինչպես) երթամ, թիփի կանգնել և այլն:

Բանահյուսատիպ (երբեմն՝ միջինհայերենյան չափածոյատիպ) հանրամատչելի խոսք է այս պարզունակ սքանչելիքը: Բանասերի համար կարծես սովորական է: Պարզության հիմքը երկու պատճառ ունի: Առաջինը համաժողովրդական բնույթ կրելն է, երկրորդը՝ բանարվեստը երգարվեստին ծառայեց-

նելը: Հ. Սարգսյանը ծնվել է Երևանում, 1964թ.: Ունի բանասիրական բարձրագույն կրթություն, լրատվական ու մանկավարժական հարուստ փորձ: Նա հայ իրականությանն է ներկայացրել «Կիսատ անձրև» (Ե., 2002թ.), «Արևալույսի էքսպրոմտներ» (Ե., 2015թ.), «Հայրենիքը բառ չէ» (Ե., 2019 թ.) և այլ գեղարվեստական գործեր: Հեղինակ է նաև «Զրույցներ Սեդրակ Երկանյանի հետ» (Ե., 2017թ.) հրապարակախոսական գործի, ինչպես նաև ապահովում է «Մագաղաթ», «Հայագիտական Հայաստան» կայքէջերը, այսօրվա՝ ժամանակակից զարգացած բանասեր տիկին է:

Հայերենագիտական բավականին փորձ ունեցող այս մտավորականը համարյա երկուհարյուր էջանոց՝ քննության արժանի «Գեղջկական նոր տաղիկներ» չափածոն երաժշտական նոտաներով է ներկայացրել բազմապահանջ հայ հասարակությանը: Ահա պատմական բնույթի «Սասնա խաղիկ» զուգահեռ բանաստեղծությունը՝ Սեդրակ Երկանյանի երաժշտական ընկերակցությամբ (էջ 80-82, աղջիկը ներկայացված է այն ժամա-



նակվա տնտեսական գործով՝ ուտելիքի պատրաստմամբ, որտեղ դժվարը հաց ապահովելն է՝ հատկապես թխելը):

- Տղա - Մեր աղբրի ջրերը, Մեր սարերի հովերը, Առվի վրով թոցնեմ, Փեշո թոջի, ֆոցնեմ: Աղջիկ - Քարի վրա շուշան կա, Խավրժի ու մանդակ կա, Թոնրին կրակ հասցնեմ, Խմոր հացը գրտնկեմ:

Ահա մեկ այլ գործ՝ ընդգրկված մեզ անծանոթ բառով, բանահյուսական «Հատրատիտո» (էջ 40-44, Վայոց ձորի խաղիկ՝ Վայոց ձորի բառով): Երգը միջարկված է աշխուժացնող «հատրատիտո» ձայնարկությունախառն բառի կրկնություններով, որը երաժիշտը համակցել է լսելիքի համար ծայնաընկալողական աշխուժություն է ստեղծել: Պատակից-դրկից տղա-աղջիկ ջահելների ցզացումըների վերլուծություն է: Նրանք ազատ էին գիտաուսումնական գիտաբառերի ծանրաբեռնվածությունից, առկայում տն-

տեսական ու անձնական պահանջների բավարարման տնտեսական, կենցաղային բառ ու բանով:

Պատը պատին մոտիկ դրկից, Քիթը քթին տված՝ պատկից, Ապուպապի մեր աղաթով Մի տան պես ենք, ոչ թե խռով... Բայց ջահելին չես համոզի, Հատրատիտո, թռի-վռի, Ելնի տեղից մութ գիշերով, Գնա, մտնի իր հարսի ծոց (հարսն իբր հայրական կացարանը տունդարձի էր հրավիրված):

Մեկ այլ գործ նվիրված է տաղարանի շնորհալի մեներգիչ Հովսեփ Նշանյանին (Հորովելցուն): Աքանջելի պարզությամբ հագեցած այս պատառիկն առկայում է ելևէջող զգացումների հիշեցմամբ, առատ է երիտասարդի հոգևոր հարստության սիրառատ գեղգեղումների բացահայտմամբ.

Առավուրդ հենց որ բացվի, Այգին անուշ երգ կլցվի, Հովսեփ տղան աշուղ եղել, Պատուհանիս կղայլայլի: (50)

Մի պատառիկ հավքի թեմա է (ցրտերն ընկնելու վրա՝ չվել տաք երկիր), բայց միայնակ մնացած զուգընկերոջ վիշտը համամարդկային է՝ Ես անբույն-անտեր մնացի (էջ 89. այստեղ մարդկային ցավն է այլաբերված):

«Գեղջկական նոր տաղիկներ» ժողովրդական ոճավորմամբ այս բանաստեղծություններից մեկը թարգմանությամբ է ներկայացված՝ «Իմ սիրտ այսօր հեղեղվել է»՝ „Today



my heart is flooded“ (90-93, թարգմանչուհի՝ Մարգարիտա Գասպարյան):

Եվ այսպես շարունակ... Քննարկվող այս գրքի սկզբի էջերում տեղադրված են մի քանի արժեքավոր գնահատումներ Հ. Սարգսյանի աշխատանքների վերաբերյալ: Օրինակ, ահա բանասեր-մանկավարժ, Էջմիածնի թիվ 5 ավագ դպրոցի տնօրեն Գայանե Միջիկյան-Սաֆարյանի խոսքից մի փոքր հատված. «Բեղուն և բազմազան է Հասնիկի գրիչը: Փաստավավերագրական վեպ: ...Հասնիկը ժողովրդական բանահյուսության մոտիվներով ստեղծել է գեղջկական տաղիկներ՝ վայոցձորյան, Տավրոսի, Սաս-

նա, ապարանյան զուգերգ-խմբերգեր, կատակերգեր, որտեղ բնության և մարդու ներդաշն համագոյությունն է»:

Կամ բանաստեղծ և թարգմանիչ Գագիկ Դավթյանի ախորժալուր խոսքը. «Հասնիկի տաղիկներում խոսեցված են մեր ժողովրդի հոգեկերտվածքի, նրա հեռավոր ու մերձավոր անցյալի կյանքի ու կենցաղի տարրերը: Եվ հատկապես սովորույթները, որոնց անգիր պահպանների շարքերը գնալով նվազում են ցավալիորեն»:

Կոմպոզիտոր Աննա Ազիզյանի անուշաբույր ու հնչելի խոսքը. «Լայն բացած իր հոգու դռները՝ Հասնիկը չի վախենում կոպիտ ու բիրտ ուժի, չարի ներխուժումից և իր հոգու այդ նուրբ ու անկեղծը շոյալորեն նվիրում է ողջ աշխարհին ու պարուրում անսպառ ջերմությամբ: Սիրում են Հասնիկի հետ նավարկել իր բանաստեղծական գույների մեծ օվկիանոսում: Սիրում են նրա պոեզիայի օվկիանոսային հզոր, շառաչուն շնչառությունն ու խաղկտուն քչքչանը... Նրա տողերից մերթ հրաբուխ է ժայթքում, մերթ երկնագույն նուրբ լույս է ճառագում»:

Բնական է, երաժշտությամբ համակվում է յուրաքանչյուր մարդ... Հայ արվեստը հայ պահող հայոց «Տաղարան»-ով միշտ հարստանում է, թաթախվում չքնաղ զգացումներով: Այդպես էլ Հ. Սարգսյանի տաղիկները: Այդ սքանչելիքի մասին արձակագիր, լրագրող Վրեժ Սարուխանյանը, երկրային զգացումներով համակված, պոռթկացել է. «գեղջկական» բառը մերօրյա գորշության մեջ շատերի համար խեղճության և պարզության հոմանիշ է դարձել: (Բանաստեղծուհին կարծես... մի շրխկոցով ...ուզում է կոտրել կարծրատիպը):

Եվ այսպես, Հ. Սարգսյանը, բուն գեղագիտական ոճից կարծես խուսանավելով, ժողովրդական հին պարզությանն է դիմել, նոր ձևով մատուցել հին ժողովրդական խոսքը, բառ ու բանը, դրանք համեմել յուրովի մտածողությամբ: Դպրոցական, բուհական տարիների գիտական ծանրաբեռնվածությունից հոգնած, բայց սիրտ կարոտակեզ զգացումներից չհագեցած ու դրանցից չխորշող երիտասարդությանը ներկայացված է նույն սերը: Խորքային զգացումները պարզունակ պատկերներով ու արտահայտչականությամբ կարծես հոգեմոտ են դառնում ամենքին: Սրտամոտ բառ ու բանի պարզունակ հիշեցմամբ կարծես մոռացվողը մեր ունկերին է կրկնակի հարազատացնում քրտնաջան հեղինակը, փորձում մեր ունեցածը թարմացնել, հիշեցնել, կրկնակի հարազատացնել, պատանյակին, երիտասարդին ոգևորել, երբեմն էլ... ծիծաղեցնել: Ինչքանով է դա հաջողվել հոգեշարժար հեղինակին, Աստծուն է հայտնի:

Նոր բաղդադին (Բաղդադ քաղաքից բերված նվեր) շատ կսազի, Կչքերը կախ հարսնացվին, Ամեն կողմից գինք կզմնեն Հարազատներ տղու կողմից: (էջ 151)

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ Բ. Գ. Թ., դոցենտ



ԿԵՆՍԱԴԻՐ

ԿՈՉՈՒՄԸ՝ ԱՐՑԱԽՑԻ



թյամբ. «Ամեն հայ պիտի զգա, որ առանց իրեն հայրենիքը կփյվի»:- Աշոտ Ղուլյան (Բեկոր):

Պարզապես հրաշքի է նման տաղանդների այն առատությունը, որ հորդում է մեր ժողովրդի ընդերքից: Հերթական մեր զրուցակցին ներկայացնելու համար գուցե մարգաշխարհի տերմինները չպահանջվեն, մինչդեռ Արցախը աշխարհին ճանաչելի դարձնելու՝ նրա ընտրած միջոցը անտարբեր չի թողնում մեր հայրենակիցների հաջողություններով շահագրգռված, հայրենականը արժեւորող, հայրենիքի ճակատագրով մտահոգված արցախցիների:

Պարույր Ռուդոլֆի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ծնվել է 1983թ. սեպտեմբերի 25-ին Ստեփանակերտում: Ինչպես հասակակիցների, այնպես էլ իր մանկապատանեկան տարիները համընկել են Արցախյան շարժման մեկնարկի ու առաջին պատերազմի հետ: Ճակատագրի քնայքով մտքի ու հիշողության մեջ նստված թողած պատերազմի դեպքերն ու դեմքերը չպիտի մոռացվեն, այլ պետք է մղել գործողությունների՝ արցախահայրության համար դժվարին ժամանակահատվածներում, ռազմաքաղաքական բարդ պայ-

մաններում ապրելով, ստեղծագործելով, քառօրյա եւ 44-օրյա պատերազմներին մասնակցելով եւ շարունակելով ապրել ու արարել Արցախում: 1994թ. զինադադարից հետո մոխիրներից վեր հանող Ստեփանակերտն ապրում էր ստեղծագործ կյանքով: Պարույրը հաճախում էր Խ.Աբովյանի անվան հ. 1 դպրոցը, միաժամանակ վարում էր Արցախի հանրային հեռուստատեսության «Կարկաչ» մանկապատանեկան հաղորդումը: Ընտրել է լրագրողի մասնագիտությունը, ընդունվել ԱրՊՀ «Լրագրություն» բաժինը: 2001-2003թթ. պարտադիր ժամկետային ծառայությունն ավարտելուց հետո շարունակել է ուսումը համալսարանում: Պարույր Հարությունյանը հիմնադրել է գլխավորել է «Օկտավա» ՄՊԸ համերգային-գովազդային կազմակերպությունը, որի շուրջ մեկ տասնամյակ գործունեության շրջանակում ամսագրեր էին հրատարակվում, համերգներ էին կազմակերպվում: «Ձարկ» ամսագիրը ներկայացնում էր Արցախը՝ իր լուծված եւ չլուծված խնդիրներով: Երկլեզու ամսագիրը տարածվում էր նաեւ ՌԴ-ում: Այնուհետեւ Պարույր Հարությունյանն աշխատել է Արցախի հանրային ռադիոյում որպես հնչյունային ռեժիսոր: Նրա տաղանդը միայն լրագրության ոլորտում չէր արտահայտվել: Ստացել է երաժշտական կրթություն ջութակի բաժնում, հետագայում հրապուրվել ու ինքնակրթվել կիթառի, դաշնամուրի վրա: Մեր բազմատաղանդ զրուցակիցը ուսումնասիրել է նաեւ գյուղատնտեսության տարբեր բնագավառներ, կենտրոնացել մեղվաբուծության վրա: Մինչ 2020 թվականի պատերազմը զբաղվել է մեղվապահության գործով:

Վերջին ամիսներին համացանցը շաղախվեց Արցախի ու արցախցիների մասին պատմող «FROM ARTSAKH» նոր վիդեոշարքով: Հեղինակային նուրբ ճաշակով պարուրված վիդեոսերիալներում ներկայացված են մայրաքաղաք Ստեփանակերտի, արցախյան գյուղական կյանքի, արցախցիների մասին պատմող ռեպորտաժներ, ինչպես նաեւ դրվագներ 44-օրյա պատերազմից, որտեղ արտացոլված են հայ զինվորների անկողնում մարտական ոգին ու հայրենիքը պաշտպանելու անասան կամքը: Իր բնօրրանը պաշտպանելու համար մարտնչելու պատրաստակամության, կորցրածը վերագտնելու հույսի տակ կա մի իմաստուն թախիժ՝ ուրվագծված վիդեոսերիալներում, որոնց հեղինակը երեք պատերազմների միջով անցած, իր հողում ապրելու եւ ստեղծելու անխախտ ցանկություն ունեցող Պարույր Հարությունյանն է:

Են գտնվում էի պատերազմի այդ ժամանակահատվածում, պատրաստվում էին մարտի գնալ: Հետագա դպրոցական տարիներին ավելի խորն էին մատուցվում ազգային գաղափարախոսությունը, հայրենասիրական դաստիարակությունը, որը ստանում էինք մեր ուսուցիչներից: Ցանկացած ուսուցիչ մեջ հայրենասիրություն եւ սերունդը հայրենասիրական ոգով դաստիարակելու պատրաստակամություն կար, ուսուցիչներ, որոնք մեր կրթահամակարգում այդպես էլ մնում են որպես լավագույններ: Միշտ հպարտացել եմ մեր հերոս ազատամարտիկներով, նրանց կերպարը համարել օրինակելի: Մարտական ոգին ձեռնավորվում է մարտական դաստիարակությամբ, մարտունակ պետությունում: Բանակն էլ է շատ բան սովորեցնում: Պատերազմների մասնակցելու հետ կապված ապրումներս տարբեր են: Ապրիլյան պատերազմը թերեւս ավելի շատ հիշեցրել է բանակից դրվագներ: Այն ավելի թեթեւ էր թե՛ մեր եւ թշնամու բախման տեսակետից, թե՛ թշնամու հարձակման նպատակի առումով, թե՛ օրերի տևողությամբ, ինչը չենք կարող ասել 44-օրյայի մասին:

- 2020 -ի պատերազմը սկսելու մասին լուրն ինչպե՞ս իմացաք:

- Կիրակի էր, աշխատանքի չէի, գտնվում էի մեր գյուղում, որտեղ վաղ առավոտյան սկսեցին ծայրերը լսվել: Դրան հաջորդեցին զանգերն ու հաղորդագրությունները, որ պատերազմ է սկսվել, զորահավաք է: Գործողությունները հայտնի էին, պետք էր հավաքվել: Ներկայացա պահանջվող վայր, որտեղից էլ մեզ ուղղորդեցին համապատասխան դիրք:

- Ի՞նչ բնույթի մարտական առաջադրանքներ եք կատարել: Պատերազմի տարբեր փուլերում ի՞նչ վերաբերմունք կար: Հաղթելու հավատ կա՞ր:

- Լինելով զորահավաքային կազմի ծառայողներ՝ առաջնորդվել

ենք պահի թելադրանքով: Կանգնել ենք հրետանու կողքին եւ մատակարարել հրետանու կրակը: Դիրք ենք պահել: Դիվերսիոն գործողություն ենք կատարել: Պատերազմ է: Միշտ հիշում էի ավագ մարտական ընկերոջս խրատները, որ պատերազմում կարող է ամեն ինչ պատահել, պետք է պատրաստ լինել դիմակայել ցանկացած դժվարության: Կարող է պաշտպանիչ հանդերձանքը բոլորին չհերիքի, հաց չլինի, տարբեր փորձությունների մեջ ընկնել կա, բայց դժգոհել չկա: Մտածում էինք՝ ինչպես հաջողության հասնենք: Ամենափոքր հաջողությունն անգամ պատերազմում հանդիսանում էր աստվածային նվեր: Գործողությունների կոնկրետ հաջողականություն կար, որն իրականացնում էինք, եւ այդ ընթացքում անհեթեթություն կլիներ հաղթանակի կամ պարտության մասին մտածելը: Ինձ մոտ ավելի շատ գործում էր սառը դատողությունը, հույզերը մնացել էին հետին պլանում: Պետք էր կատարել այս կամ այն գործողությունը, որը կունենար հետևանք: Բայց մենք ժամանակ չունեինք հետևանքի մասին մտածելու: Պատերազմը գնալով թե՛ մահում էր, իսկ ամեն մի նոր բացվող օր նոր տեսլական էր բերում: Անորոշ էր, չգիտեինք, թե ինչ կլինի: Ինչպես ասվում է ռուսական հանրահայտ "ЖОБЭ" խմբի երգի տողերում, «Կռվում կամ մենք՝ նրանք, կամ նրանք՝ մեզ»: Մեր պայքերի օրինակով մեր զինվորները խիզախությամբ կռվում էին զենքով մեզանից ավելի ուժեղ, թվով՝ ավելի շատ ադրբեջանցի, թուրք ոսոխի դեմ: Նրանց չի հաջողվել ներխուժել մեր սահմանը եւ ոչնչացնել մեզ: Մի՞թե դա հաղթանակ չէ:

- Մարտական ընկերության, փոխօգնության դերը:

- Ամենածանր պահերն ընկերակի հեշտ էին հաղթանակում: Պատերազմի սկզբում ավելի դժվար էր, բայց հետագիտես հարմարվում էինք, այսպես ասած, իմունիտետ էինք ձեռք բերել: Ընկերներով միմյանց քաջալերում էինք: Աջակցում էինք իրար ինչով կարող էինք: Հատկապես անգնահատելի է մարտական փորձ ունեցող մեր ընկերների դերը, որոնք անփոխարինելի խորհուրդ կարող էր մարդկային կյանք փրկել: Իսկ 18-20 տարեկան զինվորները հիացնում էին իրենց քաջագործություններով: Մարտական ընկերների կորուստն ամենածանր բանն է, որ կարող է պատահել պատերազմում: Դժվար է այսօր ապրել նույն ձեռով, երբ տղաները բացակա են մեր շրջապատից: Իմ աչքի առջեւ գաղափարապես ուժեղ այն ծնողների կերպարն է, ովքեր կորցրել են իրենց հերոս տղաներին, բայց եւ իրենք էլ հերոսաբար տանում են անդառնալի կորստի ցավը, կարողանում են նոր մարտահրավերների դիմակայել, սերունդ դաստիարակել, նույնիսկ սովորեցնել, թե որն է լավ, իսկ որը՝ վատ: «Ես չեմ պարտվում, չեմ կորսվում, դու չես կարող հաղթել ինձ» համոզմունքն է հիմքում: Չկորսվել. մի՞թե հաղթել դա չէ:

- Ո՞ր պահն էր ամենավտանգավորը:

- Այդպիսի պահեր շատ կային: Ամենածանր վտանգը անորոշությունն է: Կրակոցը սկսվում է, չգիտենք, թե որտեղից է, միջոց էլ չունենք պարզելու: Անորոշ տեղից

սկսվում է ու շարունակվում անորոշ ժամանակ, չենք կարող որեւէ բան անել: Պետք էր դիմանալ: Դրանից ավելի ծանր տեսարան էր, երբ հոկտեմբերի 10-ին մեկ օրով պետք է գայինք Ստեփանակերտ: Մեքենան, որի մեջ էինք, ուղիղ նշանառության տակ էր: Շարժվում էինք արևելքի անընդհատ պայթյունների կազմում ճանապարհով: Անպաշտպան էինք: Կարողացանք անվնաս տեղ հասնել, մեկ օր հետո՝ նորից նույն պատկերով հետ գնալ:

- Մարտական ընկերության, փոխօգնության դերը:

- Ամենածանր պահերն ընկերակի հեշտ էին հաղթանակում: Պատերազմի սկզբում ավելի դժվար էր, բայց հետագիտես հարմարվում էինք, այսպես ասած, իմունիտետ էինք ձեռք բերել: Ընկերներով միմյանց քաջալերում էինք: Աջակցում էինք իրար ինչով կարող էինք: Հատկապես անգնահատելի է մարտական փորձ ունեցող մեր ընկերների դերը, որոնք անփոխարինելի խորհուրդ կարող էր մարդկային կյանք փրկել: Իսկ 18-20 տարեկան զինվորները հիացնում էին իրենց քաջագործություններով: Մարտական ընկերների կորուստն ամենածանր բանն է, որ կարող է պատահել պատերազմում: Դժվար է այսօր ապրել նույն ձեռով, երբ տղաները բացակա են մեր շրջապատից: Իմ աչքի առջեւ գաղափարապես ուժեղ այն ծնողների կերպարն է, ովքեր կորցրել են իրենց հերոս տղաներին, բայց եւ իրենք էլ հերոսաբար տանում են անդառնալի կորստի ցավը, կարողանում են նոր մարտահրավերների դիմակայել, սերունդ դաստիարակել, նույնիսկ սովորեցնել, թե որն է լավ, իսկ որը՝ վատ: «Ես չեմ պարտվում, չեմ կորսվում, դու չես կարող հաղթել ինձ» համոզմունքն է հիմքում: Չկորսվել. մի՞թե հաղթել դա չէ:

Իմ շրջապատում խորին հարգանքս վայելող ընկերներ շատ կան, բայց ինձ համար առանձնացված անուն է հրապարակախոս, քա-

ղաքագետ, լրագրող, կենդանի լեզու Միքայել Հաջյանը: Հրաշալի անձնավորություն՝ խելացի, հետաքրքիր, մարդկային բոլոր արժանիքների մարմնացում, արցախցու բացառիկ մնուշ, որի հետ կարելի է կիսվել ու ստանալ:

- Ի՞նչ է Ձեզ համար անձնական զենքը:

- Ինձ համար զենքը իմ անբաժան մարտական ընկերն էր պատերազմի ժամանակ մարտական գործողություններ կատարելիս: Այսօր իմ զենքը սարքավորումներն են, որ օգտագործում են Արցախը աշխարհին ճանաչելի դարձնելու համար:

- Հետպատերազմյան շրջանին ինչպե՞ս եք հաղթահարում: Ի՞նչ անելիքներ ունեք:

- Պատերազմը վերքեր է թողել մեր սրտերում, որոնց հետ պետք է ապրենք: Մեր գորախմբի հարազատ դարձած անձնակազմով ավելի հաճախ էինք հանդիպում, երբ թարմ էին հիշողությունները, կիսվում էինք իրար հետ գաղափարներով, հուշերով, կորստի վշտով, քննարկում մեր հետագա անելիքները: Մեր պատմությունը կտորակված է, ազգի սիրտը՝ կիսված, բայց մենք կարողացանք պահպանել մեր բարոյական կերպարը, մեր կամքի գործունեությունը: Ես սխալ չեմ համարում մեր անցած ուղին, անհրաժեշտության դեպքում կրկին համախմբվելու ենք ու կատարելու ենք անհրաժեշտ գործողություններ: Հիմա պետք է ամեն մեկս զբաղվենք մեր գործով, զարգացնենք մեր երկիրը՝ մեր ներքինն ունենալով: Մինչև պատերազմը զբաղվում էի մեղվաբուծությամբ: Պատերազմի պատճառով խնամել չկարողանալու հետևանքով ոչնչացավ իմ ստեղծած փոքր բիզնեսը: Բայց երբեք էլ հուսահատվելու կամ ուրիշ երկիր տեղափոխվելու մտքեր չեմ ունեցել: Հայրենիքում մնալը արտաքին վտանգի դեմ ամենահզոր զենքն է: Արցախը մեր հայրենիքն է, մեր հողն է, մեր հարազատ տունն է, այստեղ են մեր պայքերի նշխարները: Պետք է զարգացնենք, Արցախը դարձնենք բրենդ: Թե՛ պատմության մեջ, թե՛ գործունեության եւ թե՛ մենտալ ուղիղում սխալներ լինում են: Սխալներից չպետք է վախենալ, այլ պետք է դրանք ընդունել որպես առաջ շարժելու մոտիվացիա եւ ուղղել: Եթե որեւէ բան չի ստացվել, դա չի նշանակում, թե այդպես էլ մնալու է: Բնությունն անգամ նույն տարերքում երկար չի մնում՝ ծնունդը հաջողում է գարունը: Պետք է գտնել ներդաշնակություն եւ պահպանել այն: Ցանկացած սերունդ կերպի ապրել Արցախում: Բոլոր ուղիղներում ներդաշնակություն պահելու լավագույն մնուշ է Արցախը: Մենք եւ եկող սերունդը պետք է լցվենք եռանդով, յուրաքանչյուրս մեր մասնագիտական ոլորտում աշխարհին ցույց տանք մեր ազգի ունիկալությունը, դառնանք ճանաչելի, մրցունակ պետություն, կարողանանք լուծում տալ մեր առջեւ ծառայած ժամանակահունց մարտահրավերներին՝ Չարենցյան «Թե ուզում ես երգը լսեն՝ ժամանակիդ շունչը դարձի՛ր» իմաստախոսությունը ընդունելով որպես կոչ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿԱՐԱՏԵԻՍԵ ԵՐԲԵՔ ԿԱՆԳ ԳԻ ԱՌԽՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՆԴՐԵՅ ՊԵՏՐՈՍՅԱՆ



Ավանդական կարատե-դո-ն Արցախում մեծ հեղինակություն վայելող մարտարվեստ է: Դրանով հաճախում զբաղվում են ոչ միայն երեխաներ, պատանիներ ու երիտասարդներ, այլև հասակ առած մարդիկ: Առաջին հերթին դա առողջ ապրելակերպ վարելու լավ միջոց է, որին զուգահեռ կարելի է ձեռք բերել նաև ինքնապաշտպանության հմտություններ: Ավանդական կարատե-դո մարտարվեստով աշխարհում կազմակերպվում են բազմաթիվ մրցաշարեր, որոնց մասնակցում են նաև Արցախի կարատեիստները՝ ընդ որում ցուցաբերելով լավ արդյունք: Ավանդական կարատե-դո-ն Արցախում զարգացած է մասսայականացած լինելու գործընթացի գլխավոր հերոսները մարզիչներն են, որոնք կոչվում են Սենսեյ: Մեր հերթական գրուցակիցը ավանդական կարատե-դո-ի մարզիչ Անդրեյ ՊԵՏՐՈՍՅԱՆն է:

Ծնվել է 1988թ. հունվարի 31-ին Ստեփանակերտում: Հաճախել է 6-րդ դպրոցը: Ավարտել է ԱրՊՀ ֆիզիկուլտուրայի և սպորտի բաժինը: 2006-2008թթ. ծառայել է ՊԲ-ում, որից հետո ծառայության է մտել ԱՀ ՓԾ: Ներկայում ծառայում է հանրապետության անվտանգության համակարգում՝ ծառայությունը համատեղելով մարզչական աշխատանքի հետ:

Մարտարվեստի հետ ծանոթացել է մանկապատանեկան հասակում դիտած մարտաֆիլմերից, իսկ 11 տարեկանից հաճախել է Ավանդական կարատե-դո մարտարվեստի պարապմունքների՝ Արցախում ճանաչված մարզիչ Ժորայր Թովմասյանի մոտ, որի շնորհիվ բացահայտվում է յուրացվում էին ավանդական կարատեի հետաքրքրաշարժ ու բազմազան հնարները: Տարիների պարապմունքների շնորհիվ արժանացավ սեւ գոտու, այժմ՝ արդեն երկրորդ դաս: Բազմիցս մասնակցել է մրցաշարերի: ՀՀ ավանդական կարատե-դո-ի մրցաշարերի բազմակի մրցանակակիր է, «Արարատ» գավաթ միջազգային մրցման չեմպիոն է, 2019թ. Եվրոպայի ավանդական կարատե-դո-ի առաջնության երրորդ տեղի մրցանակակիր է: Մինչևե այսօր Անդրեյ Պետրոսյանը շարունակում է հավատարիմ մնալ իր նախընտրած մարտարվեստին և ավելի շուրջ տասը տարի է, ինչ զբաղվում է նաև մարզչական գործունեությամբ: Ավանդական կարատե-դո-ի ֆեդերացիայի մարզիչ Անդրեյ Պետրոսյանի մոտ պարապում է 5-17 տարեկան շուրջ 50 աշակերտ: Մարզումներն անց են կացվում Ստեփանակերտի 6-րդ դպրոցում:

Անդրեյ, ինչո՞վ է առանձնանում ավանդական կարատե-դո-ն այլ մարտարվեստներից:

Ցանկացած իրական մարտարվեստի հիմնական գաղափարը ինքնակատարելագործման ճանապարհն անցնելն է, որը երկար է ու դժվար է շատերի համար: Ավանդական կարատե-դո-ն առաջին հերթին ինքնակատարելագործման ուղի է, առողջ լինելու և ինքնապաշտպանություն իմանալու արդյունավետ միջոց: Մրցումներն այստեղ երկրորդական են: Ինչպես հայտնի է, կարատե-դո՝ նշանակում է դասարկ ձեռքի ճանապարհ, այսինքն՝ ոչ թե զենքով, այլ ձեռքն է օգտագործվում որպես զենք: Ավանդական կարատեի դպրոցներն անցած կամ անցնող մարզիկները տարբերվում են իրենց համեստությամբ, հավասարակշռությամբ, օգտագործում են իրենց մարտական հմտությունները մարզադահլիճում, կարողանում են իրենց տիրապետել կյանքի տարբեր իրադրություններում:



սերնդեսերունդ: Երեխաները չեն ունենում ոգու հետ կապված խնդիրներ, բարձր մարտական ոգին ի ծնե բոլոր արցախցիների մեջ կա: Եթե առանձին դեպքերում էլ լինում են խնդիրներ, ապա մարզիչն օգնում է, որ հաղթահարվի վախը, պնդվի ոգին, ինչպես որ մեր նախահայրերը հաղթահարել են անցել են իսկական մարտիկի ճանապարհը: Որպես մարզիչներ մենք ունենք մեր մեթոդիկան, դա պարտադիր է ունենալ: Կարատեն ներառում է չինական քունգֆուի և ճապոնական սամուրայների փիլիսոփայությունը, ինչպես նաև ունի հոգեբանություն, որտեղ ներառվում է աշխատանք վախի հետ: Վախը բնորոշ է բոլորին, բայց չպետք է թողնել, որ այն սկսի կառավարել Ձեզ: Հակառակը, եթե մենք մարզիկի մեջ վախ ենք նկատում, համապատասխան առաջադրանքներ տալով օգնում ենք, որ նա հակառակ, թե ինչ պետք է անի վախի հետ: Մարտարվեստներում հայտնի խրատ էր. ցավին պետք է ցավով հաղթել: Դա կիրառվում է նաև որպես մարզչական տակտիկա: Մարզչի աշխատանքից շատ բան է կախված լավ մարզիկ կամ մարտիկ դաստիարակելու համար: Պետք է կարողանալ ներարկել երեխաների մեջ մարտիկի ուղիով գնալու ձգտումը: Չէ՞ որ նրանք մեր ապագա զինվորներն են:

Ապրիլի 16-17-ը երևանում կայացած ավանդական կարատե-դո-ի ՀՀ առաջնությունում Ձեր սաները հաջողություն են գրանցել: Ինչպե՞ս եք գնահատում մարզիկների ձեռքբերումները:

Հայաստանի տարբեր մարզերից մասնակցել են շուրջ 500 մարզիկներ: Մեր ակումբից Արցախի ավանդական կարատե-դո-ի ֆեդերացիայի ներքո մրցաշարին մասնակցել է 12 հոգի: Մրցաշարի արդյունքում ֆեդերացիան գրանցել է 6 առաջին տեղ համապատասխան տարիքային կարգերում, որից չորսը իմ սաներն են: Ունենք նաև երկու երկրորդ և երեք երրորդ մրցանակային տեղեր զբաղեցրած մարզիկներ: Բնականաբար, արդյունքը բարձր են գնահատում, սա հերթական ապացույցն է, որ մեր ակումբը կայացած է: Ընդհանրապես և հաղթական ոգին բարձր պահելու նպատակով «Բեյք Մեթըլս» ընկերության գլխավոր տնօրեն Արթուր Մկրտումյանի կողմից մարզիկներն ստացել են դրամական պարգևներ: Արթուր Մկրտումյանը նաև մարզական գույք էր նվիրել մեր ակումբին: Նման աջակցությունը խթան է հանդիսանում, որ մեր սաները ոգեւորվեն և ավելի եռանդով պարապեն: Մենք էլ անելու ենք մեզանից կախվածը, որպեսզի դաստիարակենք առողջ, ֆիզիկապես և հոգեպես ուժեղ սերունդ:

Որքանո՞վ է արդյունավետ ինքնապաշտպանություն սովորելու համար տրամադրել երկար տարիներ, անցնել մարզումների ղվարությունների միջով, եթե ժամանակակից միջոցներն առաջարկում են զանազան զենքեր ու դրանք կիրառելու մեթոդներ:

Կարատեն սովորում են ոչ միայն ինքնապաշտպանության համար: Դա արվեստ է, որը հետաքրքիր է շատերին: Հաճախ մարզադահլիճ ով գալիս հասուն տարիքի կամ հասակ առած մարդիկ, ովքեր ցանկանում են պարապել իրենց առողջության համար: Ընդհանրապես, կարատե պարապող մարդիկ, մասնավորապես մեր մարզիկները տարբերվում են իրենց հոգեբանական պատրաստվածությունից: Եթե մարզիկը չի անցել այդ կետերը, նա չի կարող պատրաստ լինել ինքնապաշտպանության, նույնիսկ եթե զենք ունենա, դրա հետ վարվել իմանա, սակայն հոգեբանական պատրաստություն չունենա, մարտական ոգին կոփված չլինի, նա չի կարող լիարժեք օգտագործել զենքը: Պատրաստվելու համար երկար ժամանակ ու ջանք է պահանջվում, բայց արդյունքը դրան արժեն:

Արդյա՞ն վստահաբար սանե կարող են թերեւս սեփական փորձ ունեցող մարդիկ: Պատահե՞լ է, որ մարզադահլիճից դուրս օգտագործեք կարատեն պաշտպանվելու համար:

Այո, պատահել է, հասկանալի պատճառներով չեն կարող փակագծերը բացել: Տարիների մարզումներն ու ձեռք բերած հմտություններն են օգնել: Այն, ինչ օգտագործում ենք մրցումների ժամանակ, դեռ մի մասն է կազմում իրական կարատեի, որի իմացությունը կարող է կյանքը փրկել: Սակայն կարատեիստը երբեք կանգ չի առնում իր ուսումնառության մեջ: Չկա մի գագաթնակետ, որին հասնելը դառնա սահման: Կատարելագործվելու ճանապարհն անսահման է, որով գնալը ավանդական կարատեի հիմնական մասն է:

Ինչպե՞ս եք մարզիկների մեջ զարգացնում մարտական ուժեղ ոգի:  
Արցախցիների մարտական ոգին միշտ բարձր է: Մեր հայրերից ու պապերից զենետիկորեն փոխանցվում է այն

ՅՈՒՐԻ ԿԱՐՈՂԱՆՅԱՆԸ՝ ԱՃԽԱՐԿԻ ԶԵՄՊԻՈՆ



Մայիսի 21-29-ը Դազախստանում՝ Ալմաթիում կայացած Ուժային եռամսյակի աշխարհի առաջնությունում արցախցի մարզիկ Յուրի Կարողանյանը (յու.նիոր, 18-23 տարիքային կարգ, մինչև 120 կգ քաշային կարգ) դարձել է չեմպիոն: Սեղմուն հենարանից մրցակարգում Յուրին հաղթել է երկու մրցակիցներին՝ կատարելով վարժությունը 195 կգ-ով: Արցախցի մարզիկն աշխարհի առաջնությունում Հայաստանի Հանրապետության հավաքականի միակ ներկայացուցիչն էր: Մեզ հետ զրույցում Յուրին պատմեց, որ հաղթանակը սպասելի էր իր համար, քանի որ ութ տարի տքնաջան աշխատում էր այդ ուղղությամբ և սպասում էր այդ օրվան: Աշխարհի առաջնության պատվավոր 1-ին տեղն զբաղեցրած մարզիկն ասում է, որ հաղթանակի բերկրանքն, անշուշտ, վայելել է՝ կանգնելով բարձր պատվանդանին, բայց եւ լրացնում է, որ սպորտում դա սովորական է: Պետք է նպատակ դնել ու ձգտել դրա իրագործմանը:

Արցախցի մարզիկն իր պարապելու տասը տարիների ընթացքում բազմաթիվ մրցանակների և չեմպիոնի կոչման է արժանացել՝ մասնակցելով տարբեր մրցաշարերի: ՀՀ բազմակի չեմպիոն է: 2016թ. սկսել է մարզվել ու այդ տարում արդեն մասնակցել Եվրոպայի ուժային եռամսյակի առաջնությանը, որը կայացել էր Եստոնիայի Տարտու քաղաքում: Նրան հաջողվել է 2-րդ մրցանակային տեղ զբաղեցնել և վերահաստատել արժանիքը: Նույն թվականին մասնակցել է Ամերիկայի Կիլան (Տեխաս) քաղաքում ընթացած Ուժային եռամսյակի աշխարհի առաջնությանը ու զբաղեցրել մրցանակային 3-րդ տեղ: 2017-ին եւս մասնակցել է Բելառուսի Հանրապետության մայրաքաղաքում՝ Մինսկում կայացած աշխարհի առաջնության և զբաղեցրել 3-րդ մրցանակային տեղ: 2016-ին նա կարողացավ 175 կգ-ով սեղմուն հենարանից մրցություն Եվրոպայի ռեկորդանեն հռչակվել, իսկ 2017-ին, գերազանցելով իր ռեկորդը, դարձավ աշխարհի ռեկորդակիր 183,5 կգ-ով սեղմուն հենարանից մրցապայքարում: 2018թ. Բելառուսում կայացած Ուժային եռամսյակի Եվրոպայի գավաթի խաղարկությունում զբաղեցրել է 2-րդ տեղ: 2018թ. Ֆինլանդիայի Վանտա քաղաքում մասնակցել է աշխարհի առաջնությանը սեղմուն հենարանից մրցապայքարում, արժանացել 3-րդ մրցանակային տեղի: 2021թ. Լիտվայում (Վիլնյուսում) սեղմուն հենարանից մրցածուով մասնակցել է Աշխարհի առաջնության, զբաղեցրել 4-րդ տեղ: 2021թ. Ույեյմբերի 21-25-ը Ռուսաստանի Դաշնության Եկատերինբուրգ քաղաքում սեղմուն հենարանից մրցածուով մասնակցելով Եվրոպայի առաջնությանը՝ Յուրի Կարողանյանը հռչակվել է չեմպիոն: Եվրոպայի չեմպիոնը վերադարձել է հայրենիք և նույն հաջողությամբ մասնակցելով ղեկտեմբերի 3-5-ը Հայաստանի Հանրապետության Ուժային եռամսյակի առաջնությանը՝ զբաղեցրել է 1-ին տեղ: 113 կգ քաշ ունեցող մեր «հսկան» ծանրաձողով կքանիստ վարժությունը կատարել է 285,5 կգ քաշով՝ այդպիսով սահմանելով հերթական ռեկորդը:

Աշխարհի չեմպիոնն (2022թ.) իր մարզական հաջողության մեջ մեծ դերը վերագրում է մարզչին՝ Արկադի Ջաքարյանին: «Մեծ է իմ քրտնաջան աշխատանքի դերը հաջողության հասնելու մեջ, բայց կրկնակի մեծ է իմ մարզչի աշխատանքը: Նա միշտ եղել է իմ կողքին, մեծ ներդրում ունի իմ չեմպիոն դառնալու հարցում», - ասում է Յուրի Կարողանյանը:


Նպատակասլաց մարզիկի հաջողությունը սրանով չի ավարտվում: Պատրաստվում է օգոստոսի 3-7-ը մասնակցել Հունգարիայում կայանալիք ուժային եռամսյակի Եվրոպայի առաջնությանը, որի ժամանակ ծրագրում է 205կգ քաշով նոր հաջողություն սահմանել: Աշխատանքի, ուսման հետ միասին Յուրին արդեն սկսել է պատրաստվել նոր մրցույթի մասնակցելուն: Երբ գրուցում ենք ղվարությունների մասին, Յուրին կրկին նշում է, որ միակ ղվարությունը մարզադահլիճ չունենալն է, ինչի պատճառով դեռ պարապում են մարզչի ավտոտնակում: Հուսանք, որ աշխարհի չեմպիոն թողարկող՝ Արցախի ուժային եռամսյակի ֆեդերացիայի պատշաճ մարզադահլիճ ունենալու հարցը պատկան մարմինների կողմից կարժանանա ուշադրության:

Առաջնությունը պատրաստվելու համար անհրաժեշտ ծախսերը հոգացել է «Ապագա սերունդների հիմնադրամ»-ը: Յուրի Կարողանյանը շնորհակալություն է հայտնում հիմնադրամին և անձամբ Գրիգորի Գաբրիելյանցին անհրաժեշտ մարզական հանդերձանք ձեռք բերելու հարցում հովանավորելու համար: Ինչպես նաև շնորհակալություն է հայտնում ՀՀ ուժային եռամսյակի ֆեդերացիային և անձամբ նրա նախագահ Լեւոն Քոչարյանին՝ առաջնությանն ուղեւորվելու նպատակով ֆինանսական աջակցության համար:

Երկեղը՝ Սուլյա ԱՎԱԳՅԱՆԻ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՖՈ ԵՎ ՆԵՔԻԱԹԸ՝ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԶՈՒԳԱՆԵՌԻ ՎՐԱ



Վերջերս «Լուսաբերդ» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ վերահրատարակվել է անվանի գրող Լեւոն Խեչոյանի «Տան պահապան հրեշտակը» հեքիաթների ժողովածուն: Հայ հեքիաթագրության մեջ այն միանգամայն նոր երևույթ է՝ պատմողական ուրույն ոճով եւ թե՛ նյութի գաղափարական բազմաշերտությամբ, որով գեղագիտական նոր սանդղակի վրա է բերվում հեքիաթի ժանրը: Ժողովածուն խմբագրել է գրող, բանասիրական գիտությունների թեկնածու ԿԻՄ ԳԱՐՐԻԵԼՅԱՆԸ: Ստորեւ ներկայացնում ենք նրա գիտական մեկնությունները Խեչոյանի հեքիաթների առնչությամբ:

Մի առիթով տեսակետ հայտնելով հայ դասական գրականության լավագույն արձակ ստեղծագործությունների մասին՝ Լևոն Խեչոյանն առանձնացրել է Թումանյանի «Կիկոսի մահը», Չարենցի «Երկիր Նաիրին», Մաթևոսյանի «Մեծամորը» եւ Մահարու «Այրվող այգեստանները»: Թվարկածների մեջ իբրև ամենալավ գործ, սակայն, նա ընդգծել է «Կիկոսի մահը»: Խեչոյանի հիմնավորումն այն էր, որ «Կիկոսի մահը» կարող է մրցել եվրոպական լավագույն գրականության հետ: Այս հեքիաթը համեմատելով Բեքեթի «Գոդոյին սպասելիս» ստեղծագործության հետ՝ նա շեշտել է, որ «Կիկոսի մահը» ավելի վաղ է գրվել, քան «Գոդոյին սպասելիս» գործը: «Թումանյանի «Կիկոսի մահը» արտադր գրականության մի հրաշալի նմուշ է», - ասել է Լևոն Խեչոյանը:

Խեչոյանի երկերում, հատկապես «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի»-ում, միջին օգտագործումների հուշման շրջանակում նպատակահարմար ենք գտնում հղում անել գրականագետ Վ. Հակոբյանի ձևակերպմանը, մասնավորապես, Խեչոյանի մոտ միջին ու հեքիաթի մուլտիմեդիան մասով: Եթե համարում ենք գրողի «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» վեպն ու «Տան պահապան հրեշտակը» հեքիաթների ժողովածուն, ապա նկատում ենք իրականության «ծայրահեղացում» բառային ու պատկերային մուլտիմեդիան ներսում: Որոշ հեքիաթներում մուլտիմեդիան կրկնվում են այն անունները, որոնք կրում են պատմավեպի հերոսները: «ժամանակակից գրականության բոլոր սեռերին բնորոշ է միջակայն հագեցվածությունը, ինչը, իմ կարծիքով, դարձյալ կապված է ժամանակի անընդհատության զգացողու-

թյան հետ: Ժամանակակից միջին չլինելով նախնական ժամանակներին բնորոշ աշխարհընկալման արտահայտություն, այլ ընդամենը նրա իմիտացիան, այնուամենայնիվ, թե՛ անցյալի, թե՛ ներկայի հավաքական գիտակցության մեջ ունի այն նշանակությունը, որ կապ է հաստատում ժամանակների միջև... Ամբողջովին միջակայնացված է Լ. Խեչոյանի «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» պատմավեպը, այդ նույն շրջանակում պետք է դիտել հեքիաթների նրա մշակումը», - գրում է գրականագետ Ժենյա Քալանթարյանը:

Ի՞նչ է հեքիաթն առհասարակ: Էդ. Ջրբաշյանի բնորոշմամբ՝ հեքիաթներն ունեն ոճի և պատկերավորության որոշ հաստատուն գծեր, որոնցից նա առանձնացնում է սկզբի ու վերջաբանի ուրույն բնույթը: Բացի այդ, վայրն ու ժամանակը հեքիաթում որոշակիացված չեն, ինչն էլ նկարագրությունները դարձնում է սիմվոլիկ: Այս և հարակցվող մյուս պահանջները եական շեղումներ չեն ունեցել թե՛ հայկական և թե՛ եվրոպական գրականության մեջ: Կարևորը նյութի բովանդակային իմաստն է և հեքիաթին բնորոշ ձևով պատմելու ունակությունը, որով հեքիաթը ձեռք է բերում ժամային յուրահատկություն: Պատահական չէ, որ Թումանյանը շեշտում էր «ինչ լեզվով և ինչպես պատմելու» կարողությունը: Այնպես է, որ հեքիաթներ գրում են ոչ բոլորը, բայց հեքիաթագրությունը ժամային մեծաշնորհ չէ. այն գրում են թե՛ արձակագիրները և թե՛ բանաստեղծները:

Այս առումով, եթե անդրադառնանք Լևոն Խեչոյանի հեքիաթագրությանը, ապա կնկատենք նույն մոտեցումները, ինչն ընդունված է առհասարակ դասական հեքիաթում: Գրողը հասցեագրված ասելիք ունի նաև կրտսեր ընթերցողին, թեպետ նրա ստեղծագործություններն ընդհանրապես տարիքային սահմանափակման մեջ չեն գտնվում: Բայց նա գրում է էզոտերիկ հեքիաթներ (բնորոշումն իրենն է՝ Խեչոյանին), այսինքն՝ միայն իրագել ընթերցողի համար: Ինչո՞ւ է հեղինակն այսպիսի բնութագրություն տալիս իր ստեղծագործություններին, մանավանդ որ հեքիաթները, մեծավ մասամբ նախատեսված լինելով կրտսեր տարիքի ընթերցողի համար, ընդհակառակը, պետք է որ էկզոտերիկ(համապարզ մատչելի) լինեն: Պատճառը, մասնավորապես, հետևյալի մեջ ենք տեսնում. Խեչոյանի հեքիաթներում գաղափարական մատնանշումները շեշտված են, շոշափելի է կլանման ուժը՝ անընդհատ զգայական ռեակցիաներ հարուցող: Ասվածն ամբողջովին վերաբերում է Խեչոյանի «Տան պահապան հրեշտակը» գրքի հեքիաթներին: Անդրադառնալով դրանցից մի քանիսին:

Նույնանուն վերնագիրը կրող հեքիաթում արտացոլված է նյութականի ու բարոյականի հակադրությունը, որով հեղինակը փոխադասական իմաստի է բերում սոցիալական վայրկյանները: Տարիներով կուտակված հարստությունը կարող է միանգամից փոշիանալ՝ նվաստացման մատնելով մարդուն: Եվ որպեսզի կարողանալ վերադարձնել կորսված հարստությունը (որն ինչպես բոլոր հեքիաթներում՝ Խե-

չոյանի մոտ մուլտիմեդիան երջանկության առիվատյան է), հարկավոր է գտնել ու ետ բերել տան պահպան հրեշտակին: Այդ հրեշտակը միշտ է ուղեկցում մարդուն, բայց ամենեցին երջանկության պահերին չի տեսնում ու չի գտնում նրա ներկայությունը: Իսկ երբ դժբախտությունը ներխուժում է տուն՝ հրեշտակը հայտնվում է ֆիզիկապես ու անհրաժեշտ պատգամներ է հուշում: Եվ երբեմնի հարուստն սկսում է իր համար աստիճանաբար բացահայտել մինչ այդ անծանոթ ծշարտություններ: Նա դժվարություններ հաղթահարելով՝ իրենց տոհմի պահապան հրեշտակի կացարանը գտնում է Արագած լեռան քարանձավները մեկում: Հրեշտակը հազարավոր տարիներ պահպանել է նրանց տոհմը՝ չարիքներից, բայց այս մի շառավղից խիստ նե-



ղացած է, որովհետև նրանք քանդում-նջնացնում են դարերից ժառանգվածը: Խեչոյանն այս հեքիաթում ևս հանգում է «Խնկի ծառերի» ամփոփ գաղափարաբանությանը՝ ընտանիքը հայրենիքն է, որը չի կարելի քանդել: Իսկ քանդել ըստ հեղինակի՝ նշանակում է «անհավատ լինել, աղքատներին արհամարհել ու ցոփության մունետիկ դառնալ»: Քրիստոնեական այս դավանաբանությամբ հանդերձ, գրողն ընդունելի է համարում ուրիշին (եթե նա ազատ ու խաբեբա է) ոչնչացնելու միջոցով սեփական օջախի երջանկությունը վերադարձնելը: Նա առաջնահերթում է արագամտիկությունը կենսապայքարի իրական արտահայտություններում:

Ինչ-որ տեղ Խեչոյանի մտածողությունը ֆուկյորային տիրույթից դուրս է, երբեմն՝ պատմական ժամանակի մեջ: Այնպես է նաև ներկայացրած աշխարհագրական տարածքը, և դա միջակայն Հայաստանն է տիպական կերպարներով՝ Խոսրով թագավոր, Մարդպետ, Ֆահրադ դյուցազուն, Բամբիշ արքայադուստր և այլն: Իսկ աշխարհագրական տեղանուններն ունեն իրական հասցեներ՝ Մասիս սար, Արագած Լեռ, Կարին քաղաք, Զվարթնոց... Խեչոյանը դասական գրականությունից ուղղակի իմաստով չի ժառանգել պատմողական բանասիրության հնարքները, գրում է իր ստեղծագործական տաղանդի ազատ տարածքում և եթե անգամ շեղվում է հեքիաթին բնորոշ պատմելիքից, ապա միայն ասելիքը շեշտադրելու նպատակով: Այս առումով գրողը հայ հեքիաթագրության մեջ ներմուծում է ամիրականը պատմական ռեալիստի մեջ դիտարկելու նոր երևույթը:

«Խոսրով թագավոր» հեքիաթը միայն արքայի նեմգամտության ու դյուցազնի ազնվարտության մասին չէ: Արդեն իսկ հեքիաթի սկզբը երևակայության մեծ ընդգրկումներ է հավակնում. «ժամանակին աշխարհի վրա ապրում էր Խոսրով թագավորը»: Թագավորն ու Արևելքում իմաստուն գորավարի անուն հանած Ֆահրադը, որը արքայի մտերիմ ընկերն է, յուրօրինակ սիրային եռանկյունի են կազմում Բամբիշի հետ: Բայց «հողագործի գեղեցկուհի» Բամբիշի սերը վայելել կարող է նրանցից մեկը, և Խոսրով թագավորը, խորհրդակցելով Վզրմիր սենեկապետի հետ, փորձության է ուղարկում Ֆահրադին: Վերջինս պետք է Բիտլուն սարը մեկ տարվա ընթացքում ծակեր-անցներ, ինչը ֆիզիկապես հնարավոր չէ, քանզի սարը ավազից էր: Ինչքան էլ դյուցազնը փորում է՝ ավազը դարձյալ լցվում է փորված տեղը: Ֆահրադը, որ կարողացել էր լեռնական վայրի գեղերի առաջ փակել ճորա պահակը (լեռնանցքը), այս դեպքում անգոր է, բայց նա անգոր է ոչ թե թագավորի, այլ «մարդու ունայն ժամանակի հանդեպ»: Նա դյուցազնի արժանապատվությամբ ինքնասպանություն է գործում՝ իր այդ արարքով Բամբիշին մղելով թյուն խմելու: Ֆահրադի պատվին Խոսրով թագավորը եռօրյա սուգ է հայտարարում երկրում՝ հնչեցնելով եկեղեցու զանգերը: Քրիստոնեական այսպիսի լուծումը՝ հատկապես մեռնողներին ողորմի ասելու պատգամով, բնորոշ չէ ավանդական հեքիաթներին: Չարին հաղթում է ոչ թե քաջ դյուցազնը, այլ հենց չար թագավորի բանական խիղճը: Խոսրովը խորապես վշտանում է իր համար թանկ երկու անձանց մահվան կապակցությամբ ու այրուհուն մթագնումի հաճախակի նույնպես մեռնողներին ողորմի ասելու պատգամով:

Ընդհանրապես, «Տան պահապան հրեշտակում» ներառված բոլոր տասնչորս հեքիաթներն էլ անսպասելի լուծումներ ունեն: Ուշագրավ է «Մուրացկանը, հարուստը» հեքիաթը, որի գաղափարական մտքի պարունակը իրավական ցուցիչ ունի, ընդ որում՝ արդարությունը ոչ թե իրավաչափության, այլ տրամաբանական եզրահանգման մեջ ներկայացնելու հրամայականով: Հեղինակը բնավ հետամուտ չէ կամայական լուծումների, նրա հերոսը՝ թագավորը, միանգամայն իմաստուն է դատում: Հեքիաթի սյուժեն այնպես է կառուցված, որ մուլտիմեդիան անհանգիչ պահեր է ենթադրում, բայց խեչոյանը շատ նրբանկատորեն ընթերցողին հուշում է ինտրիգի ուղղությունը: Մեծահարուստ Համբուն (ուշադրություն դարձնենք ինքնին բառի ասոցիացիային՝ Համբուն մեր ընթերցողական պատկերացումներում Թումանյանից մեզ ժառանգված խեղճության խորհրդանիշն է) յուրովի է ուզում պատժել խաբեբա մուրացկանին, մինչդեռ թագավորն առաջնորդվում է երկրի տիրոջը հատուկ ողջախոհությամբ: Նրա համար պարզ է, որ հարուստն իսկապես գողացել է դրամները, բայց միևնույն ժամանակ «Համբուն հարգված մեծահարուստ է»: Խեչոյանն այս իրողությունը չի վերածում ռեալիստական պարզունակության, նրա կերտած թագավորն իրոք արդարամիտ



է. «Թե որ քո դրամները քեզ կուլ չեն գնում, - ասում է թագավորը, - գոնե մտածե՛ք էս, թե ինչից կլինի, կամ էլ քո ինչի՞ն է պետք, եթե չեն գործածվելու: Թող նա գործածի, ով բարիք կանի: Դու գնա, մուրացկան, գնա քո ողորմությանն սպասիր, այդ դրամները այս մարդը ճիշտ կօգտագործի»: Դա իրավունքի դիտավորյալ խախտումն է, այլ մուլտիմեդիական հակառակը՝ օգնում է սոցիումի խնդրին հոգեբանական ճիշտ մեկնություն տալու:

Արդարադատության խնդրին Խեչոյանը միանգամայն այլ տեսանկյունով է մոտենում «Դատավորը» հեքիաթում: Այս հերոսին նախ ներկայացնելով ճոխության մեջ՝ Խեչոյանն այնուհետև նրան պատկերում է աղքատացած՝ այդ հանգամանքի թելադրանքով էլ նրան ուղարկելով փորձություններ: Դատավորը չի կարողանում անցնել այդ փորձություններն իր ազատության պատճառով, ուստի պատժվում է: Առաջինը հացի փորձությունն էր, որտեղ ընդգծվում է Ֆեմիդայի հետևողի անարդարացի էությունը: Նա թաքուն ուտում է իրենց մթերքի պաշարը կազմող երեք հացերից մեկը: Օգնականը գիտի այդ մասին ու ամեն անգամ նրան ծանր վիճակից հանելով, հարցնում է թաքուն կերած հացի մասին՝ ստանալով բացասական պատասխան: Թագավորի որդուն բուժելու շնորհիվ, որը բացառապես օգնականի շնորհքն էր, նրանք մի խուրձին ոսկի են ստանում թագավորից, որոնք դատավորը վտանգում է անառակացնելու: Երբ Բագրատ գորավարի տղային բուժել չկարողանալու համար թուր նրա վիզն են գցում, նա դարձյալ չի ուզում խոստովանել, որ ինքն է կերել հացը: Իսկ ասիա ոսկու փորձությունը ամբողջությամբ բացահայտում է դատավորի ստոր էությունը: Դատավորի ամենակարող օգնականը, որը փաստացի երկնքից իջած հրեշտակ էր, ոսկին երեք մասի է բաժանում՝ երրորդ մասը «էն հացն ուտողին» բաժին հանելով: Դատավորը, ցանկանալով ավելի շատ ոսկու տիրանալ, խոստովանում է, որ ինքն է կերել հացը, և ոսկին իսկույն հող է դառնում: Խեչոյանական «իրավունքի տեսությունն» այս դեպքում խարսխվում է ոչ թե անձին ֆիզիկապես պատժելու, այլ նրա գոյության կենսամթերքը ոչնչացնելու պահանջի վրա, որն ավելի ցավոտ հետևանքներ ունի:

Միշտ չէ, սակայն, որ իրավունքի չարաշահումը հարուցում է արդար պատիժ: Այս համոզումները մասնավորաբար շարադրված է «Հարևանի սև կատուն» հեքիաթում, ընդ որում՝



ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

անարդարությունն այստեղ նույնիսկ անպատիժ է մնում: Գլխավոր հերոսը հարևանի սև կատուն է, որը մշտապես տագնապի մեջ է պահում բաղնեպանին ու նրա կնոջը: Ամեն գիշեր անկողին մտնելիս անուսինները Աստծուն աղոթում ու հարևանի կատվին խաղաղություն են աղերսում, սակայն՝ անօգուտ: Այլևս չկարողանալով դիմանալ այդ մղձավանջին, մի օր էլ նրանք կատվին տախտակի վրա կապելով՝ տանում ծովն են նետում: Ծովի ալիքները կատվին քշում են արքունի ամառանոցի ափ, ուր նրան նկատում է ծանր մտքերից տանջվող թագավորը: Գահակալը, կատվի մեջ խորհրդավոր ուժ տեսնելով, որը կարող է օգնել լուծելու երկրի դժվար խնդիրները, մռառնին հայտարարում է «հրամանատար ու զորավար», որին ձեռք տալու իրավունք ոչ ոք չունի: Նրան պատվում են ամենալավ բաներով, շքեղատուն փրկագործով: Կատվի լիարժեք անվտանգության նպատակով շներին արգելում են փողոց դուրս գալ: Բայց կատուն ծանծրանալով այդ ամենից՝ մի օր ետ վերադառնում է տիրոջ բակը: Ու վերակալում են բաղնեպանի և նրա կնոջ տառապանքները: Անպատժելիությունից լիտիացած կատուն դառնում է անուսինների հոգեառը: Մարդ-կենդանի հակադրությունն այս հեքիաթում ոչ թե սոցիալական, այլ հոգեբանական հենք ունի, և ներքին բախումները տեղի են ունենում հերոսների անհատական նպատակադրություններում: Թագավորն անճարակ է երկրի կառավարման գործերում, ուստի ապավինում է «խորհրդավոր ուժերին»: Եվ հենց այս անճարակությունից են արտածվում բոլոր անարդարությունները, որից տուժում են նաև բաղնեպանն ու նրա կինը:

**«Արվեստն ու դրամատիկ թաղանթը»** հեքիաթը որոշ առումով աստվածաշնչյան հենք ունի: «Ամեն ինչ ճիշտ մեկնեցիր, եղբայր, գայլի անունն է դուրս եկել, բայց աղվեսի գեղեցիկ խոսքերն են աշխարհ կործանում: Մի ժամանակ էլ ասին, թե գայլն է խորհրդի ճշմարիտ կերպը, բայց իրականում, ամբողջ աշխարհն էլ գիտե՛ եղբայրները ճշմարիտն օձից: Մարդ քարավանատիրոջը, բայց մահը վերագրեցին գայլի գիշատչությանը»: Գայլն այնքան է մարդեղենացած, որ թեպետ մեզախոս չէ, սակայն ուժասպառվելուց՝ քթի մեջ է խոսում: Բացի այդ, գայլը «նահապետական ծագում» ունի. նրա նախապապը միանգամից երկու եղնիկ էր բռնում, որից մեկն անմիջապես ուտում էր, մյուսը բերում տուն: Վայրի կենդանիների կենցաղավարությանը, մանավանդ արուի պարագայում, խորթ այս երեւույթը խեղդանի գրչի տակ մոր իմաստ է ձեռք բերում: Նրա հեքիաթի մյուս հերոսը՝ աղվեսը, «մեծ ուսման տեր է», նույնիսկ բանաս-

տեղծություններ է գրում, գրքեր հրատարակում և, այդուհանդերձ, դժգոհ է իր սոցիալական վիճակից, ուստի որոշում է գնալ բախտ որոնելու: Ամիրականության այսպիսի սյուժեավորումը չի տանում մերկ բարոյախոսության: Աղվեսը և ներկայացված է մահկանացուների դասի մեջ, և կյանքի ծանր հարվածները նրան այն համոզումներն են հանգեցրել, որ մահվան դեմ պետք է մահով ծանապարհ բացել: Այսպիսի ըմբոստությունը որոշ առումով քամոտական է, քանզի Քամյուն «կարելին» ու «անկարելին» դիտարկում էր համարժեքության մեջ: «Ըմբոստության մղումից, որքան էլ անորոշ, ծնվում է գիտակցությունը», - գտնում էր Ա. Քամյուն:

Խեղդանի հեքիաթի այս հերոսն աշխարհում երեք ակոսալու բան է տեսնում՝ երբ կուրի առաջ լույս են բռնում, արևի դեմ ծրագվառում է գիտունին ապրեցնում անգետի հետ: Բայց աղվեսի կենսակերպի յուրահատկությունն, այդուհանդերձ, խաբեությունն է, որի միջոցով էլ նա պատժում է գայլին: Թագավորի մեջ հայտնված աղվեսը «լացում է» գայլի համար, որովհետև վատա է, որ աշխարհում ամենքը, այդ թվում ինքն էլ, դատապարտված են երբևէ թակարդում հայտնվելու ճակատագրին: Այս հեքիաթում սոցիալական ապրիան (անելանելի վիճակ) կառուցված է ներհակությունների վրա՝ մի կողմից ներկայացվում է ոչ բանական հանրության փոխդեմքացման բնագոյը, մյուս կողմից՝ այդ հանրության անճարակությունը գոյության պայքարում, ինչը շատ բաներով հիշեցնում է մարդկային հասարակությունն իր փոխմերժելի դրսևորումներով:

Թվերը Լևոն Խեղդանի մոտ քրիստոնեական խորհուրդ ունեն: Դա առկա է ինչպես հեքիաթներում, այնպես էլ նրա «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» պատմավեպում: «Այդ ժամանակ էր, որ Դրաստամատը հաշվարկեց ու առաջին անգամ տեսավ Արեգակի, Լուսնի և Արշակ արքայի եռյակ աններդաշնակությունը... Լուսնի քսանութերորդ աստիճանում հասել էր բարձրագույնությանը՝ երկնքի երրորդ տանն էր»: Կամ՝ «Արշակ արքան երեքօրյա ապաշխարհանքն է անցկացրել, երեքօրյա սուգից հետո Անդոկի հետ առանձնացել է ու նրան կարգել հարավային գործերի հրամանատար»: Այնուհետև՝ «Երբ երրորդ օրը քարկոծության գուրի մեջ նետված գալարների տակ տնքոցներով հանգավ Մրջյունիկ երեցը, նրա մարմինը տարան հուղարկավորելու Ցուլ լեռան դիմաց»: Նույնը՝ «Երրորդ գիշերը աշխարհագրայինները աշտարակի վրա դարձյալ խմում ու երգում էին»: Երեքի խորհուրդն ենք տեսնում նաև «Տան պահապան հրեշտակի» տարբեր հեքիաթներում:

Այսպես. «Երեք օր հետո ընկնավորությունից ուշքը գլուխը եկավ, դարձյալ քառասուն օր աղաչանք էր անում և ծունկ չոքում»: Կամ՝ «Ձոռիքս իջավ ձիուց, կանաչ ծուղը հանեց ծոցից, երեք անգամ խփեց քարափին ու երեք անգամ ասաց...»: Երեք, յոթ և քառասուն թվերը քրիստոնեական խորհրդանիշներ են, որոնք հեղինակը հաջողությամբ տեղադրում է գեղարվեստական հղացքի մեջ:


Խեղդանի եզրահանգումները միաժամանակ բարոյախոսական են: «Ամերևույթ վիշապը» հեքիաթն, օրինակ, պատգամում է այն մասին, թե ինչպես պիտի կառավարել երկիրը: Երիտասարդ թագավորը, չանալով արքունի խորհրդականների հորդորներին, երկրից արտաքսում է բոլոր գիտնականներին ու ծերերին, իսկ լավագույն մասնագետներին սպանել է տալիս: Երկրում ծայր են առնում կաշառակերությունն ու անկառավարելիությունը: Օգտվելով այդ քառասյի վիճակից՝ վիշապը մտնում է քաղաք՝ սարսափի մատնելով բնակչությանը: Սակայն Յովան անունով հարբեցող ազնվականը չի վախենում վիշապից: Նրա հորն էլ, իբր գեղծարարության համար, թագավորը վտարել էր քաղաքից, բայց Յովանը խախտելով արքայի հրամանը՝ հորը թաքցրել էր քաղաքից դուրս գտնվող իր առանձնատանը: Դրանով շնորհիվ այս ժամանակ տղան հորը պատմում է քաղաքում տիրող վիճակի մասին, և հայրը նրան սովորեցնում է վիշապի դեմ պայքարելու ձևը: Իմաստուն ծերունու խորհրդով Յովանը մի մեծ հայելի է տեղադրում արքունի հրապարակում, ու երբ կեսօրին թագավորը փրկագործի հետ դուրս է գալիս տեսնելու, թե ինչպես է վիշապը սպանում հարբեցող ազնվականին, հայելին դեմ է անում նրան: Իր իսկ արտացոլանքից ահաբեկված թագավորը փախչում է, ընկնում ծորն ու մեռնում: Իսկական վիշապից ազատված քաղաքը ցնծում է և ծեր իմաստունին օծում թագավոր: Դիմ իմաստության խորք ունի հեքիաթի պատգամը, համաձայն որի՝ այն երկրում, որտեղ չեն հարգվում գիտնականն ու իմաստունը, որտեղ ունատակ է տրվում օրենքը և անիմաստ վատնվում է ժողովրդի ստեղծած բարիքը, այնտեղ մուտք է գործում վիշապը և կոլ տալիս բոլորին:

Բարոյախոսական է նաև «Աքաք թագավոր» հեքիաթը: Աքաք թագավորն ուզում է ամուսնանալ արքեպիսկոպոսի դստեր հետ, բայց վերջինս պայման է դնում՝ մինչև վերջինս հավքերի ոսկորներով պալատ չկառուցի, ինքը նրան աղջիկ չի տա: Աքաք թագավորն իր մոտ է հրավիրում թռչունների արքա Ջմրուխտի Անդային ու պատմում Արդյու Ազգի պայմանի մասին: Եվ Ջմրուխտի Անդան նրան պատմում է աշտարակի պատմու-

թյունը, որի գմբեթը սկզբում եղել է ոսկուց, ժամանակի ընթացքում վերածվել է արծաթի, իսկ վերջում դարձել է չուզուն: Եվ նա հարց է ուղղում Աքաք թագավորին. «Ես հիմա քեզ ասում եմ, որ ոսկին արծաթ եղավ, արծաթը չուզուն դարձավ, քո ցանկացածն արդյոք չատ չէ՞. այսքան կենդանի արարածներ պիտի ոչնչացնես մի աղջկա և քո գոռոզության պատճառով»: Աքաք թագավորը խորհում է նրա ասածների վրա ու հրաժարվում իր մտադրությունից: Չարի ու բարու պայքարի պաշտպան դիտվածքի բացակայությունն այս հեքիաթում փիլիսոփայական մոր ընդհանրացումների է բերում, որոնք հեքիաթի ընկալումը հանգեցնում են հորինումներից դուրս՝ իրականում ավելի մոտ գտնվող վիճակի: Այս դեպքում հեքիաթին անհրաժեշտ որոշ տարրեր կարծես նույնիսկ ավելորդ են դառնում, երկրորդ պլան է մղվում ժողովրդական պատմություններն յուրահատուկ տարածակառուցումը: Առդիր ոչինչ չի ասվում, ամեն բան ունի իր ստույգ մշակակությունը և տեղը:

Եթե դասական հեքիաթներում դիտման անկյունը հաճախ ազատ է ընթերցողի համար, և ընթերցողը հնարավորություն ունի հետազոտել իրադարձությունների կանխատեսումներ անել, ապա Խեղդանի «ընթերցողական անկյունը» մշտապես զբաղեցրած է պահում մոր անանկալներով: Գրողի մտածողության դաշտը հեքիաթի պարագայում իրականում անհրաժեշտ գույառի վրա է: Այս ձևն առավելապես վիպական է և բխում է հեղինակի հակվածությունից դեպի մյուսի պատմականությունը: Դրանով է թերևս պայմանավորված այն հանգամանքը, որ նրա հեքիաթներում հաճախակի են հիշատակվում պատմական դեմքերի ու վայրերի անունները: Միաժամանակ կա բառապատկերային, լեզվամտածողական մեծություն նրա «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» պատմավեպի հետ. «Լուսինը եղջյուրները թեքեց դեպի հարավ, սարսափելի հարավային տաք հողմեր փչեցին, ու խորշակը խփեց՝ մարդաթափ եղավ և էշի մեկ զլխի գինը հռոմեական քսան սեստերցիուսի հասավ, դաշտային մկները իրենց տեղերից վեր կացան քաղաքներն ու գյուղերը լցվեցին, ու մի մող ցորենի արժեքը հարյուր դրամ ոսկի դարձավ»: Չեքիաթագրության մեջ վերոնշյալ նորամուծությունները միջին ու հեքիաթը գեղագիտական զուգահեռի վրա են պահում՝ վերահաստատելով Լևոն Խեղդանի տաղանդի անսահմանությունը և, անշուշտ, պարարտ հող ստեղծելով հետագա գրականագիտական ուսումնասիրությունների համար:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՌՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԵԿ ԳՐՔԻ ՄԵՋ



Ամերիկահայ գրող, հրապարակախոս, գրահրատարակիչ, մատենագետ, թարգմանիչ, մանկավարժ և մատենագետ, Արցախի նվիրյալ բարեկամ Յովսեփ Նալբանդյանը մեզ է ուղարկել իր հեղինակած «Միջազգային

պատմություն» մեծածավալ (720 էջ) գիրքը, որը տպագրվել է Երևանի «Էդիթ Պրինտ» հրատարակչության տպագրատանը: Առերևույթ հավանոր թվացող գիրքը հարուստ տվյալներ է պարունակում արդի միջազգային պատմության մասին, որոնք հեղինակը քաղել է բազմաթիվ տեղական և օտարալեզու աղբյուրներից:

Ժամանակագրությունը, որը հեղինակը ներառել է իր աշխատության մեջ, բավականին ընդգրկում է՝ 1789-2015թթ., իսկ աշխարհագրական տարածքն ընդգրկում է բոլոր աշխարհամասերը՝ յուրաքանչյուրի ազգային-պետական կազմավորումների մասին իրադարձային կարևոր հուշումներով: Հատկանշական է, որ այդ մեծ աշխարհագրության մեջ ուրույն տեղ ունի հայոց պատմությունը, որի նորոգյա էջերում առանձին տեղ է հատկացված Արցախյան շարժմանն ու Արցախի Հանրապետության պետականակերտման գործընթացին առհասարակ:

Ներկայացված փաստերն ու տվյալները հակիրճ են՝ բնութագրական թվանշումներով

ու անվանումներով: Գրքի յուրահատկությունն էլ ենցն դա է. նկատի առնելով, որ առկա հսկայածավալ նյութերը դժվար է ամփոփել մի հատորի մեջ, Գ. Նալբանդյանը ձգտել է բոլոր անդրադարձներին ընդհանրական համառոտ բնույթ տալ՝ պահպանելով ժամանակային ու տարածական կապը: Այս առնչությամբ հեղինակն առաջաբանում գրում է, որ իր աշխատանքն ամբողջական չէ, և եթե քաղաքական, մշակութային, տնտեսական տվյալներն ավելի մանրամասներ, դրանք կկազմեն մի քանի հատոր: Այսինքն՝ հեղինակն իր գրքում առաջնակարգել է ոչ թե տարաշերտ մանրամասնությունները, այլ տվյալների ճշտությունը, որոնք նա ներկայացրել է հնարավոր ջանասիրությամբ:

Անշուշտ, պատմագիտությունը միշտ էլ մոր խորքեր բացելու հնարավորություն թողնում է, և այս առումով Յովսեփ Նալբանդյանի աշխատանքը չի կարելի ավարտուն համարել: Հեղինակը պատմաբան չէ, այլ հետազոտող, որի նպատակը տվյալ դեպքում վերջին երկդարյա միջազգային պատմությունը համառո-

տագրելն է, ինչը դրվատելի գործ է:

Եթե աշխատանքը գնահատելու լինենք օգտագործած աղբյուրների ցանկով, ապա կարող ենք ասել, որ աղբյուրագիտական հրատարակությունները, որոնցից օգտվել է Գ. Նալբանդյանը, միանշանակ արժանահավատ են վավերանյութի գիտական արժեքով, և հեղինակը կարողացել է դրանք հմտորեն համակարգել նույն իմաստաբանական ու տեքստային կառուցվածքում:

Հարկ է այս գրքի համապատկերին միաժամանակ շեշտել, որ հեռավոր Ամերիկայում բնակվող մեր հայրենակցի՝ 2005թ. հիմնադրած «Հովսեփի և Կարոլին Նալբանդյանի մատենաշարը» մինչև այսօր հրատարակել է 60 հատոր գիրք որոնց թվում ոչ միայն իր հեղինակած գրքերն են, այլև արդի հայ գրողների ստեղծագործությունների ամփոփ ժողովածուներ: Սա էլ, անշուշտ, հայրենասիրության դրսևորման ձև է, որը նույնպես դրվատանքի է արժանի:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՍՏԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՃՈՒՂ-ՎԱՃԱՐԵ

«24.05.2022թ. աճուրդը չի կայացել հայտ ներկայացված չլինելու պատճառով: «Սնանկության մասին» ԱՀ օրենքի 89-րդ հոդվածի համաձայն 2022թ. հունիսի 21-ին ժամը 12:00-ին «Մայակ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանի կողմից ԱՀ ԸԻ առաջին ատյանի դատարանի՝ ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42 հասցեում հայտարարվում է դասական եղանակով աճուրդ վաճառք՝ հետևյալ լոտերով:

**Լոտ1՝** Կաթսայատուն (փաստացի հացի արտադրամաս): Սեփականության վկայականի համարը՝ 115352: Սեփականատեր՝ Էդգար Լավրենտի Միրզոյան: Գրավարված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի նկարագրությունը՝ շենքի մակերեսը 166,16 ք.մ է, հողամասի մակերեսը՝ 307,0 ք.մ: Վիճակը՝ նորմալ: Հասցե՝ ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների փ., ք.10: Մեկնարկային գինը՝ 14.950.400 ՀՀ դրամ:

**Լոտ2՝** Գրասենյակ: Սեփականության վկայականի համարը՝ 081575: Սեփականատեր՝ Արզամ Լավրենտի Միրզոյան: Գրավարված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի նկարագրությունը՝ շենքի մակերեսը 11,89 ք.մ է: Վիճակը՝ միջին: Հասցե՝ ԱՀ ք. Ստեփանակերտ, Ա.Մանուկյանի փ., ք.10: Մեկնարկային գինը՝ 737.280 ՀՀ դրամ:

**Լոտ3՝** Հողամաս: Սեփականության վկայականի համարը՝ 094690: Սեփականատեր՝ Ար-

զամ Լավրենտի Միրզոյան: Գրավարված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի նկարագրությունը՝ հողամասի մակերեսը կազմում է 1410,0 ք.մ: Վիճակը՝ լավ: Հասցե՝ ԱՀ ք. Ստեփանակերտ, Ստարովոյտովա փ.: Մեկնարկային գինը 7.045.120 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ՖԱ դեպքում անձնագրի պատճենը, իսկ ԻՎ դեպքում՝ պետ. գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության նախաձեռնարկ վճարումը հավաստող փաստաթղթերը: Նախաձեռնարկ կազմում է մեկնարկային գնի 5 տոկոսը, որը փոխանցվում է սնանկության հատուկ հաշվին՝ «Արցախբանկ» ՓԲԸ «Տիգրանակերտ» մ/դ հ/հ 22301050288600:

Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդին նախորդող 5 օրվա ընթացքում, ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա ժամը 16.00, կարող են հայտ ներկայացնել ԱՀ ԸՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գնորդը կրելու է գույքի ձևակերպման, գրանցման և գույքահարկի պարտքերի վճարման պարտավորությունները: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանին հեռ.097-22-29-22 կամ 093-89-22-79»:

Աճուրդին մասնակցել ցանկացողները և աճուրդի մասնակից չհամարվող անձինք մինչև 19.06.2022թ. ներառյալ կարող են աճուրդի մասնակցության հայտ ներկայացնել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42 հասցեով:

Աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը, և այդ գինը համարվում է լոտի վաճառքի գին: Լոտի վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը և տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված: Աճուրդի հաղթողի կողմից արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու կամ արձանագրությունը ցանկացած այլ պատճառով չստորագրվելու դեպքում աճուրդի համարվում է չկայացած: Արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու կամ արձանագրությունը ցանկացած այլ պատճառով չստորագրվելու դեպքում նախավճարը հետ չի վերադարձվում:

Աճուրդում հաղթող մասնակիցը պարտավորվում է աճուրդի արձանագրությունը ստորագրելուց հետո 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել գույքի արժեքը՝ մվազեցնելով վճարած աճուրդի նախավճարի չափը: Հաղթող մասնակցի կողմից աճուրդի արձանագրությունը չստորագրելու կամ 10 օրվա ընթացքում ամբողջությամբ գույքի արժեքը չվճարելու դեպքում որպես նախավճար մուծված գումարը չի վերադարձվում:

Եթե համապատասխան հայտ ներկայացրած անձը աճուրդին չի մասնակցում կամ մասնակցում է, սակայն չի հաղթում, ապա նրա կողմից վճարված նախավճարը ենթակա է վերադարձման:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար սնանկության հատուկ հաշվին նախօրոք մուծվում է պատճենահանման ծախս՝ 100 ՀՀ դրամ կամ 093892279 համարին կարճ հաղորդագրությամբ ուղարկվում է էլեկտրոնային փոստի հասցեն, որի վրա սնանկության գործով կառավարիչը ուղարկում է աճուրդի կանոնակարգը:

Վաճառվող գույքի մասին մանրամասն տեղեկություններ ստանալու, ուսումնասիրության և աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել «Մայակ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանին 093 892279 հեռախոսահամարով:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

ՅՈՒՅԱԿ

ՇՈՒՇԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԻՊԼՈՄԸ ԿՈՐՋՐԱԾ ՇՐջԱՆՎԱՐՏՆԵՐԻ

ԳԳ	Շրջանակարգի անուն, ազգանուն, հայրանուն	Կորցրած դիպլոմի համարը	Մասնագիտությունը	ԳԱ	Ավարտման թիվը
1	Հայրիյան Սաշա Մարտիկի	AK 073487	Գյուղատնտեսության մեքենայացում	սովորական	2009
2	Ավանեսյան Բորիս Միքայելի	AK 102101	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում /ավտոտրանսպորտում/	սովորական	2012
3	Ավագիմյան Վարդան Վալերիի	AK 102094	Գյուղատնտեսագիտություն	սովորական	2012
4	Մայիլյան Մավրիկ Վասիլիի	AK120610	Գյուղատնտեսության մեքենայացում	սովորական	2014
5	Դադայան Մասիս Արարատի	AK 129371	Գյուղատնտեսագիտություն	սովորական	2015
6	Հակոբջանյան Գեղամ Սամվելի	AK 131680	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ և աուդիտ /Ազրոպարենային համալիրում/	սովորական	2015
7	Սարգսյան Արա Արծվիկի	AK 129525	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ և աուդիտ /Ազրոպարենային համալիրում/	սովորական	2015
8	Առաքելյան Իգոր Արամայիսի	AK 143388	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում /ավտոտրանսպորտում/	սովորական	2017
9	Գևորգյան Էրիկ Վաչագանի	AK 143183	Հողերի բարելավում, հողավերականգնում և պահպանում	սովորական	2017
10	Գրիգորյան Թաթուլ Արմենի	AK 138625	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում /ավտոտրանսպորտում/	սովորական	2017
11	Աթայան Սամվել Շուրայի	AK155930	Հողաշինարարություն	սովորական	2018
12	Հակոբյան Հարություն Աշոտի	AK 168873	Էկոնոմիկա, հաշվ.հաշվ և աուդիտ	սովորական	2019
<b>Բակալավրիատ</b>					
1	Ծատուրյան Գուրգեն Յուրիի	AB 135313	Ազրոնոմիա	սովորական	2012
2	Յախչիյան Արթուր Արսենի	AB 182235	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն	սովորական	2015
3	Դադայան Արզամ Արարատի	AB 205848	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն	սովորական	2016
<b>Մագիստրատուրա</b>					
1	Մարդիյան Լորայր Ջորիկի	AM 063623	Անասնաբուժություն	սովորական	2017
2	Գևորգյան Հասմիկ Վաչագանի	AM065376	Ազրոբիզնես	սովորական	2018

ԿՈՐԵԼ Է

Հանվետ Վալենտինի Հայրապետյանի (ծնված 28.07.1986թ., Հաղորթ քաղաքում, անձնագիր՝ AR0246720), Հաղորթի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ թշնամու կողմից օկուպացված թշնամու կողմից (Ստեփանակերտ, 2002-2003 ուսումնական տարում տրված ԱՄՆ 201495 համարով ատեստատը (մնացել է ֆունկցիոնալ օկուպացված թշնամու կողմից): Մտեփանակերտի ք. Իվանյանի անվան ռազմանարզական վարժարանի կողմից 2013-2014 ԱՄՆ 085944 ատեստատը՝ տրված ուստարում: Մտեփանակերտի ք. Իվանյանի անվան ռազմանարզական համարել անվավեր:

<b>ՀԱՅԱՍՏԱՆ</b> ԽՄԲԱԳԻՐ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ	Մտեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info	Մեքերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:	Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության 31.05.2022թ.:
--------------------------------------------	--------------------------------	----------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: